



# Ուսուցանել Փրկչի ձևով

Ավետարանի յուրաքանչյուր ուսուցչի, յուրաքանչյուր ծնողի, պաշտոնապես կանչված ուսուցչի, տնային և այցելող ուսուցչի, ինչպես նաև յուրաքանչյուր Քրիստոսի հետևորդի նպատակն է՝ սովորեցնել ավետարանի մաքուր վարդապետությունը Հոգով, օգնելով Աստծո զավակներին կառուցել իրենց հավատքն առ Փրկիչը և ավելի նմանվել Նրան:



# Ուսուցանել Փրկչի ձևով

Հրատարակված է  
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի  
Սուրբ Լեյք Սիթի, Յուտա

© 2016 by Intellectual Reserve, Inc.  
Բոլոր իրավունքները վերապահված են:  
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Անգլերենի հաստատումը. 10/15  
Թարգմանության հաստատումը. 10/15  
*Teaching in the Savior's Way*-ի թարգմանությունը:  
Armenian  
13301 201

# Բովանդակություն

---

## Նախաբան

Նախաբան . . . . .	2
Ուսուցիչների խորհրդի ժողովներ . . . . .	3
Ուսուցանելի Փրկչի ձևով . . . . .	4

## Մաս 1. Միրեք նրանց, ում ուսուցանում եք

Միրեք նրանց, ում ուսուցանում եք . . . . .	6
Կենտրոնացեք մարդկանց, ոչ թե դասերի վրա . . . . .	7
Կապ պաշտպանեք նրանց հետ, ովքեր չեն հաճախում . . . . .	8

## Մաս 2. Ուսուցանեք Հոգով

Ուսուցանեք Հոգով . . . . .	10
Պատրաստվեք հոգեպես . . . . .	12
Սպրեք Հիսուս Քրիստոսի ավետարանով . . . . .	13
Ստեղծեք Հոգին հրավիրող մթնոլորտ . . . . .	15
Օգտվեք ինքնաբերական ուսուցողական պահերից . . . . .	16
Ծրագիր կազմեք . . . . .	17

## Մաս 3. Ուսուցանեք վարդապետությունը

Ուսուցանեք վարդապետությունը . . . . .	20
Վարդապետությունն ուսուցանելու համար օգտագործեք երաժշտություն, պատմություններ և նկարներ . . . . .	22
Հավատքով արձագանքեք դժվարին հարցերին . . . . .	23
Ուսուցանեք երեխաներին . . . . .	25
Ուսուցանեք երիտասարդներին . . . . .	27

## Մաս 4. Նպաստեք ջանասիրաբար սովորելուն

Ջանասիրաբար սովորելու կոչ արեք . . . . .	29
Տվեք ոգեշնչող հարցեր . . . . .	31
Վարեք ոգեշնչող քննարկումներ . . . . .	33
Հրավիրեք սովորողներին գործել . . . . .	35
Աջակցեք տանը ավետարանն ուսումնասիրելուն . . . . .	36

## Հավելված

Առաջադիմելի որպես քրիստոսանման ուսուցիչ. Անձնական գնահատում . . . . .	37
Կողմնորոշել նոր ուսուցիչներին. Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների պարտականությունը . . . . .	38

## Նախաբան

Այս աղբյուրում նկարագրված սկզբունքները կարող են օգնել յուրաքանչյուր ավետարանի ուսուցչի ուսուցանել Փրկչի ձևով: Այս աղբյուրը նախատեսված է հասկապես նրանց համար, ում եկեղեցու կոչումները հնարավորություն են տալիս ուսուցանել՝ ներառյալ Երեխաների Միության, Կիրակնօրյա Դպրոցի, Սփոփող Միության, Սհարոնյան և Մելքիսեդեկյան քահանայության քվորումների, ինչպես նաև քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին: Այստեղ նկարագրված սկզբունքները կարող են օգնել

նաև ծնողներին, ուսուցիչներին և օժանդակ կազմակերպությունների ղեկավարներին, երբ նրանք ուսուցանում են իրենց ընտանիքներին:

Ուսուցիչները կարող են ուսումնասիրել այս աղբյուրն ինքնուրույն, որպեսզի իմանան, թե ինչպես ավելի արդյունավետ ուսուցանեն Փրկչի ձևով: Նրանք նաև կարող են օգտագործել այս աղբյուրն ընտանեկան երեկոների քննարկումները վարելու համար, նախագահության ժողովների, ծխի կամ ցցի խորհրդի ժողովների և ուսուցիչների խորհրդի ամենամսյա ժողովների համար:

Ուսուցիչների խորհրդի ժողովները նկարագրված են «Ուսուցիչների խորհրդի ժողովներ» բաժնում: Ծխի խորհուրդը վերահսկում է այս ժողովները, Կիրակնօրյա Դպրոցի նախագահության աջակցությամբ: Ժողովները սովորաբար վարում է Կիրակնօրյա Դպրոցի նախագահության անդամը: Այս աղբյուրում եղած նյութը պետք է օգտագործվի որպես հիմք՝ ուսուցիչների խորհրդի ժողովներին:

*Նշում.* Այս աղբյուրում ծխի և ցցի հղումները կիրառելի են նաև ճյուղերի, շրջանների և միսիաների համար:



## Ուսուցիչների խորհրդի ժողովներ

Յուրաքանչյուր ծուխ պետք է անցկացնի ուսուցիչների խորհրդի ամսական ժողովներ, որոնց ժամանակ ուսուցիչները կարող են միասին խորհրդակցել քրիստոսանման դասավանդման սկզբունքների մասին:

### ԵՐԲ ՊԵՏՔ Է ԱՆՑԿԱՑԿԵՆ ԱՅՂԺՈՂՎՆԵՐԸ:

Ուսուցիչների խորհրդի ժողովները սովորաբար պետք է տեղի ունենան կիրակնօրյա ժողովների երեք-ժամյա ծրագրի շրջանակներում:

■ Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչները հանդիպում են քահանայության քվորումի, Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց ժողովների ժամանակ:

■ Քահանայության քվորումի, Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց ուսուցիչները հանդիպում են Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ:

■ Երեխաների Միության ուսուցիչները հաճախում են վերոնշյալ ժողովներից ցանկացածը, ըստ Երեխաների Միության նախագահի ցուցումի: (Նշում. Անհրաժեշտության դեպքում, Երեխաների Միության նախագահությունը հանձնարարում է փոխարինել ուսուցիչներին, միացնում դասարանները, կամ այլ միջոցներ ձեռնարկում, հնարավորություն ստեղծելով Երեխաների Միության ուսուցիչների համար մասնակցելու ուսուցիչների խորհրդի ժողովներին:)

### Ո՞Վ ՊԵՏՔ Է ՄԱՍՆԱԿՑԻ:

Յուրաքանչյուրն, ով ուսուցիչ է ծխի քվորումում կամ դասարանում, պետք է մասնակցի, քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների ղեկավարներից առնվազն մեկի հետ, ով պատասխանատու է այդ ուսուցիչների համար: Անհրաժեշտության դեպքում մասնակիցները կարող են բաժանվել խմբերի, հաշվի առնելով նրանց կարիքները, ում ուսուցանում են: Օրինակ, երեխաների և երիտասարդների ուսուցիչները կարող են երբեմն օգուտ քաղել առանձին ժողովից, որի ժամանակ կքննարկեն խնդիրները, որոնք վերաբերում են երիտասարդների կամ երեխաների ուսուցանմանը:

### Ո՞Վ Է ՎԱՐՈՒՄ ԱՅՂԺՈՂՎՆԵՐԸ:

Ծխի խորհուրդը Կիրակնօրյա Դպրոցի նախագահության օգնությամբ վերահսկում է ուսուցիչների խորհրդի ժողովները: Շատ դեպքերում Կիրակնօրյա Դպրոցի նախագահության անդամը ժողովներին հանդես է գալիս որպես քննարկման վարող, երբեմն ծխի մյուս անդամներին կարող է հանձնարարվել վարել ժողովները:

### ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԸՆԹԱՆԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ:

(Նշում. Այս հրահանգները քննարկումները վարողների համար են:)  
Բացման աղոթքից հետո ուսուցիչների խորհրդի ժողովը պետք է ընթանա հետևյալ ձևաչափով.

■ *Կիսվեք և խորհուրդ աղերք միասին:* Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով, ուսուցման առնչվող հարցեր տվեք և կիսվեք գաղափարներով, թե ինչպես հաղթահարել դժվարությունները: Ժողովի այս մասը պետք է ներառի նախորդ ժողովներին քննարկված սկզբունքների վերանայում:

■ *Սովորեք միասին:* Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս գրքում ներկայացված սկզբունքներից մեկը:

Սկզբունքներին կարելի է անդրադառնալ ցանկացած հերթականությամբ, և եթե այլ բան ծխի խորհրդի կողմից չի հանձնարարված, ժողովի մասնակիցները կարող են ընտրել, թե որ սկզբունքը քննարկվի: Անպայման չէ, որ ուսուցիչների խորհրդի մեկ ժողովի ժամանակ շոշափվեն սկզբունքի բոլոր մանրամասները. դուք կարող եք մեկ սկզբունքին մեկից ավել ժողովներում անդրադառնալ:

■ *Փորձեք և հրավիրեք:* Եթե հարմար է, օգնեք ուսուցիչներին փորձել նրանց քննարկած սկզբունքը: Հրավիրեք նրանց գրի առնել և գործել ըստ տպավորությունների, որոնք ստանում են՝ թե ինչպես կիրառել սկզբունքը իրենց ուսուցանման մեջ, ներառյալ իրենց տներում ուսուցանելու ջանքերում: Քաջալերեք նրանց սկսել ուսումնասիրել հաջորդ սկզբունքը, որը քննարկելու են:

Որքանով որ հնարավոր է, ուսուցիչների խորհրդի ժողովներում պետք է հասկացվեն քննարկվող սկզբունքները:



## Ուսուցանել Փրկչի ձևով

Երբ մտածում եք Փրկչի ձևով ուսուցանելու մասին, ի՞նչ է գալիս ձեր մտքին: Կարո՞ղ եք տեսնել Նրան՝ ծովի ափին բազմություններին ուսուցանելիս, ջրհորի մոտ կնոջ հետ առանձին գրուցելիս, կամ փոքր երեխային օրհնելիս: Երբ կարդում եք Նրա մասին սուրբ գրություններում, ի՞նչ եք նկատում, ինչպե՞ս է Նա օգնում մյուսներին սովորել և աճել: Ի՞նչ է նշանակում ձեզ համար Փրկչի ձևով ուսուցանելը:

### ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ՓՐԿՉԻ ՁԵՎՈՎ

Հիսուս Քրիստոսը հայտարարել է. «Ես եմ ճանապարհը» (Հովհաննես 14.6): Երբ խորհեք Նրա կյանքի և ուսուցանելու ձևեր հնարավորությունների մասին, դուք կգտնեք, որ արդյունավետ ուսուցիչ դառնալու ճանապարհը Փրկչին ավելի շատ նմանվելն է: Փրկչի ձևով ուսուցանումը գալիս է նրանից, թե ով է Նա և «Հոգիի գործությունովը», որը Նա ուներ Իր հետ (Ղուկաս 4.14): Փրկչի ձևով ուսուցանելու բանալին ապրելն է այնպես, ինչպես Փրկիչն էր ապրում:

Եվ ինչպե՞ս էր Նա ապրում:

Փրկիչը լի էր սիրով: Անկախ նրանից, Նա քաջալերում էր զոջացող մեղավորին, ուսուցանում էր աշակերտներին, թե նախատում փարիսեցիներին, Փրկչի բոլոր գործողությունները սիրո արտահայտություն էին: Մարդկանց ու նրանց կարիքների հանդեպ ունեցած այդ սերն ու կարեկցանքը առաջնորդում էին Նրան ուսուցանել այնպիսի ձևերով, որոնք իմաստալից կլինեին նրանց համար: Երբ Փրկիչն ուսուցանում էր, ծանոթ ու իրական կյանքից փորձառությունները, ինչպիսին են ձկնորսությունը, երեխայի լույս աշխարհ գալը և ոչխարներին արածեցնելը, դառնում էին հոգևոր դասեր:

Փրկիչը ձգտում էր ու հնազանդվում էր Հոր կամքին և ուսուցանում էր Իր Հոր վարդապետությունը: Մանկուց Հիսուսը «Հոր տան» գործերով էր զբաղված, ասելով. «Ես միշտ նորան

հաճելի բաներն եմ անում»: Հիսուսն ասել է. «Իմ վարդապետությունն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է» (Ղուկաս 2.49, Հովհաննես 8.29, 7.16):

Փրկիչն ամբողջովին պարտավորված էր Իր սուրբ առաքելությամբ՝ Աստծո զավակներին տանելու դեպի Նա: Ուստի, Հիսուսն ավելին արեց, քան պարզապես տեղեկություն տալը, Նա Իր հետևորդներին կարևոր պարտականություններ սովեց, որոնք ամրացրեցին նրանց հավատքը և օգնեցին նրանց աճել: Նա վստահեց նրանց, պատրաստեց և ուղարկեց աշխարհի տարբեր ծայրեր՝ մարդկանց ուսուցանելու, օրհնելու և ծառայելու (տես Մատթեոս 10.1, 5–8):

Փրկիչը սիրում էր սուրբ գրությունները և օգտագործում դրանք ուսուցանելու և Իր առաքելության մասին վկայելու համար: Նա սովորեցնում էր մարդկանց զննել սուրբ գրությունները և իրենց հարցերի պատասխանները ինքնուրույն գտնել: Երբ Նա ուսուցանում էր Աստծո խոսքը իշխանությամբ, մարդիկ հասկանում էին, որ սուրբ գրությունները ճշմարիտ են (տես Ղուկաս 24.32):

Փրկիչն ապրում էր համաձայն Իր ուսուցանածի: Ցանկացած դեպքում, Նա կատարյալ օրինակ էր: Իր հետևորդներին Նա ուսուցանեց աղոթել՝ աղոթելով նրանց հետ (տես Ղուկաս 11.1–4): Նա նրանց ուսուցանեց սիրել ու ծառայել՝ այնպես, ինչպես Նա էր սիրում ու ծառայում նրանց: Նա նրանց ուսուցանեց ապրել ըստ

Իր ավետարանի՝ այնպես, ինչպես Նա էր ապրում: Նա միշտ ուսուցանում էր, հաճախ պաշտոնական ժողովներում, բայց նույնքան հաճախ տներում, և մասնավոր, ոչ պաշտոնական գրուցների միջոցով (տես Մատթեոս 4.23, Մարկոս 14.3–9):

Շատ բաներ դուք կհայտնաբերեք Փրկչի ուսուցանելու եղանակի մասին: Բայց մի բան հստակ է. իսկապես Նրա ձևով ուսուցանելու գործությունը կգա, երբ սովորեք Նրանից և հետևեք Նրան: Փրկչի ձևով ուսուցանելու հրավերը իրոք հիմնական մասն է Նրա հրավերի՝ «Եկ, հետևիր ինձ» (Ղուկաս 18.22):

### ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ՓՐԿՉԻ ՁԵՎՈՎ

Դուք Հիսուս Քրիստոսի աշակերտն եք: Մա նշանակում է, որ դուք ուսուցիչ եք, քանի որ աշակերտությունը ներառում է մյուսներին ուսուցանել, օրհնել ու բարձրացնել: Ձեզ կարող է որոշ ժամանակով պաշտոնապես կոչում ստանալ ուսուցանելու, սակայն ուսուցանելու պարտականությունը միշտ ձեզ հետ կլինի, հատկապես եթե դուք ծնող եք: Երբեմն ուսուցանելու պարտականությունը կարող է ճնշող թվալ: Թերևս դուք անհանգստանում եք, որ բավարար գիտելիք չունեք, որ չունեք ուսուցանելու բավարար փորձ, կամ որ դուք պարզապես ուսուցիչ չեք ձեռնադրվել: Մակայն ձեռք երկնային Հայրը, ով ձեզ կատարյալ ձևով գիտի, կանչել է ձեզ ուսուցանելու, հաշվի առնելով, թե դուք ինչ կարող եք

### ՏԵՍԱՆՄՈՒՇ

Դիտեք *Teaching the Gospel in the Savior's Way* տեսանյութը (LDS.org):







առաջարկել որպես Հիսուս Քրիստոսի պարտավորված հետևորդ: Եւ չի լքի ձեզ:

Միա գործության և աջակցության շատ աղբյուրներից մի քանիսը, որոնք Եւ հասանելի է դարձրել ձեզ՝ օգնելու համար, որ ուսուցանեք Նրա ձևով:

**Մուրֆ Հոգու գործությունը:** Եթե ձգտեք արժանիորեն ապրել ըստ ավետարանի, Մուրֆ Հոգին կհայտնի ձեզ Աստծո կամքը: Եւ ձեզ կտա մտքեր, զգացողություններ և ստեղծագործ գաղափարներ այն մասին, թե ինչպես օգնել մյուսներին սովորել: Եւ կօգնի ձեզ իմանալ, թե ավետարանի որ սկզբունքների վրա կենտրոնանալ: Եվ Եւ կդիպչի նրանց սրտերին, ում դուք ուսուցանում եք, և կոգեշնչի նրանց, որ փոխվեն: Մուրֆ Հոգին հնարավոր կդարձնի ձեզ համար լինել «Աստվածանից վարդապետ», քանի որ Հոգին ճշմարիտ ուսուցիչ է, և երբ Հոգին ձեզ հետ է, դուք կուսուցանեք Աստծո գործությամբ և կօգնեք իրագործել դարձի գալու հրաշքը (Հովհաննես 3.2, տես նաև 2 Նեփի 33.1):

**Ձեր կոչման խոստումը և ձեռնադրումը:** Ուսուցանելու ձեր կոչումը գալիս է Տիրոջից, ոչ թե մարդուց, և ինչպես

խոստացել է Նախագահ Թոմաս Ա. Մոնտերը. «Ում Տերը կանչում է, Տերն էլ պատրաստում է:»<sup>1</sup> Բացի այդ, դուք ձեռնադրվել եք նրանց ղեկավարության ներքո, ովքեր կրում են քահանայության բանալիները, հետևաբար, դուք անձնական հայտնության իրավունք ունեք, որը ձեզ անհրաժեշտ է հաջողելու համար: Այս օրհնությունները ձերն են, եթե փնտրեք դրանք, հավատարիմ մնաք և ձգտեք արժանի լինել:

**Աղոթքի գործությունը:** Ձեր Երկնային Հայրը միշտ հասանելի է: Դուք կարող եք խոսել անմիջապես Նրա հետ՝ աղոթքի միջոցով: Փրկիչն ասել է. «Խնդրեք Հորը՝ իմ անունով», «և դուք կունենաք Մուրֆ Հոգին» (Վևու 18.18, տես նաև Վևու 42.14):

**Ձեր սերը, տաղանդներն ու փորձառությունները** Դուք կարող եք օրհնել Աստծո զավակներին, օգտագործելով ձեր ունեցած սերը մյուսների հանդեպ, Աստծո տված պարգևները և ձեր կյանքի փորձառությունները: Եթե դուք հավատարմորեն ծառայում եք և հայցում Աստծո օգնությունը, Եւ կմեծարի ձեզ և դուք կաճեք՝ Փրկչի ձևով ավետարանն ուսուցանելու ձեր ունակությամբ:

**Աստծո խոսքի գործությունը:** Մուրֆ գործություններում և վերջին օրերի մարգարեների խոսքերում

պարունակվող վարդապետությունը սրտեր փոխելու և հավատք մեծանելու գործություն ունի: Եթե դուք և նրանք, ում դուք ուսուցանում եք «փորձե[ք] Աստծո խոսքի ուժը», դուք կիմանաք, որ այն ունի «մեծ միտում՝ առաջնորդել ժողովրդին անելու այն, ինչն արդար է» (Ավա 31.5):

**Միդել ղեկավարներին:** Ձեր քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարները ցանկանում են օգնել ձեզ հաջողության հասնել: Նրանցից խորհուրդ հարցրեք, երբ ձգտում եք բարելավվել որպես ուսուցիչ, և երբ խորհում եք նրանց կարիքների մասին, ում ուսուցանում եք:

**Նրանց մասնակցությունը, ում դուք ուսուցանում եք:** Ձեր դասարանի յուրաքանչյուր անձնավորություն հարուստ աղբյուր է ավետարանով ապրելու վկայության, մտքերի և փորձառությունների: Հրավիրեք նրանց կիսվել դրանցով և բարձրացնել մեկ մեկու:

Հիշեք, Աստված կանչել է ձեզ և Եւ կպատրաստի ձեզ: Ավետարանն ուսուցանելը փրկության Նրա մեծ աշխատանքի կարևոր մասն է և «երբ մենք Տիրոջ այգում ենք, մենք Տիրոջ օգնության իրավունքն ունենք»<sup>2</sup>

1. Թոմաս Ա. Մոնտեր, «Duty Calls», *Ensign*, May 1996, 44:  
2. Թոմաս Ա. Մոնտեր, «Սովորել, կատարել, լինել» *Ensign* կամ *L'haishna*, Նոյ. 2008, 62:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներին լրացնել գնահատումը, որը կոչվում է «Բարելավվել որպես քրիստոսանման ուսուցիչ»՝ այս գրքում:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Սիրեք նրանց, ում ուսուցանում եք

(2Եռնարկ 2. Ծառայել Եկեղեցում [2010], 5.5.4)

Բոլոր բաները, ինչ Փրկիչն արել է Իր երկրային ծառայության ընթացքում, դրդված էին սիրուց՝ Հոր և մեր բոլորիս հանդեպ: Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք լցվել այս նույն սիրով, եթե ձգտենք լինել Քրիստոսի ճշմարիտ հետևորդները (տես Հովհաննես 13.34–35, Մորոնի 7.48, 8.26): Մեր սրտերում ունենալով Քրիստոսանման սեր, մենք կփնտրենք հնարավոր ամեն կերպ օգնել մյուսներին՝ իմանալ Քրիստոսի մասին և գալ դեպի Նա: Մերը կլինի մեր ուսուցանման առիթն ու դրդապատճառը:

### ԱՂՈՅԷ ՆՐԱ ԱՆՈՒՆՈՎ ԱՅՆ ՄԱՐԴ-ԿԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՒՍ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՍ ԵՔ:

Փրկիչը Պետրոսին ասաց. «Ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի» (Ղուկաս 22.32): Մտածեք, թե ինչ է տեղի ունենում ձեր ներսում, երբ աղոթում եք ինչ-որ մեկի համար. ինչպե՞ս է ձեր աղոթքը ազդում այդ մարդու հանդեպ ձեր զգացողության վրա: Հետևելով Փրկչի օրինակին, աղոթեք Նրա անունով այն մարդկանց համար, ում դուք ուսուցանում եք, ովքեր ամենաշատ կարիքի մեջ են: Աղոթեք իմանալու և հասկանալու նրանց հատուկ կարիքները, և խնդրեք Երկնային Հորը «պատրաստելու նրանց սրտերը» (Ամա 16.16) սովորելու այն բաները, որոնք կնպաստեն այդ կարիքները հոգալուն:

**Խորհելու հարց:** Ի՞նչ տպավորություններ ես կունենամ, աղոթելով նրանց համար, ում ուսուցանում եմ:

**Սուրբգրքյան օրինակ** Մյուսներին սիրելու մասին ի՞նչ է սովորեցնում ինձ զորամացիների համար ասված Ամա-յի աղոթքը (տես Ամա 31.24–36):

### ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՆԱՅԷ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ Է ՆԱՅՈՒՍ ՆՐԱՆՅ

Որովհետև Աստված նայում է մարդու սրտին, և այն, ինչ Նա է տեսնում տարբերվում է նրանից, ինչ մենք ենք տեսնում կողքից (տես Ա Քաղաքացիաց 16.7): Երբ ջանաք տեսնել նրանց, ում դուք ուսուցանում եք, այնպես, ինչպես

Աստված է նրանց տեսնում, դուք կճանաչեք նրանց աստվածային արժեքը, և Հոգին կսովորեցնի ձեզ, թե ինչ անեք, որպեսզի օգնեք նրանց իրագործել իրենց ներուժը:

**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս է փոխել իմ կյանքը ծնողի, ուսուցչի կամ մի ուրիշ դաստիարակի սերն ու վստահությունը: Իմ սերն ինչպե՞ս կարող է փոխել մեկին, ում ես փորձում եմ ուսուցանել:

**Սուրբգրքյան օրինակ** Ղուկաս 19.1–10 հատվածներում Փրկիչը մաքսապետ Ջաքեոսին այլ կերպ տեսավ, քան մյուսներն էին տեսնում: Ի՞նչ այլ օրինակներ կան սուրբ գրություններում, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստված տեսնում մեզ:

### ԳՏԷՔ ՁԵՐ ՍԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՊԱՐՋ ՈՒ ՀԱՐՄԱՐ ԵՂԱՆԱԿՆԵՐ:

Կախված հանգամանքներից, սեր ցուցաբերելը նրանց նկատմամբ, ում դուք ուսուցանում եք, կարող է արտահայտվել անկեղծ հաճոյախոսելով, հետաքրքրվելով նրանց կյանքով, ուշադիր լսելով նրանց, ներգրավելով նրանց դասին, ծառայության գործեր անելով նրանց համար, կամ նրանց տեսնելիս ուղղակի ջերմ ողջունելով: Ձեր վերաբերմունքը մարդկանց հանդեպ նույնքան կարևոր է, որքան այն, ինչ ուսուցանում եք նրանց:

Երբեմն դասը ներկայացնելով տարված լինելը կարող է զսպել մեզ

մեր սերն արտահայտելուց նրանց հանդեպ, ում ուսուցանում ենք: Եթե դա պատահի ձեզ հետ, մտածեք, թե ինչպես կարող եք կենտրոնանալ նրա վրա, ինչն ավելի կարևոր է: Օրինակ, դուք կարող եք դասից առաջ խնդրել դասարանի որևէ անդամին կամ ձեր օժանդակ նախագահությունից մեկին՝ կարգի բերել դասասենյակը և պատրաստել տեսալսողական սարքավորումները, այնպես որ դուք ավելի շատ ժամանակ ունենաք ողջունելու դասարանի անդամներին, երբ նրանք ներս մտնեն: Դուք նաև կհայտնաբերեք, որ սենյակը կարգի բերելու համար դասարանի անդամների հետ աշխատելը հիանալի առիթ է համագործակցելու նրանց հետ, մինչ դասը կսկսվի:

**Խորհելու հարցեր** Արդյոք գիտե՞ն այն մարդիկ, ում ես ուսուցանում եմ, որ ես սիրում եմ նրանց: Ի՞նչ առիթ եմ ես տվել նրանց՝ դա իմանալու: Ի՞նչ կարող եմ ես անել, որպեսզի սիրով պարուրեմ ինչ-որ մեկին, ով կարծես պասսիվ է դասարանում:

**Սուրբգրքյան օրինակ** Փրկիչն ինչպե՞ս էր սեր ցուցաբերում այն մարդկանց հանդեպ, ում Նա ուսուցանում էր (տես Հովհաննես 13.3–16, 3 Նեփի 17): Ինչպե՞ս կարող եմ հետևել Նրա օրինակին, երբ ուսուցանում եմ:

▶ Տես նաև “Love Those You Teach” տեսանյութը (LDS.org):

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսեք իրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցման առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Հրավիրեք:** Խնդրեք ուսուցիչներին մտածել, թե ուսանողների հանդեպ սեր ցուցաբերելու վերաբերյալ քննարկման արդյունքում ինչ են նրանք ոգեշնչվել անել: Գուցե մտքին է եկել այն մեկի անունը, ով սիրված զգալու կարիք ունի.

ընտանիքի որևէ անդամը, ընկերը կամ դասարանի անդամը: Ինչպե՞ս նրանք կարձագանքեն այդ հուշումներին:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Կենտրոնացեք մարդկանց, ոչ թե դասերի վրա

«Ավետարանի ուսուցիչը Վարդապետի նման կծառայի ու անմնացորդ կկենտրոնանա ուսուցանվողների վրա», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դավիթը: «Նրա ամբողջական կենտրոնացումը ուղղված կլինի ոչխարների կարիքներին, այսինքն ուսանողների բարօրությանը: Ավետարանի ուսուցիչը չի կենտրոնանում իր վրա: Այս սկզբունքը հասկացողը չի նայի իր կոչմանը, որպես «դաս տալու կամ ներկայացնելու» առիթ, քանի որ այդ սահմանումը դիտում է ուսուցանությունը ուսուցչի տեսանկյունից, այլ ոչ թե՝ ուսանողական: Կենտրոնանալով ուսանողների կարիքների վրա, ավետարանի ուսուցիչը երբեք չի մթազնի Վարդապետի մասին նրանց տեսլականը, կանգնելով այդ ճանապարհին կամ ստվերածածկ անելով դասը ինքնագովազդով կամ սեփական շահերից ելնելով:»<sup>1</sup>

### ԶԳՏԵՔ ՀԱՍԿԱՆԱԼ ՆՐԱՆՅ, ՈՒՍ ՈՒՍՈՒՅԱՆՈՒՍ ԵՔ:

Ավետարանը բոլորի համար է, բայց երկու բացարձակ նման մարդ չկա: Առիթ փնտրեք հասկանալու ձեր ուսանողների անցյալը, հետաքրքրություններն ու տաղանդները և կարիքները: Հարցեր տվեք, ուշադիր լսեք և նկատեք, թե ինչ են ասում կամ անում սովորողները տարբեր իրավիճակներում: Եթե դուք ուսուցանում եք երիտասարդներին կամ երեխաներին, գաղափարների համար դիմեք նրանց ծնողներին: Բացի այդ ամենից, աղոթեք հասկացողության համար, որը միայն Հոգին կարող է տալ: Որքան ավելի շատ եք հասկանում նրանց, ում ուսուցանում եք, այնքան ավելի լավ կարող եք օգնել նրանց տեսնել, թե ինչպես է ավետարանը կիրառվում իրենց անձնական կյանքում:

**Խորհելու հարցեր** Ու՞մ ես կարիք ունեմ ավելի լավ հասկանալու նրանց միջից, ում ուսուցանում եմ: Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի նրան ավելի լավ հասկանամ:

**Սուրբգրքյան օրինակ** Հովհաննես 21.1–17 հատվածներն ի՞նչ են ուսուցանում այն մասին, թե Փրկիչն ինչպես հասկացավ Պետրոսին և սովորեցրեց նրան, թե ինչ է պետք նրան իմանալ:

▶ Տես նաև “Know and Love Us” տեսա-նյութը (LDS.org):

### ՊԱՏՐԱՍԿԵԼԻՍ ՄԱՐԿԱՆՅ ՄԱՍԻՆ ՄՍԱԾԵՔ

Երբեմն, ուսուցանելուն պատրաստվելիս ուսուցիչներն օգտագործում են որևէ դաս կամ միջոցառում, որն արդեն օգտագործվել է նախկինում, առանց մտածելու, թե ինչպես է դա վերաբերում ներկայիս սովորողներին: Այս մոտեցումը հաճախ հաշվի չի առնում դասարանի անդամների հատուկ կարիքները: Երբ պատրաստվում եք, թող ձեր ծրագրերին առաջնորդի ձեր հասկացողությունն այն մարդկանց մասին, ում դուք ուսուցանում եք: Դասի նյութը սովորողներին հասցնելու համար դուք կարող է առաջնորդվեք օգտագործել երաժշտություն, կամ նախօրոք պատրաստեք որևէ հանձնարարություն, կամ էլ համեմատություն օգտագործեք մի բանի հետ, ինչում սովորողը հետաքրքրված է, օրինակ, սպորտը: Քրիստոսանման ուսուցիչները պարտավոր չեն հետևել որևէ կոնկրետ ոճի կամ մեթոդի. նրանք պարտավոր են օգնել մարդկանց հավատք կառուցել Հիսուս Քրիստոսի հանդեպ և Նրան ավելի նմանվել:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ փոխել իմ ուսուցման ծրագիրը, որպեսզի այն համապատասխանի իմ դասարանից որևէ մեկի հատուկ կարիքներին:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկչի ուսուցման մոտեցումը

համապատասխանում Նրա կողմից ուսուցանվող մարդկանց հատուկ կարիքներին (տես, օրինակ, Մարկոս 10.17–22):

### ՄԻ ՓՈՐՁԵՔ ԸՆԴԿՐԿԵԼ ԱՄԵՆ ԻՆՉ

Ամեն դասին բավականին շատ բան կա քննարկելու, բայց անպայման չէ ընդգրկել ամբողջը մեկ դասա-ժամում, որպեսզի մեկի սրտին մի բան դիպչի, հաճախ մեկ կամ երկու կարևոր կետերը բավական են: Երբ մտորում եք սովորողների կարիքների մասին, Հոգին կօգնի ձեզ ընտրել, թե որ սկզբունքները, պատմությունները կամ սուրբ գրությունների հատվածները հասկանալի են նշանակալից կլինեն նրանց համար: Նա նաև կոգեշնչի ձեզ դասի ժամանակ փոխել ձեր ծրագրերը՝ թողնելով որոշ կետեր ավելի ուշ քննարկման համար, որպեսզի նախ քննարկվեն այն սկզբունքները, որոնք ներկա պահին ավելի կարևոր են դասարանի անդամների հիմար:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս ես կարող եմ ցույց տալ սովորողներին, որ ես ավելի շատ հետաքրքրված եմ նրանց սովորելով, քան դասն ավարտելով:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում ուսուցանելու մասին Վարդապետություն և Ուխտեր 98.11–12-ում նկարագրված օրինակից (տես նաև Վևու 78.17–19):

1. Dallin H. Oaks, “Gospel Teaching,” Ensign, Nov. 1999, 79:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք: Հետևեք, որ յուրաքանչյուրն, ով ցանկանում է կիսվել, հնարավորություն ունենա այդ անելու, ինչն ավելի կարևոր է, քան ամեն դասին ամբողջ նյութն ընդգրկելը:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներից մեկին կանգնել սենյակի դիմացի մասում: Խնդրեք մյուսներին այնպիսի հարցեր տալ նրան, որոնք կբացահայտեն այդ մարդու հետաքրքրություններն ու տարղանդները: Այնուհետև քննարկեք ուսուցիչների հետ, թե այս

տեղեկությունների շնորհիվ ինչպես կուսուցանեին սենյակի դիմացը կանգնած մարդուն: Հարցրեք ուսուցիչներին, թե նրանք ինչպես կկիրառեին այս փորձը իրենց նախապատրաստության և ուսուցանման ժամանակ:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Կապ պաշտպանեք նրանց հետ, ովքեր չեն հաճախում

Մինչ Փրկիչը հաճախ էր դիմում բազմությանը, Նա խորապես հետաքրքրված էր անհատներով, այդ թվում նրանցով, ովքեր մոռացված էին, անտեսված, մերժված, կամ չհասկացված: Փրկչի առակից այն հովվի պես, որը թողնելով իննսուն իննին, որոնք հոտում ապահով էին, գնում է մեկին փնտրելու (տես Ղուկաս 15.4), դուք կարող եք կապ պաշտպանել դասարանից բացակայող անդամների հետ: Դասարանի անդամներին ուսուցանելու և բարձրացնելու, նրանց օգնելու գալ դեպի Քրիստոսը ձեր հնարավորությունները տարածվում են լսարանից դուրս ու նաև այն մարդկանց վրա, ովքեր ձեր պաշտոնական դասերի հաճախողները չեն:

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵՔ

Քիչ ակտիվ անդամների հետ կապ պաշտպանելը միայն տնային կամ այցելող ուսուցչի, քահանայություն կրողի կամ օժանդակ կազմակերպության ղեկավարի պարտականությունը չէ, ուսուցիչները նույնպես կարող են օգնել այս գործում: Ուսուցանելն ավելին է, քան կիրակի օրը պարզապես դաս մատուցելը: Դա ենթադրում է սիրով ծառայել և օգնել մյուսներին ստանալ ավետարանի օրհնությունները, և այս օգնությունը հաճախ հենց այն է, ինչ հարկավոր է դասարանի քիչ ակտիվ անդամին: Մենք բոլորս պետք է միասին աշխատենք հասնելու համար նրանց, ովքեր դժվարությունների մեջ են, և որպես ուսուցիչ, օգնելու հարցում ձեր դիրքը հաստիկ կարող է լինել:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը հիշեցրել է այս պատմությունը երիտասարդների նավակի մասին, որը նրանք նավարկում էին գետի հոսանքն ի վայր՝ դեպի վտանգավոր ջրվեժը: Նկատելով վտանգավոր իրավիճակը ափին կանգնած մարդը գոռում էր երիտասարդներին, որ հետ շրջվեին, բայց քանի որ նրանք չէին տեսնում ջրվեժը, անտեսեցին նրան: Նա կրկին գոչեց զգուշացնելով, սակայն նրանք ծիծաղելով նորից անտեսեցին նրա զգուշացումը: Շուտով, նրանք ջրասահանքների մեջ էին: Նրանք հուսահատ ջանքեր գործադրեցին, որ նավակը հետ դարձնեին, սակայն արդեն ուշ էր:

Նախագահ Մակքեյն ուսուցանել է. «Մի բան է կանգնել ափին ու գոռալ. «Չե՛յ, տղաներ: Առջևում վտանգ կա»: Մեկ այլ բան է թիավարել գետի հոսքում, եթե հնարավոր է, մտնել երիտասարդների նավակը և ընկերակցությամբ, համոզելով . . . հետ դարձնել նավակը ջրասահանքներից: . . . Եկեք մասնակցություն ունենանք նրանց կյանքերում:»<sup>1</sup>

**Խորհելու հարցեր** Նրանց միջից, ում ուսուցանում եմ, ո՞վ է հավանական դժվարությունների մեջ կամ չի հաճախում դասարան: Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի օգնեմ նրան: Ինչպե՞ս կարող եմ օգնել դասարանի մյուս անդամները:

**Սուրբգրքյան օրինակ** Երբ կարդում եմ, թե ինչպես էր Փրկիչն օգնում մարդկանց (տես, օրինակ, Ղուկաս 8.43–48, Հովհաննես 4.6–30), ի՞նչ է ուսուցանում ինձ Հոգին՝ ինչպե՞ս ես կարող եմ օգնել նրանց, ում ուսուցանում եմ:

### ՓՆՏՐԵՔ ՈԳԵՇՆՉՈՒՍ

Փնտրելով ոգեշնչում ձեր դասարանի անդամների անհատական կարիքների վերաբերյալ, հիշեք նրանց, ովքեր դժվարությունների մեջ են կամ ովքեր չեն հաճախում կանոնավորապես (ձեր ղեկավարները կօգնեն ձեզ իմանալ, թե ամենաշատն ով ուշադրության կարիք ունի): Մարդը կարող է ետ մնալ Եկեղեցու մասնակցությունից տարբեր պատճառներով՝ դրանցից շատերը դժվար է կռահել:

Մակայն Երկնային Հայրը ճանաչում և սիրում է Իր զավակներին, և եթե դուք անեք ձեր մասը, Նա կօգնի ձեզ իմանալ լավագույն եղանակը, թե ինչպես օգնության ձեռք մեկնել ձեր դասարանի այն անդամներին, ովքեր դժվարանում են ավետարանում և հրավիրել նրանց վերադառնալ:

**Խորհելու հարցեր** Արդյոք գիտե՞մ բոլոր նրանց անունները, ում ինձ հանձնարարված է ուսուցանել: Արդյոք աղոթո՞ւմ եմ նրանց համար, ովքեր դժվարությունների մեջ են: Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղյակ լինել նրանց կարիքներից:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Հովհաննես 10.14–15, 27–29 հատվածներից, թե ինչ է ասում Փրկիչն այն մարդկանց մասին, ում ես ուսուցանում եմ:

### ԱԶԱԿՑԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Մարդիկ, ովքեր մեծ ազդեցություն են թողնում անհատի վրա, լինի դա լավ, թե՛ վատ, սովորաբար, նրանց տանեցիներն են: Քանի որ տունը ավետարանով ապրելու և սովորելու կենտրոնն է, դասարանի անդամին ամրացնելու ձեր ջանքերը առավել արդյունավետ կլինեն, եթե աշխատեք աջակից ամուսնու, երեխաների, կամ հարազատների հետ միասին: Օրինակ, երբ փորձում եք օգնել երիտասարդի կամ երեխայի, խոսեք նրա ծնողների հետ: Նրանք կօգնեն ձեզ հասկանալ իրենց

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջ մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներին մտքերով կիսվել միմյանց հետ (փոքր խմբերով կամ բոլորը միասին) այն

մասին, թե ինչպես են նրանք օգնության ձեռք մեկնել նրանց, ովքեր չեն հաճախում իրենց դասերին:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

երելսայի կարիքները և թե ինչպես հոգալ դրանք:

**Խորհելու հարց** Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի աջակցեմ ընտանիքների ջանքերին, ում ես ուսուցանում եմ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Ենոյն 1.1–3, Մոսիա 27.14, և Ալմա 36.17 հատվածներից, թե ինչպես են հավատարիմ ընտանիքների անդամները օգնում նրանց, ովքեր դժվարությունների մեջ են:

**ՀՐԱՎԻՐԵՔ ՍԻՐՈՎ**

Քրիստոսանման սիրո անկեղծ արտահայտությունները մեծ գորություն ունեն փափկացնելու դասարանի անդամների սրտերը, ովքեր դժվարություններ ունեն ավետարանի հետ կապված: Հաճախ այդ անհատները պարզապես կարիք ունեն իմանալու, որ իրենք պահանջված են ու սիրված: Ինչպես ուսուցանել է Նախագահ Թոմաս Ս Մոնտոնը «Նրանց խնդրելը, որ ծառայեն, ինչ որ ձևով կարող է լինել առիթ, որը նրանց անհրաժեշտ է՝ լիակատար ակտիվության վերադառնալու համար:»<sup>2</sup> Դա կարող է լինել մի պարզ բան, ինչպես նրանց խնդրելը, որ մասնակցեն առաջիկա դասին, կիսվեն իրենց փորձառությամբ կամ մտքերով սուրբ գրության որևէ հատվածի մասին: Կարող եք խնդրել դասարանի մյուս անդամներին իրենց հոգաժողությունը ցույց տան այս անձանց նկատմամբ՝ այցելելով նրանց, հրավիրելով նրանց


դասարան, կամ թեկուզ փոխադրամիջոց առաջարկելով, եթե անհրաժեշտ է:

**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս եմ ես հոգեպես զորացել մյուսներին ծառայելու հրավերով: Ես կարո՞ղ եմ արդյոք օգնել իմ դասարանի որևէ անդամին, խնդրելով նրան ինչ-որ ձևով ծառայել:

**Սուրբգրքյան օրինակ** Ծառայելու հրավերն ինչպե՞ս է փոխել Ամոտեկի պարտավորվածությունը ավետարանի հանդեպ (տես Ալմա 10.1–11):

**ԵՂԵՔ ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ԵՎ ՆԵՏԵՎՈՂԱԿԱՆ**

Փրկչի առակի հովիվը այնքան ժամանակ կփնտրի կորած ոչխարին, «մինչև որ գտնէ նորան» (Ղուկաս 15.4): Ամեն մեկը չի, որ անմիջապես կարձագանքի ձեռք ջանքերին: Մակայն Փրկիչը կոչ է արել մեզ չդադարել. «Այդպիսիներին դուք պետք է շարունակեք ծառայել. քանզի դուք չգիտեք, միգուցե նրանք վերադառնան ու ապաշխարեն . . . և ես կբժշկեմ նրանց» (3 Նեփի 18.32): Ապավինելով Տիրոջ ժամանակին, շարունակեք հարմար առիթներ փնտրել ցույց տալու նրանց, ովքեր չեն հաճախում, որ դուք սիրում եք ու կարոտում նրանց: Կարող եք անել դա անձնական այցելությունների, հեռախոսազանգերի, տեքստային հաղորդակցությունների միջոցով, կամ այլ կերպ: Հնարավոր է, սիրով կապ պաշտպանելու ձեռք համբերատար, հետևողական ջանքերը զարմանք առաջացնեն ձեր մեջ:



**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս է Փրկիչը համբերություն ցուցաբերում իմ թերությունների և դժվարությունների նկատմամբ: Ինչպե՞ս կարող եմ հետևել Նրա օրինակին, համբերատար լինելով նրանց նկատմամբ, ում ուսուցանում եմ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում համբերության և հետևողականության մասին Ղուկաս 15.8–10, Ալմա 37.7–8, և Վարդապետություն և Ուլիստեր 64.33 հատվածներից:

1. David O. McKay, in Conference Report, Oct. 1968, 7–8.  
2. Թոմաս Ս. Մոնտոն, «Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին Նրանք կարող են դառնալ», Ensign կամ Liahona, նոյ. 2012, 68:

**ՎԻՂԵՆ ՆՄՈՒՇ**

Տեսնելու համար դեկավարի ոգեշնչող օրինակ, ով օգնության ձեռք է մեկնում քվիրումի ժողովներին չհաճախող մի երիտասարդի, դիտեք Խոզե դե Սուզա Մարկեսի պատմությունը գերագույն համաժողովի տեսագրությունից՝ Երեք Մերվին Բ. Առնոլդի «Ամրացրու քո եղբայրների» ելույթի առաջին մի քանի րոպեները (LDS.org): (Տես նաև “Strengthen Thy Brethren,” Ensign կամ Liahona, մայ. 2004, 46–48:)



## Ուսուցանեք Հոգով

(Handbook 2: Administering the Church [2010], 5.5.4)

Փրկիչը խոստացավ Իր աշակերտներին. «Մուրք Հոգին. . . ամեն բան կտվորեցնե՛՛ ձեզ, և կհիշեցնե՛՛ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի» (Հովհաննես 14.26): Միայն Մուրք Հոգու միջոցով մենք կարող ենք իրականացնել ավետարանի ուսուցման վերջնական նպատակը՝ կառուցել հավատք Հիսուս Քրիստոսի հանդեպ և օգնել մյուսներին ավելի նմանվել Նրան: Մուրք Հոգին վկայում է ճշմարտությունը, Նա վկայում է Քրիստոսի մասին և փոխում է սրտերը: Ոչ մի մահկանացու ուսուցիչ, որքան էլ որ հմուտ ու փորձառու լինի, չի կարող փոխարինել Հոգուն: Բայց մենք կարող ենք գործիք լինել Աստծո՛ ձեռքերում՝ օգնելով Նրա զավակներին Հոգով սովորել: Այս անելու համար մենք հրավիրում ենք Հոգու ազդեցությունը մեր կյանք և քաջալերում նրանց, ում ուսուցանում ենք, անել նույնը:

### ՀՐԱՎԻՐԵՔ ՀՈԳԻՆ ԶԵՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Ավետարանի ուսուցիչ գործունեության ամենամեծ նպատակը, նրա յուրաքանչյուր հարցի, ամեն մի սուրբ գրության հաստատված, ամեն վարժության՝ Հոգին հրավիրելն է, կառուցելու համար հավատք և հրավիրել բոլորին զալ դեպի Քրիստոսը: Արեք ինչ կարող եք, որպեսզի հրավիրեք Մուրք Հոգու ազդեցությունը: Տերը խոստացել է. «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով» (Վևու 42.14): Բացի այդ, սուրբ երաժշտությունը, սուրբ գրությունները, վերջին օրերի մարգարեների խոսքերը, սիրո և վկայության արտահայտությունները և լուս մտորումների պահերը՝ այդ բոլորը հրավիրում են Հոգու ներկայությունը: Օրինակ, դուք կարող եք կազմակերպել, որ դասը սկսվելիս մի հանդարտ նախերգանքային երաժշտություն հնչի:

**Խորհելու հարցեր** Ի՞նչն է հրավիրում Հոգին իմ կյանք: Իմ տո՞ւն: Իմ դասարա՞ն: Ի՞նչն է հեռացնում Նրան: Ինչպե՞ս ես կարող եմ օգնել դասարանի անդամներին հրավիրել Հոգին ավետարանի իրենց ուսումնասիրմանը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Մուրք Հոգու մասին Հովհաննես 14.26, Հելաման 5.29–30, և Վարդապետություն և Ուխտեր 11.12–13

հաստատվածներից: Ինչպե՞ս կարող է այս սկզբունքը նպաստել, որ ես ավելի Փրկչի նման ուսուցանեմ:

### ԵՐԵՔ ՀՈԳՈՒ ԽՈՆԱՐՀ ԳՈՐԾԻՔԸ:

Երբեմն ուսուցիչները կարող են գայթակղվել մտածելու, թե դա իրենց գիտելիքը կամ մեթոդներն են կամ իրենց անհատականությունը, որ ոգեշնչում է նրանց, ում ուսուցանում են: Այս մոտեցումը հետ է պահում նրանց Մուրք Հոգին հրավիրելուց, որպեսզի ուսուցանի դասարանի անդամներին և փոխի նրանց սրտերը: Որպես ուսուցիչ, ձեր նպատակը պետք է լինի ոչ թե դասը տպավորիչ ներկայացնելը, այլ օգնելը մյուսներին զգալ Մուրք Հոգու ազդեցությունը, որը ճշմարիտ ուսուցիչն է:

**Խորհելու հարց** Ի՞նչ փոփոխություններ ես պետք է անեմ, որպեսզի ուսուցանելիս կարողանամ Մուրք Հոգին ինձ հետ ավելի լիարժեքորեն ունենալ (տես, օրինակ, Վևու 112.10): Անձնական գնահատման համար տես «Բարելավվել որպես Քրիստոսանման ուսուցիչ» այս աղբյուրում:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ է ուսուցանում ինձ Հոգին, երբ ես կարդում եմ, թե ինչպես Ալման և Մոսիայի որդիները «գործիքներ էին Աստծո՛ ձեռքում» (Մոսիա 27.32–37, Ալմա 17.1–12, 26, 29):

### ԵՐԵՔ ԵՎՈՒՆ

Ուսուցանելու լավագույն պահերը հաճախ անսպասելի են լինում, օրինակ, երբ ինչ-որ մեկը կիսվում է փորձառությամբ կամ հարց է տալիս, որը հանգեցնում է իմաստալից քննարկման: Ժամանակ տրամադրեք այդպիսի պահերի համար: Լսեք հուշումները ինչպես դասը ծրագրելու, այնպես էլ ուսուցանելու ժամանակ, և անհրաժեշտության դեպքում պատրաստ եղեք փոխելու ձեր ծրագրերը, հետևելով ձեր ստացած հուշումներին: Եթե դուք հոգևոր առումով պատրաստված եք, Տերը ձեզ կտա «այն նույն պահին. . . թե ինչ պիտի ասեք» (Վևու 100.6): Հիշեք, որ ավելի կարևոր է հետևել Հոգու ներգործություններին, քան տեղավորվել ժամանակի մեջ ամբողջ նյութը ներկայացնելով:

**Խորհելու հարցեր** Որպես ուսուցիչ ե՞րբ եմ ես զգացել, որ Հոգին առաջնորդում է ինձ: Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հաճախ ունենամ Նրա առաջնորդությունը:

**Սուրբգրքյան օրինակ** Կարդալով 3 Նեփի 17.1–9, ի՞նչ եմ ես սովորում Փրկչի օրինակից, թե ինչպես է Նա արձագանքում նրանց կարիքներին, ում ուսուցանում է:

### ՀԱՃԱՍ ԲԵՐԵՔ ԶԵՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոգևոր ճշմարտությունների մասին ձեր պարզ, անկեղծ վկայությունը հզոր ազդեցություն կարող է թողնել նրանց վրա, ում դուք ուսուցանում եք: Վկայությունն ավելի գորեղ է, երբ այն անմիջական է ու սրտաբուխ: Այն չպետք է լինի պերճախոս կամ երկարատև և չպետք է սկսվի «ես ցանկանում եմ բերել իմ վկայությունը» արտահայտությամբ: Հաճախ վկայություն բերեք որոշակի

### ՀՐԱՎԻՐԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԳՈՐԾԵԼ

ճշմարտապես դարձի գալը ավելի է, քան Հոգին միայն զգալը, որը հաստատում է ճշմարտությունը մեր հոգիներին: Մենք նաև պետք է գործենք համաձայն այդ ճշմարտությունների: Բացի սովորողների օգնելուց, որ զգան ու ճանաչեն Հոգին,

օգնեք նրանց գործել ստացված հուշումներին համապատասխան: Սովորողների գործելու հրավեր հղելու մասին ավելի իմանալու համար տես «Հրավիրեք սովորողներին գործել» այս աղբյուրում:



սկզբունքների մասին, որոնք ուսուցանում են: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Մմիթն ուսուցանել է, որ «այդպիսի վկայությունը կնիք է, որ հաստատում է իսկությունը» սկզբունքի: <sup>1</sup>

**Խորհելու հարցեր** Ուսուցանելու ժամանակ ի՞նչ հնարավորություններ եմ ես ունենում բերելու իմ վկայությունը՝ թե դասարանում, և թե տանը: Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ օգտագործել այդ հնարավորությունները:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում նրանից, թե Ալման ինչպես է բերում իր վկայությունը Ալմա 5.45–48, 36.3–4 հատվածներում:

▶ Տես նաև “A Man without Eloquence” տեսանյութը (LDS.org):

**ՀՐԱՎԻՐԵՔ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ԲԵՐԵԼ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Հոգին ձեր ուսուցմանը հրավիրելու համար քաջալերեք մյուսներին կիսվել իրենց անձնական վկայություններով քննարկվող ճշմարտության մասին: Պարզապես խնդրեք դասարանի անդամներին կիսվել իրենց զգացումներով կամ

փորձառություններով ավետարանի սկզբունքի վերաբերյալ: Օրինակ, կարող եք հարցնել «Ի՞նչ զգացումներ ունեք Մորմոնի Գրքի վերաբերյալ» կամ «Մարգարեին հետևելն ինչպես է օրինել ձեր ընտանիքը»: Նույնիսկ փոքր երեխաները կարող են վկայություն բերել, երբ այս կերպ հարց տրվի նրանց:

**Խորհելու հարց** Մտածելով նրանց մասին, ում ես ուսուցանում եմ, ո՞ւմ վերաբերյալ ես հուշում կստանամ, որպեսզի հրավիրեմ վկայություն բերել:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպես գրված է Մատթեոս 16.15–17 և Հովհաննես 11.20–27, ինչպե՞ս է Փրկիչը հրավիրել Պետրոսին և Մարթային բերել իրենց վկայությունները:

▶ Տես նաև “Thou Art the Christ” and “Invite Us to Testify” տեսանյութերը (LDS.org):

**ՕԳՆԵՔ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ՃԱՆԱԶԵԼ ՀՈԳՈՒ ԱՋԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

Ամենակարևոր բաներից մեկը, որ դուք կարող եք անել որպես ուսուցիչ՝

օգնելն է նրանց, ում դուք ուսուցանում եք, ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը: Մա հատկապես տեղին է, երբ սովորեցնում եք երեխաներին, երիտասարդներին և նոր անդամներին՝ դուք պատրաստում եք նրանց անձնական հայտնություն ստանալուն, խաբեությունից խուսափելուն և հոգևոր ինքնապահովում զարգացնելուն: Սուրբ Հոգու դրդումով հարցրեք սովորողներին, թե նրանք ինչ են զգում, կամ ինչ անելու հուշում են ստանում: Օգնեք նրանց միավորել իրենց հոգևոր զգացումները Սուրբ Հոգու ազդեցության հետ:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս իմանամ, թե Հոգին ներկա է, երբ ուսուցանում եմ:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս կարող եմ օգտագործել Գաղատացիս 5.22–23, Մորմոնի 7.13, և Վարդապետություն և Ուխտեր 8.2–3 օգնելու համար դասարանի անդամներին ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը:

1. *Gospel Doctrine, 5th ed.* (1939), 206:

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսե՛ք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվե՛ք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառեք:** Եթե հարմար է խնդրեք ուսուցիչներին կիսվել այս քննարկման ընթացքում նրանց ունեցած հոգևոր տպավորություններով: Ի՞նչ նրանք կանեն, որպեսզի իրենց հաջորդ

ուսուցանման ժամանակ առաջ-նորոգվեն Հոգու կողմից: Ուսուցիչների խորհրդի հաջորդ ժողովի ժամանակ հրավիրեք նրանց կիսվել իրենց փորձառություններով:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Պատրաստվեք հոգեպես

Նախապատրաստելով Իր երկրային ծառայությանը, Փրկիչը «Հոգու կողմից տարվեց» ծոմ պահելու, աղոթելու և «որ լինի Աստծո հետ» (Զոզեֆ Մմիթի Թարգմանություն, Մատթեոս 4.1 [Մատթեոս 4.1, ծանոթագրություն 2]): Ավետարանի գորավոր ուսուցումը ենթադրում է, որ ոչ միայն դասը պատրաստենք, այլ նաև՝ մեզ: Քանի որ Հոգին է իսկական ուսուցիչը, և դարձի գալու ճշմարիտ աղբյուրը, ավետարանի արդյունավետ ուսուցիչները նախքան դասաժամը լրացնելու մասին մտածելը կենտրոնանում են Սուրբ Հոգով իրենց սրտերը լցնելու վրա:

### «ԳԱՆՁԵՔ ԿՅԱՆՔԻ ԽՈՍՔԵՐԸ»

Աղոթքով Աստծո խոսքն ուսումնասիրելը ներդաշնակ է դարձնում մեզ Սուրբ Հոգու հետ: Ապա Նա կարող է ոգեշնչել մեզ, որ արդյունավետորեն օգտագործենք մեր սովորածը, երբ ուսուցանում ենք կամ բարձրացնում ուրիշներին: Այս պատճառով լավ կլինի ջանասիրաբար ուսումնասիրել սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը *մինչև* դիմելը օժանդակ նյութերին՝ դասը ծրագրելու համար: Տերը խոստանում է, որ եթե մենք «շարունակ [մեր] մտքում գանձենք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին [մեզ] կարվի», թե մենք ինչ խոսենք և ինչպես ուսուցանենք (Վևու 84.85):

**Խորհելու հարցեր** Ի՞նչ է նշանակում «գանձել» սուրբ գրությունները մտքում: Ե՞րբ եմ ես զգացել, որ սուրբ գրությունը գանձ է ինձ համար:

**Սուրբգրքյան օրինակ** Երբ Հայրում Մմիթն ուզում էր իմանալ, թե նա ինչպես կարող է մասնակցել Վերականգնման աշխատանքին, Տերն արձագանքեց հայտնությամբ, որը գրված է Վարդապետություն և Ուխտեր 11 բաժնում (տես նաև Վևու 23.3): Ի՞նչ խորհուրդ եմ ես գտնում այնտեղ, որը վերաբերում է ինձ որպես ուսուցիչ:

**ԱՄԵՆ ՕՐ ՓՆՏՐԵՔ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ:** Հայտնությունը հաճախ «տող առ տող» է գալիս (2 Նեփի 28.30), ոչ՝

միանգամից: Այսպիսով, ուսուցանելուն պատրաստվելու լավագույն եղանակը՝ մեկ շաբաթ շուտ սկսելն է: Երբ խորհեք, թե ձեր ուսուցանած ավետարանի սկզբունքներն ինչպես կօրհնեն ձեր դասարանի անդամներին, մտքերն ու գաղափարները կգան ձեր առօրյա կյանքում՝ երբ աշխատավայրի ճանապարհին եք, տնային գործերն եք անում, կամ շփվում ընտանիքի և ընկերների հետ: Չկարծեք, թե հոգևոր պատրաստվածությունը մի բան է, ինչին դուք պետք է ժամանակ հատկացնեք. դա մի բան է, ինչը դուք միշտ անում եք:

**Խորհելու հարց** Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ամեն օր ավելի ընկալունակ լինեմ հոգևոր առաջնորդությանը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ ավետարանական դասեր էր Փրկիչը գտնում առօրյա գործերում (տես, օրինակ, Մատթեոս 13.1–23, Հովհաննես 4.6–14):

Տես նաև Դեյվիդ Ա. Բեդնար, “Quick to Observe,” *Ensign*, Dec. 2006, 30–36:

**ԳՐԻ ԱՌԵՔ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Երբ դասի վերաբերյալ մտքեր ու տպավորություններ եք ստանում, մի հնար արեք դրանք գրի առնելու, որպեսզի հետագայում հիշեք դրանք և հղում անեք դրանց: Կարող եք ձեզ մոտ պահել մի նոթատետր, փոքրիկ

քարտեր կամ էլեկտրոնային սարք, որպեսզի ձեր տպավորություններն անմիջապես գրի առնեք, «մինչ . . . Հոգում [եք]» (Վևու 76.80, 113): Երբ գրի եք առնում հոգևոր տպավորությունները, դուք ցույց եք տալիս Տիրոջը, որ գնահատում եք Նրա առաջնորդությունը, և Նա կօրհնի ձեզ ավելի հաճախակի հայտնություններով:

Քաջալերեք նրանց, ում ուսուցանում եք, որպեսզի նրանք ևս գրի առնեն իրենց տպավորությունները: Երեխաները կարող են խրախուսվել կիսվել իրենց մտքերով ու փորձառություններով իրենց ծնողների կամ հարազատների հետ: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խոստացել է. «Խնամքով գրի առնված գիտելիքը կարիքի պահին մատչելի գիտելիք է դառնում: . . . [Հոգևոր առաջնորդությունը գրի առնելը] խթանում է հետագայում ձեր կողմից լույս ստանալու հավանականությունը:»<sup>1</sup>

**Խորհելու հարց** Հոգևոր տպավորությունները գրի առնելու ո՞ր մեթոդն է լավագույնը ինձ համար:

**Սուրբգրքյան օրինակ** Երբ Փրկիչն այցելեց Նեփիացիներին, Նա խնդրեց տեսնել նրանց գրառումները: Ի՞նչ եմ ես սովորում 3 Նեփի 23.7–14 հատվածների Նրա խոսքերից՝ իմ ստացած ոգեշնչումը գրի առնելու կարևորության մասին:

1. Ռիչարդ Գ. Սքոթ, “Acquiring Spiritual Knowledge,” *Ensign*, Nov. 1993, 88:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Օրինակ, կարող եք հրավիրել նրանց

կիսվելու իրենց ստացած որևէ տպավորությամբ, երբ նրանք ուսումնասիրել են սուրբգրքյան օրինակները:

**Հրավիրեք:** Հրավիրեք ուսուցիչներին գրի առնել հոգևոր տպավորությունները, որոնք նրանք ստանում են, երբ պատրաստվում են ուսուցանելու հաջորդ հնարավորությանը, ներառյալ իրենց տներում և ընտանիքներում

ունեցած հնարավորությունները: Ուսուցիչների խորհրդի հաջորդ ժողովի ժամանակ, եթե հարմար է, հրավիրեք նրանց կիսվել միմյանց հետ, թե ինչ են գրի առել:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:



## Ապրեք Հիսուս Քրիստոսի ավետարանով

Փրկիչը՝ Վարդապետ Ուսուցիչը, Իր Հոր հանդեպ հնազանդության կատարյալ օրինակ է: Քրիստոսանման ուսուցիչ լինելու համար, թերևս ամենակարևոր բանը, որ կարող եք անել, հետևելն է հնազանդվելու Փրկչի օրինակին և ամբողջ սրտով ըստ ավետարանի ապրելն է՝ տանը, եկեղեցում և ամենուրեք: Մա սկզբունքային եղանակ է Սուրբ Հոգու ընկերակցության արժանանալու համար: Պարտադիր չէ, որ կատարյալ լինեք, միայն թե ջանասիրաբար փորձեք և ձգտեք ներում ստանալ Փրկչի Քավության միջոցով, երբ սխալվում եք: Նախագահ Բոյոթ Ք. Փաքերն ուսուցանել է. «Զորությունը գալիս է, երբ ուսուցիչը արել է այն ամենը, ինչ կարող էր՝ նախապատրաստվելու համար ոչ միայն զուտ դասին, այլ իր կյանքը ներդաշնակ պահելով Հոգու հետ:»<sup>1</sup>

### ԸՆԴՈՐԻՆԱԿԵՔ ՓՐԿՉԻ ԿՅԱՆՔԸ

Օգտակար է ուսումնասիրել, թե ինչպես էր Փրկիչը ուսուցանում՝ Նրա օգտագործած մեթոդները, Նրա ասած բաները: Բայց Փրկչի ուսուցանելու և մյուսներին բարձրացնելու գործությունը գալիս էր Նրա ապրելաձևից և անհատականությունից: Որքան ջանասիրաբար փորձեք *ապրել* Հիսուս Քրիստոսի նման, այնքան ավելի շատ կկարողանաք *ուսուցանել* Նրա նման:

**Խորհելու հարցեր** Մտածելով իմ կյանքի ազդեցիկ ուսուցիչների մասին, ինչպիսի՞ քրիստոսանման հատկանիշներ են ես նկատում նրանց մեջ: Քրիստոսանման հատկանիշներից որո՞նք իմ կարծիքով են պետք է ավելի լիարժեքորեն զարգացնեմ: (Ինքնա-գնահատման վարժության համար տես «Բարելավվել որպես Քրիստոսանման ուսուցիչ» այս աղբյուրում:)



**Սուրբգրքյան օրինակ.** Վարդապետություն և Ուլստեր 4.5–6 հատվածներում թվարկվում են հատկանիշներ, որոնք որակում են մեզ Տիրոջ գործին ծառայելու համար: Ինչպե՞ս էր Փրկիչն այդ հատկանիշների օրինակը հանդիսանում: Ինչպե՞ս են կարող են զարգացնել դրանք:

### ԵՂԵՔ ԿԵՆԴԱՆԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆ:

«Դուք ուսուցանում եք այն, ինչ դուք ձեզանից ներկայացնում եք», - ասել է

Երեց Նիլ Ա. Մաքսվելը: «Ձեր բնավորության գծերն ավելի հիշվող կլինեն. . . քան որոշակի դասի որոշակի ճշմարտությունը: Այդպես էլ պետք է լինի, քանի որ եթե մեր աշակերտությունը լուրջ է, դա տեսանելի կլինի:»<sup>2</sup> Երբ դուք ուզում եք ուսուցանել ներման մասին, մի հատուկ ճիգ արեք ներելու համար նրանց, ովքեր ձեզ վիրավորել են: Երբ դուք ուզում եք

ուսուցանել աղոթքի մասին, այնպես արեք, որ ձեր սեփական աղոթքները լինեն հետևողական ու իմաստալից: Ձեր անձնական փորձառությունը թույլ կտա ձեզ գորավոր վկայություն բերել ձեր ուսուցանած սկզբունքների մասին: Քանի որ դուք դրանով ապրում եք, Սուրբ Հոգին կարող է վկայել, որ այն, ինչ դուք ուսուցանում եք, ճշմարիտ է: Եվ մարդուկ, ում

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

Օրինակ՝ կարող եք հարցնել . «Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում լինել կենդանի վկայություն»:

**Հրավիրեք:** Խնդրեք ուսուցիչներին ուշադրություն դարձնել այս քննարկման ընթացքում Նրանց ստացած հոգևոր սպավորություններին: Խնդրեք Նրանց մտածել, թե Հոգին ինչ է ասում Նրանց,

որ անեն, որպեսզի ավելի լիարժեքորեն ապրեն Հիսուս Քրիստոսի ավետարանով: Խրախուսեք Նրանց գրի առնել և գործել այդ հուշումներին համաձայն:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:



դուք ուսուցանում եք, կտեսնեն ձեր կյանքում ավետարանով ապրելու օրհնությունները:

**Խորհելու հարցեր** Ավետարանի ո՞ր սկզբունքները ես կուսուցանեմ հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում: Ես ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի լիարժեքորեն ապրեմ այդ սկզբունքներով:

**Սուրբգրքյան օրհնակ** Վերջին Ընթրիքի ժամանակ աշակերտները վիճեցին, թե նրանց միջից ով էր մեծը (տես Ղուկաս 22.14, 24–27): Փրկիչն ի՞նչ սովորեցրեց նրանց ճշմարիտ մեծության մասին (տես Հովհաննես 13.1–17):

▶ Տես նաև *“Living the Gospel Brings Power”* տեսանյութը (LDS.org):

**ԱՊԱՀԵԱՐԵՔ**

Փրկչի նման ապրելու և ուսուցանելու ձեր ջանքերում դուք անխուսափելիորեն ժամանակի պակաս կունենաք: Չհուսահատվեք, դրա փոխարեն թող ձեր սխալներն ու թերությունները ձեզ դարձնեն դեպի Երկնային Հայրը և Փրկիչը: Ուժ վերցրեք Քրիստոսի Քավությունից: Հիշեք, որ ապաշխարությունը միայն մեծ մեղքերը շտկելու համար չէ: Դա փոփոխություններ կատարելու գործընթաց է, որն անհրաժեշտ է, որ ամեն օր ավելի նմանվենք Երկնային Հորը և Փրկչին: Ի վերջո, սա հենց այն բանն է, որը դուք

փորձում եք ներշնչել ձեր դասարանի անդամներին անել:

**Խորհելու հարց** Քննելով իմ կյանքը՝ ի՞նչ փոփոխություններ է հուշում Հոգին ինձ, որ կատարեմ, որպեսզի ավելի նմանվեմ Հիսուս Քրիստոսին:

**Սուրբգրքյան օրհնակ** Ի՞նչ եմ ես սովորում ապաշխարության և ուսուցանման փոխկապակցվածության մասին Արվա 26.21-22 հատվածներում Ամմոնի խոսքերից:

1. Բոյր Բ. Փաքեր, *Teach Ye Diligently* (1975), 306.
2. Նիլ Ա. Սաքսվել, *“But a Few Days”* (address to Church Educational System religious educators, Sept. 10, 1982), 2, si.lds.org:

## Ստեղծեք Հոգին հրավիրող մթնոլորտ

Մտածեք այն վայրերի մասին, որտեղ ուսուցանել է Փրկիչը՝ Գալիլեայի ծովը, Կերպարանափոխության սարը, Երուսաղեմի և Բառնթիֆոսի տաճարները: Ի՞նչն էր դարձնում այդ վայրերը հարմար, որ Փրկիչն ուսուցանեց այնտեղ: Որպես կիրակնօրյա դասարանների կամ քվորումի ժողովների ուսուցիչ դուք կարող եք զգալ, որ քիչ վերահսկողություն ունեք այն միջավայրի վրա, որտեղ ուսուցանում եք: Բայց կան շատ բաներ, որ դուք կարող եք անել, թե դասարանի ֆիզիկական միջավայրի և թե հոգևոր մթնոլորտի հետ՝ Հոգին ձեր դասարան հրավիրելու համար:

### ՊԱՏՐԱՍՏԵՔ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅԻՆ

Թեպետ Հոգին կարող է ուսուցանել մեզ անկախ նրանից, թե մենք որտեղ ենք գտնվում, այնուամենայնիվ մեր միջավայրը կարող է խորապես նպաստել մեր սովորելուն և ճշմարտությունը զգալուն: Ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ եք զգում, երբ մտնում եք ձեր դասարան: Արդյոք այն կոկիկ ու մաքուր է: Արդյո՞ք նստատեղերի դասավորվածությունն այնպիսին է, որ սովորողները հեշտությամբ կշփվեն ձեր և միմյանց հետ: Արդյո՞ք յուրաքանչյուրը կարող է լսել ձեզ և դասարանի մյուս անդամներին: Արդյոք կա՞ն շեղող հանգամանքներ սենյակում, որոնք կղժվարացնեն սովորողների համար զգալ Հոգին:

Այդ հնարավոր շեղումները վերացնելուց բացի, մտածեք, թե ինչ կարող եք ավելացնել սենյակին՝ Հոգին հրավիրելու համար: Օրինակ, նախերգանքային երաժշտությունը (ներառյալ ձայնագրված օրհներգեր կամ այլ պատշաճ երաժշտություն) կարող է նպաստել համապատասխան տրամադրվածությանը, երբ դասարանի անդամները ժամանեն: Նկարները և տեսողական ցուցադրումները, բացի արդյունավետ ուսումնական միջոցների լինելուց, կարող են ստեղծել ընկերական, ջերմ մթնոլորտ:

Դուք կարող եք խնդրել Կիրակնօրյա Դպրոցի նախագահության մի անդամի կամ այլ օժանդակ կազմակերպության ղեկավարի օգնել ձեզ կատարելու այդպիսի պատրաստությունները ձեր դասարանում: Մա թույլ կտա ձեզ կենտրոնացնել ձեր ուշադրությունը դասարանի անդամների վրա:

Երբ ամեն ինչ արած կլինեք ձեր ուժերի ներածին չափով, որպեսզի ստեղծեք ուսուցանելու համար ճիշտ մթնոլորտ, հիշեք, որ մաքուր վարդապետությունն ուսուցանելը կարող է ցանկացած միջավայր դարձնել հզոր հոգևոր ուսման վայր:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ դասասենյակի ո՞ր մասնիկներն են նպաստում այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ Հոգին կարող է ներկա լինել: Ի՞նչ փոփոխություններ ինձ հարկավոր կլինի անել իմ դասասենյակում:

**Սուրբգրքյան օրինակ** Տիրոջ հրահանգը՝ հաստատելու «ուսման տուն» և «կարգ ու կանոնի տուն» (տես Վևու 88.119–20) ինչպե՞ս է վերաբերում որպես ուսուցիչ իմ կոչմանը:

### ՍՏԵՂԾԵՔ ՄԻՐՈ ՄՅՆՈՒՐՏ

Հոգին հրավիրող որոշ գործոնները քիչ են նկատելի՝ սովորողների տրամադրվածությունը, ինչպես են նրանք վերաբերվում միմյանց, ինչպես են նրանք զգում ավետարանը: Օգնեք

ձեր դասարանի անդամներին հասկանալ, որ նրանցից յուրաքանչյուրը ազդեցություն է ունենում դասարանի ոգու վրա: Քաջալերեք նրանց օգնել ձեզ ստեղծել բաց, սիրալիկ և հարգալից միջավայր, որպեսզի բոլորն իրենց ազատ զգան՝ կիսվելով իրենց փորձառություններով, հարցերով և վկայություններով:

Ձեր օրինակը հզոր ազդեցություն ունի սովորողների տրամադրվածության վրա, հատկապես երբ սովորեցնում եք երիտասարդներին և երեխաներին: Դասարանի անդամներին դիմավորեք անկեղծ ժպիտով ու ձեռքով ողջունելով, երբ նրանք ներս են մտնում: Ձեր խոսքերով և գործողություններով ցույց տվեք նրանց, որ դուք սիրում եք ավետարանը և որ հոգ եք տանում նրանց հոգևոր աճի համար:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ կարող եմ անել իմ դասարանի անդամները, որպեսզի հավաստիանան, որ մեր ուսման միջավայրում յուրաքանչյուրն իրեն ազատ ու հարմարավետ է զգում: Կա՞ ինչ-որ բան, որ ես պետք է անեմ՝ ավելի լավ օրինակ լինելու համար:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ արեց Փրկիչը, որպեսզի իր աշակերտները սովորեին «իրար [սիրել]» (Հովհաննես 13.34):

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներին կիրառել այս բաժնի գաղափարները՝ ստեղծել ջերմ, հրավիրող մթնոլորտ սենյակում, որտեղ հանդիպում եք:

Կարող եք հանձնարարել ուսուցիչներից մեկին պատրաստել սենյակը ուսուցիչների խորհրդի հաջորդ հանդիպման համար:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Օգտվեք ինքնաբերական ուսուցողական պահերից

Փրկչի ուսուցումներից շատերը տեղի չեն ունեցել ժողովարանում, այլ ոչ ֆորմալ, առօրյա միջավայրում՝ Իր աշակերտների հետ հաց ուտելուց, ջրհորից ջուր հանելուց կամ թզենու կողքով անցնելուց: Նույնիսկ եթե դասարանի անդամների հետ շփվելու ձեռք միակ հնարավորությունը կիրակի օրն է, փնտրեք նշաններ, որոնք նրանք պատրաստ են սովորելու, նույնիսկ եթե նրանք պատրաստ են սովորել մի բան, որը դուք չէիք պլանավորել:

### ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ԵՂԵՔ:

Զնայատեսաբար ուսուցողական պահերը շատ արագ են անցնում, ապա կարևոր է օգտվել դրանցից, երբ այդպիսիք առաջանում են: Օրինակ, դասարանի անդամի մեկնաբանությունը մի նոր ֆիլմի մասին, որը վտանգավոր ուղերձ է պարունակում, կարող է հարմար առիթ լինել, եթե Հոգին առաջնորդում է, հակադրելու Տիրոջ չափանիշները աշխարհիկի հետ: Տեղատարափ անձրևը կարող է առիթ լինել խոսելու այն մասին, թե ինչպես է ավետարանը ծածկում մեզ կյանքի շատ փոթորիկներից: Այս գրույցները հասկապես արդյունավետ են հենց այն պահին, երբ առիթը ստեղծվում է, ոչ թե հաջորդ անգամ, երբ ձեռնարկի թեման է թելադրում դա: Քանի որ այդպիսի պահերն անսպասելի են, դուք չեք կարող պատրաստվել դրանց, ինչպես դասին եք պատրաստվում: Այնուամենայնիվ, դուք կարող եք պատրաստել *ձեզ*, լինելով «միշտ պատրաստ» (Ա Մարկ 3.15) և զգայուն Հոգու հանդեպ: Փրկչի չը նայում ուսուցանությանը որպես շաբաթը մեկ անգամ իր դերը կատարելուն. ուսուցիչ լինելը Նրա էության մի մասն էր: Եթե դուք ձեզ տեսնում եք որպես ավետարանի ուսուցիչ բոլոր ժամանակներում, դուք կարող եք ցանկացած պահ օգտագործել ուսուցանելու համար:

**Խորհելու հարցեր** Ուսուցանելու ի՞նչ հնարավորություններ ես ունեմ, որոնք կարող են պլանավորված դասից դուրս լինել: Ի՞նչ ես կարող եմ անել, վստահ լինելու համար, որ ես միշտ պատրաստ եմ բաց չթողնել այդպիսի առիթները:

**Սուրբգրքյան օրինակ** Ալմայի այս խոսքերը, որ մենք պետք է վկաներ կանգնենք «բոլոր ժամանակներում» և «բոլոր տեղերում» (Մոսիա 18.9) ինչպե՞ս են վերաբերում ինձ՝ որպես ուսուցիչ (տես նաև Վևու 84.85):

### ՆՐԱՆԿԱՍ ԵՂԵՔ

Ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ է տեղի ունենում ձեր դասարանի անդամների կյանքում, դուք ուսուցանելու հրաշալի հնարավորություններ կգտնեք: Օրինակ, մի դեռահաս, որը դժվարին որոշում կայացնելու շեմին է, պատրաստ կլինի սովորել, թե ինչպես ստանալ անձնական հայտնություն, կամ մի երեխա, որը վախենում է ինչ-որ բաներից, պատրաստ է սովորել որպես Մխիթարիչ Մուրբ Հոգու մասին: Երբ սովորողները մեկնաբանություններ են անում կամ հարցեր տալիս, դա նույնպես կարող է հանգեցնել ուսուցողական պահերի:

**Խորհելու հարց** Ե՞րբ եմ ես օրինվել ընտանիքի որևէ անդամի կամ ուսուցիչ կողմից, ով նկատել է, որ ես պատրաստ եմ ինչ-որ բան սովորել:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ էր Փրկչը նկատել փարիսեցիների ու դպիրների մոտ, ինչի հետևանքով Նա ուսուցանեց նրանց Ղուկաս 15 գլխի առակները (տես հատվածներ 1-2):

### ԵՂԵՔ ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻ

Ուսուցողական լավագույն պահերից մի քանիսը ծագում են որպես հարց կամ մտահոգություն դասարանի անդամի սրտում: Մակայն, եթե դուք կարծես շատ զբաղված եք, շատ խիստ եք կամ չափից ավել եք կենտրոնացած պատրաստված նյութը մատուցելու վրա, նրանք, ում դուք ուսուցանում եք հարմար չեն զգա՝ կիսվելու իրենց հարցերով կամ մտահոգություններով ձեզ հետ: Պատրաստ եղեք մի կողմ դնել այն, ինչ դուք պլանավորել եք, դրդվելով Հոգուց, և լսեք դասարանի անդամների մտահոգությունները: Ձեր խոսքերով ու գործողություններով հասկացրեք նրանց, որ դուք հաճույքով կլսեք նրանց:

**Խորհելու հարցեր** Արդյոք գիտե՞ս այն մարդիկ, ում ես ուսուցանում եմ, որ ես հետաքրքրված եմ իրենց հարցերով: Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ հաղորդել իմ հետաքրքրված լինելը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Մարկոս 5.22-34, 6.30-44, և 3 Նեփի 17 հատվածներից Փրկչի պատրաստակամության մասին ուսուցանելու և օրհնելու մարդկանց, երբ նրանք Իր կարիքն ունեն:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք: Ուսուցողական լավագույն պահերից մի քանիսը կարող են ստեղծվել հանդիպման այս մասի ընթացքում:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Խորհրդեք ուսուցիչներին պատրաստել անցյալ շաբաթվա ընթացքում նրանց կատարած սովորական միջոցառումների մի ցուցակ, (ինչպես՝ տնային գործեր կատարելը, ընտանիքի անդամների հետ խաղ խաղալը, ֆիլմ դիտելը կամ սպորտային

միջոցառման մասնակցելը, կամ մթերային խանութում գնումներ կատարելը): Հրավիրեք նրանց քննարկել, թե այս միջոցառումներն ինչպես կարող են օգտագործվել որպես ուսուցանելու հնարավորություններ:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Ծրագիր կազմեք

Տերը պատվիրել է. «Կազմակերպվեք. նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան» (Վևու 88.119): Ուսուցանելուց առաջ ուսուցման ծրագիր կազմելը կօգնի ձեզ հայտնաբերել ավետարանի այն սկզբունքները, որոնք ձեր կարծիքով լավագույնս կհամապատասխանեն ձեր սովորողների կարիքներին, ինչպես նաև հայտնաբերել միջոցներ, որոնք կօժանդակեն այդ սկզբունքներին: Դա նաև թույլ կտա Հոգուն առաջնորդել ձեզ հանգիստ պայմաններում: Այս աշխատանքը նախապես անելու դեպքում, դասավանդելիս դուք կկարողանաք կենտրոնանալ սովորողների վրա, ոչ թե նրա, թե ինչ եք ասելու հաջորդիվ: Դուք նաև ավելի պատրաստ կլինեք արձագանքելու հոգևոր հուշումներին՝ ձեր ծրագիրն անհրաժեշտության դեպքում փոփոխելու առումով:

### ԿԵՆՏՐՈՆԱՑԵՔ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ, ՈՐՈՒՔ ԿՕՐԸՆԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

Ձեր ուսուցման ծրագրի կենտրոնում պետք է լինեն այն մարդկանց կարիքները, ում դուք ուսուցանում եք և ավետարանի սկզբունքները, որոնք կլուծեն այդ կարիքները: Աղոթքով ուսումնասիրելով սուրբ գրությունների հատվածները և մարգարեական ուսմունքները, որոնք ձեզ հանձնարարված է ուսուցանել, ինքներդ ձեզ հարց տվեք. «Ի՞նչ կա այստեղ, որը հատկապես իմաստալից կլինի իմ դասարանի անդամների համար»: Օրինակ, երբ ուսուցանում եք Հիսուս Քրիստոսի Քավության մասին, կարող եք զգալ, որ դասարանի որոշ անդամներ դժվարանում են ներել իրենք իրենց, նույնիսկ երբ ապաշխարել են: Կարող է հուշում զգաք՝ կիսվելու նրանց հետ այս խոստումով Եսայիա 1.18-ից. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձյունի պես պիտի սպիտականան:»

Թույլ տվեք Հոգուն առաջնորդել ձեր պլանավորումը Ձեզ համար շատ անսպասելի կերպով Նա կարող է առաջնորդել ձեզ դեպի դասի ձեռնարկում զետեղված սուրբ գրության հատվածները, մարգարեական ուսմունքները և գաղափարները, որոնք իմաստալից կլինեն դասարանի անդամների համար:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ սկզբունքներ են ես ուսուցանելու զալիք դասերին: Այս սկզբունքներից որո՞նք, իմ զգալով, կարող են լավագույնս համապատասխանել իմ դասարանի անդամների կարիքներին:

**Սուրբգրքյան օրինակ.** Ավմա 39–42 պարունակում է Ալմայի խորհուրդն իր որդի Կորիանթոնին: Ի՞նչ կարիքներ է Ալման զգացել իր որդու մեջ: Ի՞նչ սկզբունքներ է նա ոգեշնչվել ուսուցանելու: Ի՞նչ կարող եմ սովորել Ալմայի օրինակից:

### ԳՏԵՔ ԱՅՐ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

Կազմելով ձեր ուսուցման ծրագիրը եղանակներ փնտրեք օգնելու սովորողներին հասկանալ ավետարանի այն սկզբունքները, որոնք դուք ծրագրել եք քննարկել: Սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը ձեր հիմնական միջոցներն են. կարդացեք դրանք մինչ օժանդակ նյութերին անցնելը: Ո՞ր սուրբ գրություններն են օգնում ուսուցանել սկզբունքը: Արդյոք այդ սկզբունքի մասին խոսվե՞լ է վերջին գերագույն համաժողովի ելույթներում: Ի՞նչ հարցեր կտաք, որոնք կօգնեն սովորողներին խորհել սկզբունքի մասին ու կիրառել այն: Կա՞ն արդյոք ուրիշ միջոցներ, որոնք կօգնեն օժանդակել այդ սկզբունքին. պատմություններ, առարկայական դասեր, նկարներ, տեսանյութեր, օրհներգեր կամ մանկական երգեր: Այդպիսի շատ միջոցներ առաջարկվում են Եկեղեցու ուսումնական ծրագրերի նյութերում,





Եկեղեցու ամսագրերում կամ LDS.org-ում: Յուրաքանչյուր սկզբունքի համար, որն ուսուցանելու էք, պատրաստեք մի քանի հարց և նյութեր, որոնք կարող եք օգտագործել: Կարող է անհրաժեշտ չլինել, որ օգտագործեք դրանք բոլորը, բայց լավ կլինի պատրաստ լինել օգտագործելու դրանք հարմար առիթի դեպքում:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ միջոցներ եմ ես տեսել մյուս ուսուցիչներին օգտագործելիս՝ ավետարանի սկզբունքն արդյունավետորեն ուսուցանելու համար: Ես ի՞նչ միջոցներ կարող եմ օգտագործել:

**Սուրբգրքյան օրհնակ** Ի՞նչն է տպավորել ինձ այն պատմությունից, թե ինչպես է Փրկիչը պարզաբանում սկզբունքը Ղուկաս 10.25–37 հատվածներում:

Տես նաև «Լարդապետությունն ուսուցանելու համար օգտագործեք երաժշտություն, պատմություններ և նկարներ» բաժինը:

**ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍ ԵՂԵՔ  
ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼՈՒ**

Աղոթքով նախապատրաստվելն ու կազմակերպված դասերի ծրագրերը կարող են մեծապես օրհնել ձեր աշակերտներին, բայց դուք պետք է պատրաստակամ լինեք դասի ժամանակ հարմարեցնելու դասի ծրագիրը Հոգու հրահանգներին: Մանրակրկիտ ուշադրություն դարձրեք նրանց մեկնաբանություններին ու հարցերին, ում դուք ուսուցանում եք: Հոգին կարող է հուշել ձեզ որևէ սկզբունքի վրա ավելի շատ ժամանակ ծախսել, քան դուք ծրագրել էիք, կամ խոսել մի մտահոգության շուրջ, որը ձեր դասի ծրագրով նախատեսված չէր:

Հիշեք, որ ձեր ուսանողների հոգևոր աճն ավելի կարևոր է, քան ձեր ծրագրած ամբողջ նյութը ներկայացնելը: Եվ այդ հոգևոր աճի մեծ մասը տեղի կունենա դասարանից դուրս: Ծրագրեք հարցեր, որոնք կբաջալերեն սովորողներին կիսվել նրանով, թե ինչ են իրենք սովորում ինքնուրույն և իրենց ընտանիքներում: Որքան ջանասիրաբար նախօրոք ուսումնասիրեք, այնքան պատրաստված կլինեք հարմարեցնելու նյութը անհատների կարիքներին և աջակցելու նրանց այդ կարիքների մեջ:

**Խորհելու հարց** Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի համոզված լինեմ, որ ուսուցանելիս հետևում եմ Հոգու հուշումներին:

**Սուրբգրքյան օրհնակ** Ի՞նչ եմ ես սովորում Վարդապետություն և Ուխտեր 11.21-ից ուսուցանման մեջ Հոգու դերի մասին:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՒՋԱՐԿՆԵՐ**

Կազմելով ձեր ծրագիրը մտածեք, թե ինչ կիրավիրեք անել դասարանի անդամներին, որպեսզի օգնեք նրանց սովորել սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից: Ստորև որոշ գաղափարներ կան, որոնք կարող եք կիրառել գրեթե ցանկացած սուրբ գրության կամ թեմայի դեպքում: Լրացուցիչ գաղափարներ կարելի է գտնել Եկեղեցու ուսումնական ծրագրերի նյութերում: Լավագույն գաղափարները, այնուամենայնիվ, կտրվեն ձեզ Հոգու կողմից, երբ խորհեք նրանց կարիքների մասին, ում ուսուցանում եք:

Դասարանի անդամները կարող են.

- Կազմել սուրբ գրությունների հատվածներում իրենց գտած սկզբունքների և ճշմարտություն-

ների ցանկը: Այդ հատվածների ո՞ր բառերը, արտահայտությունները և օրինակներն են օգնում նրանց հասկանալ այդ սկզբունքները:

- Փնտրել հարցերի պատասխանները սուրբ գրությունների որևէ հատվածում կամ զերագույն համաժողովի ելույթում:

- Կիսվել, թե ինչպես կուսուցանեն որևէ սկզբունք իրենց ընտանիքի անդամին կամ ընկերոջը: Ինչպե՞ս նրանք կուսուցանեն սկզբունքը մի երեխայի: Մեկին, ով ուրիշ հավատքից է:

- Համեմատել երկու կամ ավել սուրբ գրության պատմություններ կամ հատվածներ: Ի՞նչ հասկացողություն են նրանք ստանում այդ համեմատությունից:

- Գտնել և երգել օրհներգեր ավետարանի որևէ սկզբունքի մասին:

- Ամփոփել սուրբ գրությունների որևէ հատված իրենց սեփական բառերով:

- Գտնել նկարներին համապատասխանող հատվածները: Ինչպե՞ս են այս նկարները նրանց օգնում ավելի լավ հասկանալ սուրբ գրության կոնկրետ հատվածը:

- Դերախաղով ներկայացնել ավետարանի սկզբունքին վերաբերող մի իրավիճակ:

- Դիտել սովյալ սկզբունքին վերաբերող Եկեղեցու միջոցները, ինչպիսիք են DVD-ները կամ տեսահոլովակները, որոնք առկա են LDS.org-ում:

- Բացատրել, թե ինչպես է նկարը կամ առարկան վերաբերում ավետարանի սկզբունքին:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿ**

Ուսուցման ծրագիր կազմելու բազմաթիվ եղանակներ կան: Օգտագործեք այն, որը լավագույնն է ձեզ համար և այն անձանց՝ ում դուք ուսուցանում եք: Մտորեն տրված է հնարավոր մոտեցումներից մեկը:

**Հրավիրեք կիսվելու.** Կարող եք սկսել քաջալերելով դասարանի անդամներին միմյանց հետ կիսվել մտքերով ու փորձառություններով: Նրանք կարող են կիսվել տպավորություններով, որոնք ստեղծվել են սուրբ գրությունները կարդալիս, փորձառություններով, որ ունեցել են սուրբ գրություններում ուսուցանվող սկզբունքները կիրառելիս, կամ այս շաբաթվա թեմաների շուրջ իրենց ունեցած հարցերով:

**Ուսուցանեք վարդապետությունը.** Մտածեք, թե ինչպես կարող եք օգնել դասարանի անդամներին ավետարանի ճշմարտություններն ինքնուրույն հայտնաբերել: Դա կօգնի, որ նախապես կազմակերպեք ձեր մտքերն ու նյութերը: Օրինակ, եթե ձեր թեման էր քահանայության վերականգնումը, դուք կարող էիք հետևյալ մոտեցումով հանդես գալ.

Սկզբունքներ	Աջակցող սուրբ գրություններ	Հարցեր	Ուսուցողական օժանդակ միջոցներ
Իր եկեղեցին հիմնադրելուց հետո Հիսուս Քրիստոսը քահանայության իշխանություն տվեց Իր Առաքյալներին:	Մատթեոս 10.1, Գործք 2.37–47, Եբրայեցիս 5.4	Ի՞նչ են ձեզ սովորեցնում այս սուրբ գրությունները քահանայության իշխանության կարևորության մասին:	Նկար. Քրիստոսը կարգում է Իր Տասներկու Առաքյալներին
Համատարած անարդարության, ներառյալ Առաքյալներից շատերի սպանության պատճառով, Տերը երկրի վրայից վերցրեց քահանայության իշխանությունը:	Ամովս 8.11–12, Մատթեոս 24.9–11, Գործք 20.29–30, 2 Թեսաղոնիկեցիս 2.1–4, Մորմոն 1.13–14	Ուրացության ի՞նչ ապացույցներ եք դուք տեսել աշխարհում:	Համեմատություն. Ենթադրենք դուք մի սենյակում եք, որը լուսավորվում է 12 լույսերով և այդ լույսերը միաժամանակ անջատվում են: Ինչո՞ւ է սա նման Առաքյալներին և քահանայության իշխանության կորստին:
Քահանայությունը վերականգնվեց Ջոզեֆ Սմիթին նրանց կողմից, ովքեր հնուց կրում էին այն:	Վևու 13.1, 27.12–13, 110, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.68–72	Երբ ուսումնասիրեցիք քահանայության վերականգնումը, ի՞նչ ուսուցանեց ձեզ Հոգին:	Տեսանյութ. “Restoration of the Priesthood” (LDS.org)
Այսօր քահանայության օրհնությունները մատչելի են բոլորին:	Վևու 1.20, 84.19–20	Ինչպե՞ս է քահանայությունը օրհնել ձեզ և ձեր ընտանիքին:	«Լսեք, ազգեր բոլոր» Օրհնեղգեր, հ. 264

**Քաջալերեք կիրառել.** Դասի ընթացքում մի պահ քաջալերեք դասարանի անդամներին մտորել դասի ժամանակ իրենց ունեցած հոգևոր զգացումների շուրջ և թե նրանք ինչ են ոգեշնչվել անել՝ իրենց սովորածի շնորհիվ:

**Քաջալերեք ավելի ուսումնասիրել.** Հաճախ օգտակար է տեղյակ պահել դասարանի անդամներին, թե նրանք ինչ են քննարկելու հաջորդ շաբաթվա ընթացքում և հրավիրել նրանց նախապես տանը պատրաստվել:

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:**

Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցման առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Խմբով միասին աշխատելով պատրաստեք ծրագրի մի նմուշ առաջիկա դասի համար, հարկ եղած դեպքում դիմելով համապատասխան ուսումնական ձեռնարկին: Կարող եք օգտագործել այս բաժնի ծրագրի օրինակը կամ մեկ այլ ծրագիր: Հրավիրեք ուսուցիչներին կազմել դասի ծրագիր

իրենց հաջորդ դասի համար և բերել այն ուսուցիչների խորհրդի հաջորդ ժողովին, մյուս ուսուցիչներից կարծիք իմանալու համար:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

### Ուսուցանելը վարդապետությունը

(Handbook 2: Administering the Church [2010], 5.5.4)

Փրկիչն ասել է. «Իմ վարդապետությունն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է» (Հովհաննես 7.16): Հոր վարդապետությունը բաղկացած է հավերժական ճշմարտություններից, որոնք հետևողականորեն կիրառելու դեպքում տանում են դեպի վեհացում: Այս ճշմարտությունների կենտրոնում է Փրկչի Քավությունը և դրա կարևոր դերը փրկության ծրագրում: Փրկիչը պատվիրել է մեզ «միմյանց ուսուցանել արքայության վարդապետությունը» (Վևու 88.77): Երբ դա անում ենք, Սուրբ Հոգին վկայություն է բերում վարդապետության ճշմարտացիության մասին և ոգեշնչում մարդկանց ապրել ըստ դրա: Վարդապետությունը չի փոխվում, այն միայն փոխում է մեզ և նրանց, ում մենք ուսուցանում ենք:

#### ԿԵՆՏՐՈՆԱՑՐԵՔ ԶԵՐ ՌՈՍՈՒՑՈՒՄԸ ԶՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է. «Ճշմարիտ վարդապետությունը, եթե հասկացվում է, փոխում է վերաբերմունքն ու վարքը:»<sup>1</sup> Որպես ավետարանի ուսուցիչ, դուք կարող եք վստահ լինել, որ «Աստծո խոսքի ուժը» ունի «ավելի զորավոր ազդեցություն մարդկանց մտքերի վրա, քան... որևէ այլ բան» (Ավմա 31.5): Եթե դուք կենտրոնանաք սովորողներին ուղղակի զվարճացնելու կամ զբաղված պահելու վրա, դուք կթերանաք հավերժական ճշմարտությունները ուսուցանելու հարցում, որոնք կօգնեն սովորողներին իմաստալի փոփոխություններ անել իրենց կյանքում:

Եղանակներից մեկը, թե ինչպես պարզել, որ դուք ուսուցանում եք ճշմարիտ վարդապետությունը, մտածելն է, թե ինչպիսի կապ ունի ձեր ուսուցանածը Քրիստոսի վարդապետության հետ, որն ամփոփված է 2 Նեփի 31 և 3 Նեփի 27.16–21 հատվածներում և հանդիպում է ամբողջ սուրբ գրություններում: Շարունակաբար հարցրեք ինքներդ ձեզ. «Այն, ինչ ես ուսուցանում եմ, ինչպե՞ս է օգնում իմ դասարանի անդամներին կառուցել հավատք առ Քրիստոս, ապաշխարել, Աստծո հետ ուխտեր կապել ու պահել և ստանալ Սուրբ Հոգին»:


**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս կօրհնվեն նրանք, ում ես ուսուցանում եմ, եթե ապրեն Քրիստոսի վարդապետությամբ (տես 3 Նեփի 27.16-21):

Ինչպիսի՞ն կլինեն հավերժական հետևանքները, եթե նրանք չապրեն Քրիստոսի վարդապետությամբ:

**Սուրբգրյալն օրինակ** Համաձայն Մոսիա 5.2–5-ի, ի՞նչը դրդեց փոխվել Բենիամին թագավորի ժողովրդին: Ի՞նչ ուսուցանեց նրանց Բենիամին թագավորը (տես Մոսիա 2–5): Բենիամին թագավորի ուսուցանած բաներն ինչպե՞ս էին կապված Քրիստոսի վարդապետության հետ:

#### ՌՈՍՈՒՑԱՆՈՒՄԸ ՎԱՐԵՔ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵԼՍԻ ԵՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ:

Երբեմն սովորողները, հատկապես երիտասարդները, մտածում են, թե ինչպես են ավետարանի սկզբունքները վերաբերում իրենց, կամ թե ինչու նրանք պետք է հնազանդվեն որոշակի պատվիրանների: Այնուամենայնիվ, եթե նրանք հասկանան Երկնային Հոր հավերժական ծրագիրը, որը նախատեսված է Իր զավակների երջանկության համար, ապա ավետարանի սկզբունքների ու պատվիրանների պատճառները պարզ են դառնում և ուժեղանում է հնազանդվելու շարժառիթը: Օրինակ, եթե մեկը հասկանում է հավերժական ամուսնության վարդապետությունը և Երկնային Հորը նմանվելու մեր ներուժը, ապա նա պատճառ ունի հնազանդվելու մաքրաբարոյության օրենքին, որն ավելի զորեղ է, քան անցանկալի հղիությունից կամ հիվանդություններից խուսափելու ցանկությունը:



**Խորհելու հարցեր** Ի՞նչ սկզբունքներ են ես ուսուցանելու գալիք դասերին: Ինչպե՞ս կարող եմ օգնել դասարանի անդամներին հասկանալ փրկության ծրագրի համատեքստի սկզբունքները:

**Սուրբգրյալն օրինակ** Ավման ուսուցանել է, որ Աստված պատվիրանները տվել է Իր ժողովրդին «փրկագնման ծրագիրը նրանց հայտնի դարձնելուց հետո» (տես Ավմա 12.32): Ինչպե՞ս կարող եմ ես հետևել այս օրինակին, երբ ուսուցանում եմ:

#### ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԵՐՋՈՒՑՈՐԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ԽՈՍՔԵՐԸ:

Տերը պատվիրել է մեզ, որ «միմյանց պետք է ուսուցանենք» արքայության վարդապետությունը» (Վևու 88.77) և օգտագործենք սուրբ գրությունները՝ «ուսուցանելու» [Նրա] ավետարանի սկզբունքները» (Վևու 42.12): Սուրբ

#### ԱԶԱԿՑԵՔ ՏԱՆԸ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹԻՆ

Եթե մարդիկ, ում դուք ուսուցանում եք, սովորում են ավետարանի վարդապետությունները միայն ձեր դասին, նրանք չեն ունենա իրենց անհրաժեշտ հոգևոր սնուցումը: Ամենակարևոր

բանը, որ դուք կարող եք անել, որպեսզի օգնեք սովորողներին իրենց հավատքը կառուցել և ավելի քրիստոսանման դառնալ, ոգեշնչելն է նրանց սովորել սուրբ գրություններից ինքնուրույն և

իրենց ընտանիքներում: Տես գաղափարներ «Աջակցեք տանը ավետարանը սովորելուն»՝ այս աղբյուրում:



գրությունները և վերջին օրերի մարգարեների ու առաքյալների խոսքերը մեր ուսուցանած ճշմարտությունների աղբյուրն են: Ամեն հնարավորության դեպքում ոգեշնչեք նրանց, ում ուսուցանում եք, դիմել Աստծո խոսքին՝ առաջնորդության, հարցերի պատասխանները ստանալու և աջակցության համար: Եթե սովորողները «անվե[ն] Քրիստոսի խոսքերով», ապա այնտեղ գտած վարդապետությունը «կաս[ի] [նրանց] բոլոր բաները, որ [նրանք] պետք է անեք» (2 Նեփի 32.3):

**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս ես կարող եմ ոգեշնչել նրանց, ում ուսուցանում եմ, «անվե[ն] Աստծո խոսքով: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց օգտագործել ծանոթագրությունները, Թեմատիկ Ուղեցույցը և այլ ուսումնական օժանդակ նյութեր, որպեսզի նրանք ավելի լավ հասկանան սուրբ գրությունները:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ օրինակներ ես կարող եմ գտնել, որտեղ Փրկիչն օգտագործում էր սուրբ գրությունները՝ ավետարանի ճշմարտություններն ուսուցանելու և դրանց մասին վկայելու համար (տես, օրինակ, Մատթեոս 12.1-8, և Ղուկաս 4.16-21):

**Օգնե՛ք սովորողներին սորբ գրութեան հարցերը:**

Նեփին ասել է. «Ես բոլոր սուրբ գրությունները նմանեցնում էի մեզ, որպեսզի դա լիներ մեր օգտի և ուսման համար» (1 Նեփի 19.23): Ավետարանի այդ նույն ճշմարտությունները, որոնք ոգեշնչել և աջակցել են Աբրահամին, Եսթերին, Լեթիին և Ջոզեֆ Մոնթին, կարող են օգնել նրանց, ում դուք ուսուցանում եք, դիմակայել մեր ժամանակների դժվարություններին: Որպեսզի օգնեք սովորողներին նմանեցնել սուրբ գրություններն իրենց, հրավիրեք նրանց մուտք անել իրենց

անունը հաստատելի մեջ կամ խորհել, թե ինչպե՞ս է սուրբ գրության որևէ պատմություն առնչվում իրենց կյանքի հետ:

**Խորհելու հարց** Սուրբ գրությունների ո՞ր հատվածներն են ինձ մտահղացում տվել իմ ունեցած դժվարության վերաբերյալ:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկիչը նմանեցնում սուրբ գրությունները այն մարդկանց, ում Նա ուսուցանում էր (տես, օրինակ, Ղուկաս 4.24-32):

**Օգնե՛ք սովորողներին գտնել սորբգրքյան ճշմարտութեան հարցերը:**

Մինչ սովորողները կկարդան սուրբ գրությունների հատվածները դասարանում, կարող եք խնդրել նրանց, որ փնտրեն այդ հատվածներում ուսուցանվող որոշակի ճշմարտությունները: Երբեմն այդպիսի ճշմարտությունները հստակ են արտահայտված, երբեմն էլ դրանք ենթադրվում են: Օրինակ, կարող եք ասել. «Երբ կարդաք Վարդապետություն և Ուլիստեր 11.12-14 հատվածները, փնտրեք ճշմարտություններ Սուրբ Հոգու մասին»:

**Խորհելու հարց** Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի օգնեմ դասարանի անդամներին սովորել, թե ինչպե՞ս գտնել ավետարանի ճշմարտությունները սուրբ գրություններում:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչո՞ւ էր Փրկիչը ցանկանում, որ նեփիացիները քննեին սուրբ գրությունները և կարդային մարգարեների խոսքերը (տես 3 Նեփի 23.1-5):

▶ Տես նաև «*Searching the Scriptures*» տեսանյութը (LDS.org):



**ՎԿԱՅԵՔ ՃՇՄԱՐՈՒՑ ՎԱՐՂԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:**

Փրկիչն «իշխանություն ունեցողի պես էր սովորեցնում նորանց, և ոչ թե դպիրների պես» (Մատթեոս 7.29): Փրկիչի անձնական վկայությունը իշխանություն էր հաղորդում Նրա խոսքերին և օգնում էր նրանց, ում Նա ուսուցանում էր, ճանաչել, որ Նա ուսուցանում է հավերժական ճշմարտություններ: Եթե ճշմարիտ վարդապետության մասին վկայություն բերեք, ապա Հոգին կհաստատի վարդապետության ճշմարտությունը ձեր ուսանողների սրտերում:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս է իմ վկայությունը ամրապնդվել մեկ այլ անձի գորավոր վկայության շնորհիվ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Ալմայի օրինակից, որը վկայություն է բերում ճշմարտության մասին (տես Ալմա 5.43-48):

1. Բոյդ Զ. Փաքեր, «Do Not Fear,» Ensign կամ Liahona, մայ. 2004, 79:

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվե՛ք և խորհուրդ արե՛ք միասին:**

Սկսե՛ք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվե՛ք:

**Սովորե՛ք միասին:** Հրավիրե՛ք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձե՛ք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառե՛ք:** Հրավիրե՛ք ուսուցիչներին կիսվել իրենց սիրած մի քանի հատվածներով: Քննարկե՛ք տարբեր եղանակներ՝

թե ինչպե՞ս կարող է յուրաքանչյուր հատվածը նմանեցվել սովորողների կյանքին:

**Պատրաստվե՛ք:** Միասին որոշե՛ք հաջորդ հանդիպման թեման և հրավիրե՛ք ուսուցիչներին պատրաստվել:

## Վարդապետությունն ուսուցանելու համար օգտագործեք երաժշտություն, պատմություններ և նկարներ

Երբ Աստված ստեղծեց երկիրը, Նա լցրեց այն զանազան կենդանիներով, բույսերով, բնության հրաշալիքներով՝ մեր կյանքին հաղորդելով առատություն ու գեղեցկություն: Փնտրեք եղանակներ, որոնցով կարող եք զանազանություն հաղորդել ավետարանն ուսուցանելու ձեր ջանքերին: Այդպես անելը առատություն ու գեղեցկություն կավելացնի սովորողների փորձին, ինչպես նաև կօգնի ձեզ օգնել սովորողներին իրենց տարբեր կարիքներով հանդերձ: Մտածեք, թե երաժշտություն, պատմություններ, նկարներ և արվեստի այլ տեսակի գործեր օգտագործելն ինչպես կարող է հրավիրել Հոգին, պարզաբանել ավետարանի սկզբունքները հիշվող ձևով և օգնել սովորողներին ավետարանը կիրառել իրենց առօրյա կյանքում: Հիշեք, որ այս միջոցները չպետք է դասի կենտրոնում լինեն, դրանք միայն օգնելու համար են, որ ավելի արդյունավետորեն ուսուցանեք ավետարանի վարդապետությունները:

### ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀՈԳԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առաջին Նախագահությունն ասել է. «Երաժշտությունն անսահման զորություն ունի մեզ առաջ շարժելու դեպի ավելի մեծ հոգևորություն, և ավետարանի հանդեպ նվիրվածություն»: <sup>1</sup> Օրհներգ երգելը կամ այն լսելը կարող է ակնածալից զգացում առաջացնել և հրավիրել Հոգին: Օրհներգերը նաև կարող են ուսուցանել ավետարանի սկզբունքները: Օրինակ, «Ես հավատում եմ Քրիստոսին» (*Hymns*, no. 134) կամ *Ջորջ Ֆրիդերիկ Հենդելի Ալելուիա երգը* կարող է ոգեշնչել մի քննարկում Փրկչի աստվածային դերերի և տիադոսների մասին: Մտածեք, թե ինչպես կարող եք երաժշտությունը դարձնել ձեր դասերի անբաժան մասը: Օրինակ, կարող եք նվագել որևէ օրհներգի մեղեդին կամ հրավիրել մի ընտանիքի կամ երեխաների Միության մի քանի երեխաների երգել դասարանում:

**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս է ազդել իմ վկայության վրա սուրբ երաժշտությունը: Ինչպե՞ս կարող է այն օրհնել նրանց, ում ես ուսուցանում եմ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ հնարավոր պատճառներով էին Հիսուսն ու Իր աշակերտները օրհներգ երգել մինչև Գեթսեմանիի պարտեզ գնալը (տես Մատթեոս 26.30, տես նաև Կողոսացիս 3.16, Վևու 25.12):

### ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍԿԶԲՈՒՔՆԵՐՆ ՌՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ:

Փրկիչը հաճախ էր օգտագործում պատմություններ և առակներ, որպեսզի օգնեք Իր լսողներին հասկանալ, թե ինչպես կիրառել ավետարանի սկզբունքներն իրենց ամենօրյա կյանքում: Նրա ուսմունքները հարուստ են հղումներով ձկներին, սերմերին, բանալիներին, բաժակներին, և շատ այլ կենցաղային առարկաներին: Երբ նախապատրաստվում եք ուսուցանելուն, մտաբերեք ձեր կյանքից, ինչպես նաև ձեր դասարանի անդամների առօրյայից, օրինակներ և պատմություններ, որոնք կյանքի են կոչում ավետարանի սկզբունքները: Կարող եք քննարկել, օրինակ, թե Մուրբ Հոգին ինչով է նման կողմնացույցի, լապտերի կամ տաք վերմակի: Վեհացնող մեջբերումները լավ գրականությունից նույնպես կարող են հարստացնել դասը: Որքան հնարավոր է հաճախ խնդրեք սովորողներին կիսվել իրենց անձնական պատմություններով և փորձառություններով:

**Խորհելու հարցեր** Ի՞մ կյանքի ո՞ր փորձառություններն են օգնել ինձ հասկանալ ավետարանի սկզբունքները: Ինչպե՞ս կարող եմ քաջալերել սովորողներին կիսվել իրենց փորձառություններով:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչո՞ւ էր Փրկիչն օգտագործում առակներ,

ինչպես օրինակ՝ Մատթեոս 13.44–48 հատվածներում:

### ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԱՐՎԵՍԱԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արվեստը, ներառյալ նկարները, տեսանյութերն ու թատերականացումները, կարող են ներգրավել սովորողներին և պատմություններն ավելի հիշարժան դարձնել: Արվեստը, որը դուք օգտագործում են, պետք է ավելի լինի, քան զարդարանք է, այն պետք է օգնի սովորողներին հասկանալ ավետարանի վարդապետությունները: *Ավետաբանի արվեստի գիրքը* և LDS Media Library-ն LDS.org կայքում պարունակում են շատ նկարներ և տեսանյութեր, որոնք կօգնեն սովորողներին պատկերավոր դարձնել գաղափարներն ու իրադարձությունները: Հերթի Անդերսենի *Երկրորդ Գալատաք* նկարն, օրինակ, կօգնի սովորողներին խորհել, թե ինչպես կզգան, երբ Փրկիչը վերադառնա: Անառակ որդու առակի բեմականացումը կարող է օգնել սովորողներին հասկանալ, թե ինչ է նշանակում ներքին մեկին, ով մոլորվել էր:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ օգտագործել արվեստը խթանելու դասարանի անդամների ուսման փորձառությունը առաջիկա դասերին:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկիչն օգտագործում պատկերներ, երբ ուսուցանում էր (տես, օրինակ, Մատթեոս 6.28–30, 22.16–21, Մարկոս 12.41–44):

1. «Առաջին Նախագահության նախաբանը», *Օրհներգեր*, x:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսե՛ք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր սովեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Այս բաժնում ուսուցանվող սկզբունքները պատկերավոր դարձնելու համար, ձեր քննարկումներին կարող եք ավելացնել երաժշտություն, պատմություններ և արվեստ: Օրինակ, Նախքան հանդիպումը կարող եք խնդրել ուսուցիչներին պատրաստված գալ՝ կիսվելու երաժշտությամբ, պատմություններով, կամ արվեստի գործով, որ նրանք օգտագործել են կամ կարող են օգտա

գործել ավետարանի որևէ սկզբունք ուսուցանելու համար: Երբ ուսուցիչները կիսվեն, խնդրեք նրանք քննարկել, թե այն, ինչ նրանք ներկայացրեցին, ինչպես կնպաստի սկզբունքի ուսուցմանը և ինչպես կխթանի նրանց աշակերտների ուսման փորձառությունը:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Հավատքով արձագանքեք դժվարին հարցերին

Լավ ուսուցիչը քաջալերում է սովորողներին հարցեր տալ, բայց երբեմն կարող է մի հարց ծագել, որին դժվար է պատասխանել: Տերը պատվիրել է. «Շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը» և «ինչ որ հայտարարում եք, դուք պետք է հայտարարեք. . . հեզության ոգով»: Նրա խոստումն է, որ եթե անեք այս բաները, դուք կստանաք «այն նույն պահին. . . թե ինչ պիտի ասեք» (Վևու 84.85, 100.6–7):

### ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՆԱԽԱՊԵՍ:

Պատրաստվելով ուսուցանելուն աղոթեք օգնության համար, որպեսզի բացահայտեք այն հարցերը, որոնք կարող են ծագել դասարանի անդամների մտքում: Ուսումնասիրեք սուրբ գրությունները և Եկեղեցու միջոցները և մտածեք, թե ինչպես կպատասխանեք հարցերին: Հիշե՛ք, որ լավագույն նախապատրաստությունը տեղի է ունենում Տիրոջ օգնությանը դիմելուց:

**Խորհելու հարցեր** Երբ ես մտածում եմ հաջորդ իմ ուսուցման հնարավորության մասին, ի՞նչ դժվար հարցեր կարող են ունենալ սովորողները: Ի՞նչ կարող եմ անել պատրաստվելու համար:

**Սուրբգրքյան օրինակ** 2 Նեփի 32.3 հատվածում տրված խոստումն ինչպե՞ս է վերաբերում ինձ:

### ՕԳՏՎԵՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ:

Ավետարանի վերաբերյալ դժվար հարցերին պատասխանելու ամենալավ աղբյուրը սուրբ գրություններն են, ապրող մարգարեների խոսքերը և Եկեղեցու մյուս պաշտոնական հրատարակությունները: Օրինակ, Եկեղեցին հրատարակել է ավետարանական թեմաներով աշխատություններ, որոնք կօգնեն պատասխանել Եկեղեցու պատմության վերաբերյալ և վիճելի հարցերին (տես [lds.org/topics](http://lds.org/topics)): Ծանոթացեք Եկեղեցու պաշտոնական միջոցներին և քաջալերեք նրանց, ովքեր հարցեր ունեն, նույնպես ուսումնասիրել դրանք:



**Խորհելու հարցեր:** Ի՞նչ հարցեր են տվել իմ դասարանի անդամներն անցյալում: Եկեղեցու ո՞ր նյութերը կարող են օգնել նրանց:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս կարող եմ հետևել Վարդապետություն և Ուխտեր 88.118 հատվածի խորհրդին:

### ՀՐԱՎԻՐԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՕԳՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԻՍ:

Շատ դեպքերում հարմար կլինի հրավիրել սովորողներին օգնել միմյանց գտնել իրենց հարցերի

պատասխանները: Երբ Հոգուց հուշում է գալիս, կարող եք այդպես վարվել, նույնիսկ եթե զգում եք, որ դուք կարող եք պատասխանել: Երբ դուք խնդրում եք սովորողներին որոնել սուրբ գրություններում և Եկեղեցու այլ նյութերում ավետարանական հարցերի պատասխանները, դուք նրանց համար ուսումնասիրելու հրաշալի հնարավորություններ եք ստեղծում:

**Խորհելու հարց** Ո՞վ իմ դասարանում կարող է օգտակար մտահղացումներ տալ, երբ դժվար հարց է ծագում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

### Կիսվեք և խորհուրդ արեք միասին:

Սկսե՛ք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվե՛ք: Չգտե՛ք ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ հարցեր տալուց ուսուցիչները ազատ ու հանգիստ զգան իրենց:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Կիրառեք:** Նախքան ժողովը հրավիրեք ուսուցիչներին իրենց հետ բերել ավետարանի մասին դժվար հարցեր, որոնք լսել իրենց աշակերտներից: Խմբով

քննարկեք հնարավոր եղանակները, թե ինչպես կարելի է պատասխանել այդ հարցերին:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:



**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս կարող եմ հետևել Վարդապետություն և Ուխտեր 88.122 հասվածի օրինակին, երբ օգնում եմ սովորողներին գտնել հարցերի պատասխանները:

▶ Տես նաև “Answering a Class Member’s Question” տեսանյութը (LDS.org):

**ԸՆԴՈՒՆԵՔ, ԵՐԲ ԶԳԻՏԵՔ:**

Դա չպետք է զարմացնի ձեզ, որ ավետարանի վերաբերյալ կան որոշ անպատասխան հարցեր, իսկ որոշ դժվար հարցերի պատասխանները դեռ պիտի բացահայտվեն: Մինչդեռ բնական է, որ ցանկանում ենք պատասխանել յուրաքանչյուր հարցին, որոշ դեպքերում տեղին

կլինի պարզապես ասել. «Զգիտեմ: Եկեք ինքնուրույն ուսումնասիրենք տվյալ հարցը այս շաբաթվա ընթացքում և հաջորդ անգամ կարող ենք քննարկել»: Նման իրավիճակներում, սովորողների ուշադրությունն ուղղեք դեպի ավետարանի ավելի կարևոր ճշմարտությունները, որոնք մենք գիտենք, ինչպիսիք են՝ Փրկչի Քավությունը, փրկության ծրագիրը և քահանայության զորությունը: Ձեր վկայությունը բերեք ավետարանի կարևոր սկզբունքների մասին: Օգնեք սովորողներին հասկանալ Երեց Ձեֆրի Ռ. Հոլլանդի այս հայտարարությունը. «Այս Եկեղեցում այն, ինչ մենք գիտենք, միշտ գերակշռում է այն, ինչ չգիտենք:»<sup>1</sup>

**Խորհելու հարց** Ի՞նչ ես կարող եմ անել, որպեսզի հավատք զարգացնեմ նրանց մոտ, ովքեր ավետարանի մասին անպատասխան հարցեր ունեն:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում հետևյալ սուրբ գրություններից ավետարանի մասին չպատասխանված հարցերի վերաբերյալ: Եսայիա 55.8–9, Հովհաննես 16.12, 2 Կորնթացիա 5.7, 1 Նեփի 11.16–17, Վարդապետություն և Ուխտեր 101.32–33, Մովսես 5.6, Հավատո Հանգանակներ 1.9:

1. Ձեֆրի Ռ. Հոլլանդ, “Lord, I Believe,” *Ensign* կամ *Liahona*, մայ. 2013, 94:

## Ուսուցանեք երեխաներին

Երբ հարություն առած Փրկչը այցելեց նեփիացիներին, «նա սովորեցրեց և ծառայեց այն բազմության երեխաներին. . . և նա արձակեց նրանց լեզուները, և նրանք ասացին իրենց հայրերին մեծ ու զարմանալի բաներ, նույնիսկ ավելի մեծ, քան նա բացահայտել էր ժողովրդին» (3 Նեփի 26.14): Փրկչի զործողությունները օրինակ են հանդիսանում ձեզ համար, երբ դուք ուսուցանում եք, հոգ եք տանում և ներգործություն ունենում երեխաների հավատքի ու դարձի գալու վրա (տես 3 Նեփի 17.23):

### ԱԶԱԿՑԵՔ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Ծնողներն ավետարանի ամենակարևոր ուսուցիչներն են իրենց երեխաների համար՝ նրանցն է և հիմնական պատասխանատվությունը և ամենամեծ գործությունը ներգործելու իրենց երեխաների վրա (տես Երկրորդ Օրինաց 6.6–7): Եթե ուսուցանում եք երեխաներին Եկեղեցում, աղոթքով որոնեք եղանակներ, թե ինչպես աջակցել նրանց ծնողներին իրենց կարևոր դերում: Օրինակ, կարող եք գրուցել ծնողների հետ նրանց երեխաների կարիքների ու հետաքրքրությունների մասին, կարող եք կիսվել նրանց հետ նրանով, թե ինչ են երեխաները սովորում ձեր դասին, և կարող եք պարզել, թե ինչպես աջակցեք ծնողների ջանքերին՝ երբ ուսուցանում եք:

**Խորհելու հարց** Եկեղեցում երեխաներին ուսուցանելու իմ ջանքերում ինչպե՞ս կարող եմ կառուցել այն փորձի վրա, որը նրանք ստանում են տանը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ է ուսուցանում ինձ Հոգին, երբ ես մտածում եմ Մորմոնի Գրքում հիշատակվող հավատարիմ ծնողների օրինակների մասին (տես, օրինակ, 1 Նեփի 1.1, Ենովս 1.1–3, Ալմա 56.45–48):

### ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ

Շատ երեխաներ (մեծահասակները նույնպես) լավագույն կերպով են սովորում, երբ ուսման գործում ներգրավված են մեկից ավելի զգայարանները: Գտեք եղանակներ, թե ինչպես օգնել երեխաներին սովորելու ընթացքում օգտագործել տեսողության, լսողության և շոշափելիքի իրենց զգայարանները: Որոշ դեպքերում, դուք նույնիսկ կարող եք եղանակներ գտնել ներգրավելու նրանց հոտառության և համի զգացումները:

### ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՌՈՍՈՒՑԱՆՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԵԹՈՂՆԵՐ

Բոլոր երեխաներն իրար նման չեն, և յուրաքանչյուր երեխա զարգանում է արագ տեմպերով: Երեխաներին ուսուցանելու ձեր ջանքերը ամենաարդյունավետը կլինեն, եթե օգտագործեք ուսուցման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են.

- **Պատմություններ:** Երեխաները հեշտ են հասկանում ավետարանի սկզբունքները, երբ դրանք ուսուցանվում են պատմությունների միջոցով: Պատմություններն օգնում են երեխաներին տեսնել, թե ինչպես է ավետարանը կիրառվում առօրյա կյանքում: Հատկապես զորավոր են ուսուցանում վարդապետությունը սուրբգրքյան պատմությունները՝ օրինակ, աղոթքի, հայտնության, հակառակությանը դիմակայելու և Աստվածազլխի բնույթի մասին ուսուցանելու նպատակով կարող եք օգտագործել Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի պատմությունը: Կարող եք օգտագործել պատմություններ ձեր կյանքից կամ Եկեղեցու ամսագրերից: Երբ ուսուցանում եք փոքր երեխաներին, ծրագրեք ընդգրկել նրանց պատմության ընթացքին, օրինակ, նրանք կարող են պահել նկարները, կրկնել բառերը կամ դերակատարել հատվածները:

- **Տեսողական օժանդակ միջոցներ** Տեսողական միջոցները, ինչպիսիք են՝ նկարները, տեսանյութերը կամ առարկաները, կօգնեն երեխաներին ավելի լավ հասկանալ և հիշել սուրբ գրությունների պատմությունները և դրանցում ուսուցանվող սկզբունքները: Նկարներից և տեսանյութերից շատերը կարելի է գտնել *LDS Media Library*-ում, [LDS.org](http://LDS.org) կայքում:

- **Երաժշտություն** Օրհներգերն ու երգերը կօգնեն երեխաներին զգալ Աստծո սերը և Հոգին և սովորել ավետարանի ճշմարտությունները: Մեղեդիները, ռիթմերը և պարզ հանգերը կօգնեն երեխաներին հիշել ավետարանի ճշմարտությունները

տարիների ընթացքում: Երգելով երեխաների հետ միասին, օգնեք նրանց հայտնաբերել ու հասկանալ երգերում ուսուցանվող սկզբունքները: *Երեխաների Երգայունի* երգերից շատերը և Եկեղեցու օրհներգերի գիրքը ներառում են սուրբ գրությունների հղումներ, որոնք կարող եք օգտագործել, որպեսզի կապեք երգը սուրբ գրության մեջ ուսուցանվող վարդապետության հետ:

**Խորհելու հարց** Ի՞նչ պատմություններ, առարկաներ կամ երգեր ես կարող եմ օգտագործել, որպեսզի երեխայի համար հեշտ լինի հասկանալ ավետարանի սկզբունքը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Փրկչի ձևով ուսուցանելու մասին Մատթեոս 18.1–5 հատվածներից:

▶ Տես նաև “Primary Music Leader” տեսանյութը՝ ([LDS.org](http://LDS.org)):

### ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՔ:

Որպես Աստծո որդիներ ու դուստրեր, երեխաները ծնվել են ստեղծագործելու: Երբ հրավիրում եք երեխաներին ստեղծելու մի բան, ինչը կապված է ավետարանի սկզբունքի հետ, դուք օգնում եք նրանց ավելի լավ հասկանալ սկզբունքը և նրանց տալիս եք շոշափելի մի հիշեցում իրենց սովորածի մասին: Նրանք նաև կարող են օգտագործել իրենց ստեղծագործությունը՝ մյուսների հետ իրենց սովորածով կիսվելու համար: Երեխաներին ուսուցանելիս թույլ տվեք նրանց կառուցել, նկարել, ներկել, սպիտակեցնել և ստեղծագործել: Այս բաները միայն զվարճալի զբաղմունքներ չեն, դրանք կարևոր են սովորելու համար: *Կահունա* կամ *Ընկեր* ամսագրերից յուրաքանչյուրում զետեղված են ստեղծագործական միջոցառումներ երեխաների համար:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ ուսուցանելիս ընդգրկել ստեղծագործական միջոցառումներ:



**ՔԱՋԱԼԵՐԷ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԱՐՑԵՐԻՆ**

Երեխաները բնույթով հետաքրքրասեր են և շատ հարցեր ունեն։ Չգտեք դիտել նրանց հարցերը որպես հնարավորություն ձեր դասի համար, այլ ոչ թե որպես շեղող կամ խանգարող հանգամանքներ։ Երեխաների հարցերը խոսում են նրա մասին, որ նրանք պատրաստ են սովորել։ Այդ հարցերը ձեզ տալիս են թանկագին մտքեր այն մասին, թե ինչ են մտածում երեխաները, ինչ մտահոգություններ ունեն, և թե ինչպես են արձագանքում այն բաներին, որոնք սովորում են։ Օգնեք նրանց իմանալ, որ իրենց հարցերի պատասխանները կարելի է գտնել սուրբ գրություններում և ապրող մարգարեների խոսքերում։

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ ցույց տալ իմ դասարանի երեխաներին, որ ես գնահատում եմ նրանց հարցերը և հետաքրքրությունը։

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս է օրհնվել երիտասարդ Ջոզեֆ Սմիթը հարցեր տալու հրավեր ստանալով (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10–20)։

**ՀՐԱՎԻՐԷ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ  
ԿԻՍՎԵԼ ԻՐԵՆՑ ԻՄԱՑԱԾՈՎ։**

Երբ երեխաները մի նոր բան են սովորում, նրանք անշուշտ ցանկանում

են կիսվել դրանով մյուսների հետ։ Խրախուսեք այդ ցանկությունը՝ հնարավորություն տալով երեխաներին ուսուցանել ավետարանի սկզբունքները միմյանց, իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին։ Նաև խնդրեք նրանց կիսվել ձեզ հետ իրենց մտքերով, զգացումներով և փորձառություններով, կապված սկզբունքների հետ, որոնք ուսուցանում եք։ Դուք կտեսնեք, որ նրանց ունեցած գաղափարները պարզ են, մաքուր և զորավոր։

**Խորհելու հարց** Ավետարանի ի՞նչ ճշմարտություններ եմ ես սովորել որևէ երեխայից։

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Փրկչի օրինակից 3 Նեփի 26.14 հատվածում։

**ԽԱՆԳԱՐԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՆ ՍԻՐՈՎ ԱՐՁԱԳԱՆՔԷ։**

Երբեմն երեխայի պահվածքը խոչընդոտում է դասարանում մյուսների ուսման ընթացքին։ Երբ այդպես է պատահում, եղեք համբերատար, սիրող և հասկացեք այն դժվարությունները, որոնք, հնարավոր է, երեխան ունի։ Գուցե նա ավելի շատ մասնակցություն է ուզում ունենալ դասին դրական իմաստով պահելով նկարը, մի բան նկարելով

գրատախտակին կամ կարդալով սուրբ գրության որևէ հատված։

Եթե երեխան շարունակում է խանգարել, օգտակար կլինի նրա հետ առանձին խոսել։ Միտո և համբերության ոգով բացատրեք ձեր ակնկալիքները և ձեր համոզվածությունը հայտնեք, որ նա կարող է դրանք իրագործել։ Կարող եք հրավիրել երեխայի ծնողներին կամ Երեխաների Միության նախագահության անդամին՝ միանալ ձեզ այդ գրույցի ժամանակ։

Եթե խանգարող երեխան հատուկ կարիքներ ունի, խոսեք ծխի կամ ցցի սահմանափակ կարողություններով անդամների գծով մասնագետի հետ կամ այցելեք [disabilities.lds.org](http://disabilities.lds.org) պարզելու, թե ինչպես կարող եք լավագույն ձևով վարվել տվյալ դեպքում։

**Խորհելու հարց** Ի՞նչ փոփոխություններ ես կարող եմ կատարել իմ դասավանդման մոտեցման մեջ, որը կօգնի խանգարող երեխային իրեն սիրված զգալ։

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ են ուսուցանում ինձ Առակաց 15.1, Վարդապետություն և Ովստեր 18.10, և 121.41–44 հատվածները խանգարող հանգամանքներին արձագանքելու մասին։

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին։** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք։

**Սովորեք միասին։** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը։ Մի փորձեք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում։

**Կիրառեք։** Հրավիրեք ուսուցիչներին դերակատարել, թե ինչպես կուսուցանեն ավետարանը մի երեխայի, օգտագործելով այս բաժնի առաջարկները։ Կարող եք հրավիրել Երեխաների

Միության մի քանի երեխաների, ովքեր կմասնակցեն այդ ուսուցմանը։ Դրանից հետո ուսուցիչներին ժամանակ տվեք կիսվելու կարծիքներով։

**Պատրաստվեք։** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել։

## Ուսուցանեք երիտասարդներին

Մտրե գրություններում գրված շատ իրադրություններից պարզ է դառնում, որ Աստված վստահություն ունի երիտասարդների հոգևոր ունակությունների հանդեպ: Մամուելը մի երիտասարդ տղա էր, երբ լսեց Տիրոջ ձայնը տաճարում: Մորմունը միայն 10 տարեկան էր, երբ հոգևոր պարզվեցին դրսևորեց, որոնք արժանացրեցին նրան իր սուրբ առաքելությանը: Զոզեֆ Մմիթը 14 տարեկան էր, երբ նրան վստահվեց հայտնություն, որը սկիզբ դրեց Վերականգնմանը: Եվ Փրկիչն Ինքը 12 տարեկան էր, երբ Նրան գտան տաճարում՝ Իր Հոր աշխատանքին ներգրավված և ուսուցանելիս: Եթե դուք երիտասարդների ուսուցիչ եք, դուք հնարավորություն ունեք օգնելու նրանց իրականացնել այն մեծ աշխատանքը, որը Երկնային Հայրը պատրաստել է նրանց համար:

### ԱԶԱԿՑԵՔ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Տերը ծնողներին է տվել իրենց երեխաներին ուսուցանելու հիմնական պատասխանատվությունը: Հետևաբար, երբ ջանում եք ուսուցանել երիտասարդներին Փրկչի ձևով, ձեր ջանքերը պետք է աջակցեն ծնողների ջանքերին: Երիտասարդների ծնողների հետ կիսվեք, թե ինչ եք ուսուցանում: Խորհրդակցեք նրանց հետ ձեր դասարանի երիտասարդների կարիքների մասին և լավագույն եղանակների, որոնք կօգնեն հոգավ այդ կարիքները: Դուք կարող եք հաղորդակցվել ծնողների հետ կանոնավոր է-նամակների կամ տեքստային հաղորդագրությունների միջոցով, կամ կարող եք ժամանակ առ ժամանակ հանդիպել նրանց հետ:

Արեք ինչ որ կարող եք, որպեսզի ամրապնդեք երիտասարդների և նրանց ծնողների փոխհարաբերությունները: Երիտասարդները երբեմն ավելի հարմար կզգան ձեզ մոտենալ, երբ խորհրդի կարիք ունենան, սակայն որքան հնարավոր է, քաջալերեք նրանց խորհուրդ հարցնել նաև իրենց կյանքի ամենակարևոր ուսուցիչներից՝ իրենց ծնողներից:

**Խորհելու հարց** Ինչպիսի՞ հարմար եղանակներով ես կարող եմ համագործակցել իմ երիտասարդ աշակերտների ծնողների հետ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ տպավորություններ եմ ես ունենում երիտասարդների մասին, ում ես ուսուցանում



եմ, երբ կարդում եմ Հելամանի 2000 պատանի զինվորների մասին (տես Ավմա 53.17–21, 56.47, 57.21):

▶ Տես նաև ուսուցանելու մասին “Strengthen Our Families” տեսանյութը (LDS.org):

### ԲԱՐՁՐ ԱԿԿԱԼԻԵՆԵՐ ԿԱԶՄԵՔ ԵՎ ՀԱՄԲԵՐԱՍԱՐ ԾԳՆԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԴՐԱՆՔ:

Ինչ որ առումներով երիտասարդներին ուսուցանելը տարբերվում է մեծահասակներին ուսուցանելուց: Երիտասարդներն ավելի քիչ փորձառություն ունեն ավետարանի հետ կապված և կարող են այդքան էլ հարմարավետ չզգալ իրենց դասարանում մեկնաբանություններ անելիս: Քանի որ ժամանակը կարճ է, ապա նրանց ուսուցանելիս պահանջվում է կիրառել ուսուցման զանազան մեթոդներ, ինչպես օրինակ, ամարկայական դասեր, կյանքի իրական պատմություններ և տեսողական օժանդակ

նյութեր: Երիտասարդներից ոմանք դեռ սովորում են, թե ինչ է ընդունելի դասարանում և կարող է փորձեն անցնել լավ վարքի սահմանները: Երբեմն նրանք վստահ չեն իրենց հավատքում և վստահ չեն իրենք իրենց վրա:

Այնուամենայնիվ, երիտասարդները նաև ներուժ ունեն հրաշալի գործեր անելու Տիրոջ ծառայության մեջ: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Իմ կարծիքով երիտասարդների այս սերունդն ավելի ընկղմված է սուրբ գրությունների մեջ, ավելի խորն է ծանոթ մարգարեների խոսքերին, և ավելի հակված է դիմել հայտնությունների՝ պատասխաններ ստանալու համար, քան նախորդ սերունդներից որևէ մեկը»: <sup>1</sup> Իսկ Նախագահ Զ. Ռուբեն Քլարկ Կրտսերը երիտասարդների հանդեպ նմանատիպ վստահություն է հայտնել. «Եկեղեցու երիտասարդները Հոգու բաների քաղց ունեն. նրանք փափագում են

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Այստեղ՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջ մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներին դերակատարել, թե ինչպես կօգնեն երիտասարդներին ինքնուրույն հայտնաբերել ճշմարտությունը սուրբ գրություններում: Ինչպե՞ս նրանք

կոզեչեչեն երիտասարդներին գտնել ճշմարտությունը, ամանց մատուցելու նրանց բոլոր պատասխանները: Ի՞նչ խորհուրդ կամ ամաչարկ կարող են տալ ուսուցիչները միմյանց:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

սովորել ավետարանը և ուզում են դա ավելորդ են, անաղարտորեն»։<sup>2</sup>

Եթե երիտասարդները զգան, որ դուք նրանց վստահում եք, իրենց աստվածային ներուժի հանդեպ վստահությունը կաճի, և դուք կգարմանաք, թե նրանք ինչեր կարող են իրականացնել: Միտով հաղորդեք նրանց, որ գիտեք, թե ինչ պատասխանատու նրանք կարող են լինել իրենց ուսման գործում և Տիրոջ չափանիշները պահելու պարտավորվածության հարցում: Օգնեք նրանց ունենալ տեսլականը՝ թե ըստ Երկնային Հոր նրանք ինչպիսին կարող են դառնալ:

Անշուշտ երիտասարդները դեռ շատ բան ունեն սովորելու, ինչպես և մենք բոլորս: Հետևեք Փրկչի օրինակին՝ շարունակելով սիրել և քաջալերել նրանց, համբերությամբ աշխատել նրանց հետ և երբեք չհրաժարվել նրանցից:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ ակնկալիքներ ունեմ երիտասարդներից, ում ես ուսուցանում եմ: Ինչպե՞ս եմ արտահայտում իմ վստահությունը նրանց հանդեպ:

**Սուրբգրքյան օրինակ** Մտորք գրությունների ո՞ր հատվածներն են ինձ ուսուցանում Փրկչի ակնկալիքներն Իր աշակերտներից (տես, օրինակ, Մատթեոս 5.48, Հովհաննես 13.34–35, 14.12):

Տես նաև “Love Those You Teach” այս գրքում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՔ ՄԻՄՅԱՆՑ ՌՈՍՈՒՑԱՆԵԼՈՒ:**

Երիտասարդները անընդհատ ուսուցանում են միմյանց. նրանք կիսվում են փորձառություններով, օգնում են ընկերոջը հասկանալ ավետարանի սկզբունքը, կամ օրինակ են ծառայում իրենց գործողություններով:

Նրանց շատ հնարավորություններ տվեք դասարանում միմյանց ուսուցանելու, քանի որ նրանք հաճախ ավելի լավ են սովորում միմյանցից և ուսուցանելու փորձից: Երբ դուք խնդրում եք երիտասարդներին ուսուցանել, ժամանակ տրամադրեք օգնելու նրանց պատշաճորեն պատրաստվել: Կիսվեք նրանց հետ այս գրքում զետեղված սկզբունքներով և բացատրեք, թե դուք ինչ եք անում, որպեսզի պատրաստվեք ուսուցանելուն: Կարող եք առաջնորդվել այս օրինակով. *բացատրեք* սկզբունքը, որը դուք ցանկանում եք, որ նրանք հասկանան, *ցուցադրեք*, թե ինչպես այն կիրառել, թույլ տվեք նրանց *փորձել* այդպես անել, *զննաստեք* նրանց ջանքերը, և հնարավորություն տվեք նրանց *կրկին փորձելու*:

Այսպիսով, դուք կօգնեք երիտասարդներին ոչ միայն մեկ դասի, այլ ամբողջ կյանքի ընթացքում ուսուցանել ավետարանը Փրկչի ձևով:

**Խորհելու հարց** Իմ դասարանից ո՞վ օգուտ կբաղի ուսուցանելու հնարավորությունից: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրան դրական փորձառություն ունենալ:

**Սուրբգրքյան օրինակ** Կարդալով Դուկաս 2.40–52 հատվածները, ի՞նչ է ուսուցանում ինձ Հոգին իմ դասարանի երիտասարդների մասին:

▶ Տես նաև “Let Us Teach” տեսանյութը (LDS.org):

**ՕՐՆԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԶԱՐԳԱՅՆԵԼ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՆԱԿՍԱՀՈՒԹՅՈՒՆ:**

Որպեսզի հոգևորապես գոյատևեն այս վտանգավոր ժամանակներում և կատարեն իրենց համար նախատեսված Տիրոջ առաքելությունը, երիտասարդները, ում դուք ուսուցանում եք, պետք է ունենան հավատքի

ու վկայության իրենց սեփական պաշարները: Նրանք պետք է իմանան, թե որտեղից գտնել ուժ՝ փորձությունների ժամանակ, և իրենց հարցերի պատասխանները: Նրանք չեն կարողանա ասավիճակներում իրենց ծնողներին:

Քանի որ դուք ուսուցանում եք, այլ ոչ թե պարզապես տեղեկություն տալիս, օգնեք երիտասարդներին սուրբ գրություններում ինքնուրույն հայտնաբերել ավետարանի ճշմարտությունները և մարգարեների խոսքերը: Երբ նրանք հարցեր ունեն, երբեմն ավելի լավ է ուսուցանել նրանց, թե ինչպես ինքնուրույն գտնել պատասխանները, քան անմիջապես պատասխանել հարցերին: Օրինակ, դուք կարող եք ցույց տալ նրանց, թե ինչպես օգտագործել ուսումնական օժանդակ նյութերը սուրբ գրություններում կամ Ավետարանի թեմաներ բաժինը LDS.org-ում: Կարող եք նաև կիսվել, թե ինչպես եք փնտրել ու ստացել անձնական հայտնություն: Քաջալերեք նրանց զարգացնել աղոթքի և սուրբ գրությունների իմաստալից ուսումնասիրության ամենօրյա սովորույթ: Ձեր խոսքերի և օրինակի միջոցով ուսուցանեք նրանց այն պարզ ուրախության մասին, որը գալիս է ավետարանն ուսումնասիրելու և ըստ ավետարանի ապրելու շնորհիվ:

**Խորհելու հարցեր** Արդյոք գիտե՞ն երիտասարդները, ում ես ուսուցանում եմ, թե ինչ անել, երբ հարցեր կամ մտահոգություններ ունեն ավետարանի վերաբերյալ: Ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց ավելի ինքնավստահ լինել հոգևոր առումով:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ է նշանակում «կառուցեք ձեր հիմքը» Հիսուս Քրիստոսի վրա (Հեղաման 5.12): Ինչպե՞ս կարող եմ օգնել երիտասարդներին անել այդ:

**ՕԳՈՒՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԸ:**

Եթե երիտասարդները, ում դուք ուսուցանում եք, ունեն էլեկտրոնային սարքեր, հիշեք, որ այդ սարքերը չպետք է խանգարող պարագաներ հանդիսանան, դրանք իրականում կարող են ուսումը խթանող միջոցներ լինել: Քաջալերեք երիտասարդներին հարցերին պատասխանելու համար փնտրել սուրբ գրությունները և Եկեղեցու այլ նյութերը այս սարքերի վրա: Դուք նաև կարող եք շարափվա ընթացքում երիտասարդներին հաղորդագրություններ ուղարկել կամ կապուղիներ, որոնք կօգնեն նրանց պատրաստվել առաջիկա դասերին:

1. Դեյվիդ Ա. Բեդնար, “A Reservoir of Living Water” (Church Educational System fireside for young adults, Feb. 4, 2007), 2, LDS.org:  
2. Ջ. Ռուբեն Քլարկ Կրոստեր, *The Charted Course of the Church in Education*, rev. ed. (1994), 3, տես նաև lds.org/bc/content/ldsorg/manual/seminary/32709\_000.pdf, p. 3:



### Ջանասիրաբար սովորելու կոչ արեք

(Handbook 2: Administering the Church [2010], 5.5.4)

Ավետարանի ճշմարիտ ուսուցիչը չի բավարարվում, երբ սովորողները պարզապես լսում են, թե նա ինչ է ասելու: Ավետարանի ուսուցումը չի ենթադրում պասսիվ փորձառություն: Դա հավատքի գործողություն է և ջանասիրություն: Երբ պատրաստվում եք ուսուցանելու, մտածելու փոխարեն, թե «Ի՞նչ անեմ, որ ուսուցանեմ», հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պիտի անեն իմ դասարանի անդամները, որ սովորեն»: Ինչպե՞ս օգնեմ նրանց ինքնուրույն հայտնաբերել ավետարանը: Ինչպե՞ս ոգեշնչեմ նրանց՝ գործել: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը կիսվել է հայտնի ասացվածքով. «Մարդուն մի ձուկ տալը կկերակրի նրան մեկ անգամ: Մարդուն ձուկ որսալ սովորեցնելը կկերակրի նրան ամբողջ կյանքի ընթացքում»: Այնուհետև նա ուսուցանել է. «Որպես ծնողներ և ավետարանի հրահանգիչներ, դուք և ես ձուկ բաժանելու գործի մեջ չենք ներգրավված, հակառակը, մեր աշխատանքն է օգնել [նրանց, ում մենք ուսուցանում ենք], սովորել «ձուկ որսալ» և դառնալ հոգեպես անասան:»<sup>1</sup>

#### ՔԱԶԱԼԵՐԵՔ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՌՈՍՈՒՍԸ

Ավետարանի ուսումնասիրությունը շաբաթը մեկ անգամ բավական չէ դասարանի անդամներին ամրապնդելու համար հակառակորդի գայթակղությունների և խաբեության դեմ: Ավետարանի ուսուցումը պետք է կենտրոնացած լինի տնային ամենօրյա ջանքերի վրա, այդ թվում անձնական և ընտանեկան ուսումնասիրության վրա: Այն, ինչ դուք ասում եք և անում որպես ուսուցիչ, կարող է ամրապնդել այս սկզբունքը: Սովորողներին հատուկ հրավեր հղեք ավետարանը դասարանից դուրս ուսումնասիրելու և կանոնավորապես խնդրեք նրանց կիսվել իրենց սովորածով: Օրինակ, կարող եք հրավիրել դասարանի բոլոր անդամներին դասարան գալ պատրաստված՝ կիսվելու հանձնարարված ընթերցանությունից մի նշանակալից հատվածով: Կամ կարող եք հանձնարարել դասարանի որևէ անդամին պատրաստվել ուսուցանելու դասի մի մասը: Նույնիսկ փոքր երեխաները կարող են հրավիրվել սովորելու դասարանից դուրս, ծնողների օգնությամբ:

Տանն ուսումնասիրելու հորդորը պետք է ավելին լինի, քան պարզապես հիշեցում ընթերցանության հանձնարարության մասին: Դա պետք է

նպաստող ու ոգեշնչող լինի: Օրինակ, դուք կարող եք ասել. Եթե դուք ցանկանում եք լավացնել Հոգու հուշումները ճանաչելու ձեր կարողությունը, դուք արժեքավոր մտքեր կգտնեք Վարդապետություն և Ուխտեր 8–9 բաժիններում: Ես հրավիրում եմ ձեզ կարդալ այս բաժինները մինչև մեր հաջորդ դասը:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ դասաժամը այլ կերպ օգտագործել, քանի որ հասկանում եմ, որ ավետարանի ուսումնասիրության կենտրոնը տունն է:

**Սուրբգրքյան օրինակ** Երբ Հիսուսն ուսուցանեց նեփիաղցիներին Իր Հարությունից հետո, ձեր կարծիքով, ինչո՞ւ Նա նրանց պատվիրեց վերադառնալ տուն և խորհել ու աղոթել Իր խոսքերի մասին (տես 3 Նեփի 17.2–3):

Տես նաև «Աջակցեք տանը ավետարանը սովորելուն»՝ այս գրքում:

#### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴՐԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԱ:

Մինչդեռ ուսուցիչ դերը կարևոր է, սովորողները ծայրաստիճան պատասխանատու են իրենց ուսման համար: Մտածեք, թե ինչպես կարող եք օգնել սովորողներին ընդունել և կատարել այդ պարտականությունը: Օրինակ, երբ դասարանում սուրբ գրքության հատված է կարդացվում, մինչև ձեր տեսակետով կիսվելը

կարող եք հարցնել դասարանի անդամներին, թե ինչ նրանք սովորեցին այդ հատվածից: Նրանց ասացեք, որ դուք մի հատուկ պատասխանի չեք սպասում, այլ անկեղծորեն հետաքրքրված եք, թե նրանք ինչ են սովորում: Դուք կտեսնեք, որ Հոգին հրավիրող հարցերն ու մտքերը ջանասեր սովորողից նույնքան հաճախ են գալիս, որքան ուսուցիչից:

**Խորհելու հարց** Ի՞նչ մի քանի բաներ ես կարող եմ անել, որպեսզի օգնեմ իմ դասարանի անդամներին պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկիչը հորդորում Իր հետևորդներին պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար (տես, օրինակ, Ղուկաս 10.25–28, Եթեր 2.22–25):

#### ԿՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԵՔ ԲԱՐՁՐ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:

Որոշ աշակերտներ վստահ չեն ավետարանն ինքնուրույն ուսումնասիրելու իրենց կարողությունների վրա: Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է. «Բոլոր [մարդկանց] հասանելի են նույն սուրբ գրությունները և բոլորին է հասու նույն Սուրբ Հոգու առաջնորդությունը:»<sup>2</sup> Երբ դուք ձեր վստահությունն եք արտահայտում ձեր դասարանի անդամների հանդեպ և վկայում, որ Սուրբ Հոգին կուսուցանի նրանց, դուք օգնում եք նրանց աճել դեպի բարձր ակնկալիքները, որոնք Տերը սպասում է ավետարանը սովորողներից: Նրանցից շատերը երբեք չեն իմանա, թե ինչ արդյունքի կարող են հասնել, մինչև չստանան հրավեր ու քաջալերանք ձեր կողմից՝ ուսման հարցում իրենց դրսևորելու: Կիսվեք նրանց հետ Նախագահ Դիտեր Ֆ. Ուլդորֆի այս ոգեշնչող հրավերով. «Ես հրավիրում եմ ձեզ. . .

### ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

Սուրբ գրությունների ծանոթագրությունները, Թեմատիկ ուղեցույցը և Աստվածաշնչի բառարանը արժեքավոր միջոցներ են, որոնք օգնում են մեզ հասկանալ սուրբ գրությունները: Վարդապետական այս գաղափարին ծանոթացեք Աստվածաշնչի բառարանում աղոթք բառն ուսումնասիրելով. «Աղոթքի Նայատակը ոչ թե Աստծո կամքը փոխելն է, այլ ապահով դարձնելը մեր և ուրիշների օրհնությունները, որոնք Աստված կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որ ստանանք» (Աստվածաշնչի բառարանը, «Աղոթք»):

դառնալ ավետարանի վարդապետությունների մասնագետներ»։<sup>3</sup>

**Խորհելու հարց** Ի՞նչ են արել մյուսները, որպեսզի օգնեն ինձ վստահ զգալ ավետարանն ուսումնասիրելու իմ կարողություններում:

**Սուրբգրքյան օրինակ** Փրկիչն արտահայտեց Իր վստահությունը Իր աշակերտների հանդեպ, տալով նրանց բարդ, բայց իրագործելի հրավերներ (տես, օրինակ, Ղուկաս 5.1-11): Ի՞նչ կարող եմ ես անել Նրա օրինակին հետևելու համար:

**ԽՐԱՆՈՒՄԵ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ**

Երբ սովորողները կիսվում են իրենց սովորածով, նրանք ոչ միայն զգում են Հոգին և զորացնում են իրենց վկայությունները, այլ նաև քաջալերում են դասարանի մյուս անդամներին ինքնուրույն բացահայտել ճշմարտությունները: Ձեր սովորածից կիսվելուց բացի խրախուսեք սովորողներին ևս կիսվել: Կարող եք հետևյալ տիպի հարցեր տալ. «Ո՞ր ճշմարտություններն են նշանակալից ձեզ համար այդ հատվածներում» կամ «Ի՞նչ եք սովորում կորածներին փրկելու մասին, երբ կարող եք Նախագահ Մոնտոնի պատմությունը»: Փոքր երեխաները կարող են կիսվել նկարելով կամ պատմելով պատմությունները: Ամեն դասին ուսանողների համար ժամանակ հատկացրեք, որ կիսվեն, երբեմն էլ դուք կնկատեք, որ այդ քննարկումներն *են* դաս հանդիսանում:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող եմ խրախուսել իմ դասարանի անդամներին կիսվել իրենց սովորածով:

**Սուրբգրքյան օրինակ.** Ղուկաս 10.1-9 հատվածները փաստում են, որ Փրկիչն ուղարկեց Իր աշակերտներին կիսվելու նրանով, ինչ սովորել են Իրենից: Այս փորձառությունն ինչպե՞ս օրինեց նրանց (տես հատվածներ 17-24):



**ՈՒՍՈՒՑԱՆԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՉՏԵԼ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՍՈՌԻՔ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:**

Այն անձը, ով գիտի, թե ինչպես օգուտ քաղել սուրբ գրություններից և ամեն օր կարդում է դրանք, ընդունակ կլինի ստանալ աստվածային առաջնորդությունը՝ հաղթահարելու համար ցանկացած դժվարություն: Այդպիսի անձնավորությունը ուսուցչից կախման մեջ չի լինի հոգևոր ուժ ստանալու համար: Ուսուցանելիս հարցեր տվեք, որոնց պատասխանները սովորողները պետք է գտնեն սուրբ գրություններում: Իսկ ավելի լավ է, սովորեցրեք նրանց տալ իրենց սեփական հարցերը: Օգնեք նրանց հասկանալ, որ թեև սուրբ գրությունները գրվել են շատ տարիներ առաջ, դրանք պարունակում են Տիրոջ պատասխաններն այն հարցերին ու խնդիրներին, որոնք մենք բոլորս այսօր ունենք:

**Խորհելու հարց** Ի՞նչ խորհուրդ ես կարող եմ տալ դասարանի անդամներին, որպեսզի նրանք ավելի փորձառու լինեն սուրբ գրություններում պատասխաններ գտնելիս:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Նեփիի օրինակից 1 Նեփի 19.22-24 և 2 Նեփի 25.1-4 հատվածներում:

**ՀՐԱՎԻՐԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԳՐԵԼ ԻՐԵՆՑ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

Խրախուսեք սովորողներին գրել իրենց տպավորությունները, որոնք ստանում են Սուրբ Հոգուց, երբ

ուսումնասիրում են ավետարանը: Փոքր երեխաների դեպքում դա կլինի նկար նկարելը կամ իրենց մտքերով ծնողների հետ կիսվելը: Ուսուցանեք սովորողներին, որ դասարանային քննարկման ժամանակ երբեմն Հոգին նրանց կտվորեցնի բաներ, որոնց մասին չեն խոսում բարձրաձայն: Երեց Ռիչարդ Գ. Մքոթը ուսուցանել է. «Գրեք մի ապահով տեղում այն կարևոր բաները, որ դուք սովորում եք Հոգուց: Դուք կպարզեք, որ երբ գրի եք առնում արժեքավոր տպավորությունները, հաճախ դրանք ավելի են շատանում: Բացի այդ, գիտելիքը, որ դուք ձեռք եք բերում, հասանելի կլինի ձեր ամբողջ կյանքի ընթացքում:»<sup>4</sup>

**Խորհելու հարց** Ե՞րբ եմ ես օրինակել՝ գրի առնելով հոգևոր տպավորությունը:

**Սուրբգրքյան օրինակ** Փրկիչը խնդրեց նեփիացիներին գրել այն բաները, որոնք նրանց ուսուցանվել էր (տես 3 Նեփի 16.4, 23.4, 11, 27.23): Ի՞նչ օրինություններ եք ստացել այդ պատվիրանի շնորհիվ:

- 1. Դեյվիդ Ա. Բեդլար, "Watching with All Perseverance," *Ensign* կամ *Liahonua*, մայ, 2010, 42-43:
- 2. Բրյուս Ռ. Մակքոնսկի, "Finding Answers to Gospel Questions," in *Charge to Religious Educators*, 3rd ed. (1994), 80, տես նաև lds.org/manual/teaching-seminary-preservice-readings-religion-370-471-and-475:
- 3. Դիտեր Ֆ. Ուլտորֆ, "Your Potential, Your Privilege," *Ensign* կամ *Liahonua*, մայ, 2011, 59:
- 4. Ռիչարդ Գ. Սքոթ, "To Acquire Knowledge and the Strength to Use It Wisely," *Ensign*, June 2002, 32:

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և տալ իրենց հուզող հարցերը: Դա կարող է միտք տալ, թե ինչ եղանակներով կարելի է հրավիրել ջանասիրաբար սովորել:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:  
**Կիրառեք:** Նախքան ժողովը հանձնարարեք յուրաքանչյուր ուսուցչին սովորել ավետարանի որևէ սկզբունքի մասին և գալ ժողովին պատրաստ՝ ոգեշնչելու մյուս ուսուցիչներին սովորել այդ

սկզբունքի մասին: Ինչո՞վ է այս մոտեցումը տարբերվում մյուսներին սկզբունքի մասին պարզապես ուսուցանելուց: Ինչպե՞ս դա կօրինի սովորողներին:  
**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Տվեք ոգեշնչող հարցեր

Փրկիչն այնպիսի հարցեր էր տալիս, որոնք հրավիրում էին սովորողներին մտածել և խորհել Նրա ուսուցանած ճշմարտությունների մասին: Մեր հարցերը նույնպես կարող են ոգեշնչել սովորողներին խորհել ավետարանի ճշմարտությունների մասին և ուղիներ գտնել դրանք իրենց կյանքում կիրառելու համար: Ոգեշնչող հարցը մղում է սովորողներին բացահայտել ավետարանի ճշմարտություններն իրենց եղանակով և գնահատել իրենց հասկացողությունը և պարտավորվածությունը այդ ճշմարտությունների հանդեպ: Ոգեշնչող հարցերը կարող են ավետարանի ուսումնասիրությունը դարձնել ավելի ներգրավող ու անհատական իմաստալից փորձառություն:

### **ՀԱՐՑԵՐ ՏՎԵՔ, ՈՐՈՆՔ ԿՕՉՆԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԸՆՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:**

Մինչ դասարանի անդամները կքննարկեն սուրբ գրություններից որևէ պատմություն կամ ավետարանի սկզբունք, նրանք պետք է նախ հասկանան դա: Չեր տված որոշ հարցեր պետք է քաջալերեն սովորողներին հիմնական գիտելիք որոնել սուրբ գրություններում որևէ պատմության կամ սկզբունքի մասին: Այդպիսի հարցերը հաճախ կոնկրետ պատասխաններ ունեն, բայց սովորաբար ավելի լավ է թույլ տալ սովորողներին ինքնուրույն հայտնաբերել պատասխանները: Օրինակ, եթե ուսումնասիրում եք Մատթեոս 26.36–46 հատվածները, կարող եք հարցնել. «Ի՞նչ մանրամասներ եք գտնում այս հատվածներում, որոնք նկարագրում են Փրկչի փորձառությունը Գեթսեմանիի այգում: Ի՞նչ արեց Նա այնտեղ մեզ համար»: Կամ, եթե դուք ուսուցանում եք փոքր երեխաներին, կարող եք նկարագրել Փրկչի փորձառությունը Գեթսեմանիում ձեր խոսքերով և ապա խնդրել երեխաներին, որ պատմեն ձեզ, թե ինչ էր անում Հիսուսն այնտեղ:

Այս քննարկումները պետք է շրջանցեն պատմության մանրամասները, որքան էլ որ կարևոր դրանք լինեն: Հարցեր տվեք, որոնք կօգնեն ձեր դասարանի անդամներին հայտնաբերել ավետարանի սկզբունքները՝ հավերժական, կյանքը փոխող ճշմարտությունները սուրբ գրություններում:

**Խորհելու հարցեր** Սուրբ գրություններից ո՞ր պատմություններն ու սկզբունքները կարիք ունեն հասկանալու իմ դասարանի անդամները հաջորդ դասին: Ի՞նչ հարցեր կարող եմ տալ, որպեսզի օգնեմ նրանց հիմնական գիտելիքներ ձեռք բերել սուրբ գրություններից:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Դուկաս 10.25–28 հատվածներում Փրկչի տված հարցերից:

### **ՏՎԵՔ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ԴԻՊՉՈՒՄ ԵՆ ՍՐՏԻՆ ՈՒ ՍՏԵՐՆ:**

Երբ սովորողները զաղափար կազմեն պատմության կամ սկզբունքի մասին, հարցեր տվեք, որոնք կօգնեն նրանց խորհել նշանակության մասին, որպեսզի սկզբունքը դիպչի նրանց սրտին ու մտքին: Կարող եք հարցնել սովորողներին, թե ի՞նչ զգացում ունեն սուրբ գրության այդ հատվածի մասին, ինչպիսի՞ զգացումներ կարող էին ունենալ սուրբ գրություններում հիշատակվող մարդիկ, կամ ինչպե՞ս են այդ հատվածի ճշմարտությունները վերաբերում մեր կյանքին: Քանի որ այս հարցերի պատասխանները հաճախ հիմնվում են սովորողների զգացումների ու փորձառությունների վրա, ապա հարցերը սովորաբար ունենում են մի քանի ճիշտ պատասխաններ: Որպես կանոն այս հարցերը սկսվում են «ձեր կարծիքով» կամ «ձեր զգացումով» արտահայտություններով: Օրինակ, կարող եք հարցնել. «Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող էին իրենց զգալ Առաքյալները, երբ Փրկչի հետ քայլում էին դեպի Գեթսեմանիի

պարտեզը: Ի՞նչ եք զգում այն բանի հանդեպ, որ Հիսուսն արեց այնտեղ: Ինչպե՞ս օրհնվեցինք մենք պարտեզում Փրկչի տառապանքների շնորհիվ:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս կարող են վերը նշված հարցերը ոգևորել սովորողներին փոփոխություններ կատարել իրենց կյանքում:

**Սուրբգրքյան օրինակ** Սուրբ գրություններից ի՞նչ օրինակներ գիտեք, երբ Փրկիչը կամ մյուսները հարցեր են տվել, որոնք սրտանց խորհելու առիթ են հանդիսացել (տես, օրինակ, Մատթեոս 16.13–15, Հովհաննես 1.37–38):

■ Տես նաև “Ask Us Questions” տեսա-նյութը (LDS.org):

### **ՏՎԵՔ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԳՈՐԾԵԼ:**

Որոշ հարցեր մղում են սովորողներին կիրառել այն, ինչ սովորում են և պարտավորվել ավելի լիարժեք ապրել ըստ ավետարանի: Շատ դեպքերում, այդ հարցերը պետք է հրավիրեն սովորողներին լսել Հոգու հուշումները՝ թե նրանք ինչ պետք է անեն: Օրինակ, դուք կարող եք հարցնել. «Երբ քննարկեցինք, թե ինչպես է Փրկիչը տառապել Գեթսեմանիում, ի՞նչ հոգևոր սպասվողություններ դուք ունեցաք» կամ «Ի՞նչը դուք այլ կերպ կանեք՝ այսօրվա ձեր սովորածի շնորհիվ»: Մրանք սովորաբար քննարկման հարցեր չեն, այլ անձնական մտորումների համար են: Ուսանողները պետք է կիսվեն իրենց պատասխաններով միայն այն դեպքում, երբ հարմար կգտնեն դա անել:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս են ոգեշնչված ուսուցիչների հարցերը խորացրել իմ պարտավորվածությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում նրանից, թե ինչպես է Ավան

### **ՄԻ ՎԱԽԵՏԵՔ ԼՈՒՌԹՅՈՒՆԻՑ:**

Լավ հարցերին պատասխանելու համար ժամանակ է պահանջվում: Դրա համար պահանջվում է խորհրդածություն, փնտրտուք և ոգեշնչում: Ժամանակը, որը դուք տրամադրում եք հարցի պատասխաններին սպասելուն, կարող է խորհելու սուրբ ժամանակ լինել: Խուսափեք այդ դադարը ժամանակից շուտ խախտելու գայթակղությունից, պատասխանելով սեփական հարցին կամ անցնելով առաջ: Ասացեք սովորողներին, որ դուք նրանց ժամանակ կտաք խորհելու նախքան պատասխանելը:

հրավիրում իր ժողովրդին մկրտվել (տես Մոսիա 18.7-12):

Տես նաև «Հրավիրեք սովորողներին գործել» այս գրքում:

**ՏՎԵՔ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԱԼ:**

Հարցերը, որոնք կքաջալերեն սովորողներին վկայություն բերել ուսուցանվող սկզբունքների մասին, կարող են Հոգին հրավիրելու հզոր միջոց լինել: Խորհելով այս հարցերի շուրջ, սովորողները կճանաչեն այն ժամանակները, երբ տեսել են Տիրոջ ձեռքը իրենց կյանքում: Նրանց վկայությունները, ինչպես նաև դասարանի մյուս անդամների վկայությունները կաճեն, երբ Հոգին հաստատի ճշմարտությունը: «Վկայություններ տալու հրավեր անելու համար կարող եք այսպիսի հարցեր տալ. «Ինչպե՞ս եք իմացել, որ Հիսուս Քրիստոսը քավել է ձեր մեղքերը» կամ «Ինչպե՞ս սկսեցիք գնահատել այն, ինչ Փրկիչն արեց մեզ համար Գեթսեմանիում», կամ եթե դուք սովորեցնում եք փոքր երեխաներին. «Ի՞նչ եք զգում Հիսուսի հանդեպ»:

**Խորհելու հարցեր** Ի՞նչը դրդեց իմ դասարանի անդամներին բերել իրենց վկայությունները: Ինչպե՞ս կարող եմ խրախուսել նրանց, որ վկայեն:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ ազդեցություն ունեցավ Բենիամին թագավորի հարցը Մոսիա 5.1-ում նրա ժողովրդի վրա (տես նաև 2-5 հատվածները): Ինչպե՞ս ես կարող եմ կիրառել այս օրինակը, երբ ուսուցանում եմ:

**ՏՎԵՔ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ԽՐԱՎԻՐՈՒՄ ԵՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ ՎԱՍԱՐԵԼ:**

Երբ Ալման քարոզում էր Չարահեմլայի ժողովրդին, նա



ինքնաճանաչողական հարցեր էր տալիս, ինչպես՝ «Օ՛նվե՛՛լ եք դուք Աստծուց հոգևորապես: . . . Զգացե՛՛լ եք դուք այս հզոր փոփոխությունը ձեր սրտերում» (Ալմա 5.14): Դուք կարող եք նմանատիպ հարցեր տալ, քաջալերելու համար սովորողներին գնահատել իրենց վարքը և պարտավորվածությունը ավետարանի հանդեպ, օրինակ, «Արդյոք ունե՞ք հավատք՝ տասանորդ վճարելու», կամ «Արդյոք ասո՞ւմ եք ձեր ընտանիքի անդամներին, որ սիրում եք նրանց»: Ասացեք սովորողներին, որ բարձրաձայն չպատասխանեն այս հարցերին. դրանց նպատակն է օգնել սովորողներին անձամբ գնահատել սեփական վարքը և պարտավորվածությունը ավետարանի հանդեպ:

**Խորհելու հարց** Ե՞րբ է ոգեշնչված հարցը օգնել ինձ գնահատել իմ հոգևոր աճը և պարտավորվածությունը: Ի՞նչ հարցեր կարող եմ ես տալ մարդկանց, ում ես ուսուցանում եմ, որպեսզի քաջալերեմ ինքնագնահատում կատարել:

**Սուրբգրքյան օրինակ** Կարդալով Հովհաննես 21.15-17 հատվածները, ի՞նչն է առանձնահատուկ ինձ համար, երբ Հիսուս Քրիստոսը հարցեր է տալիս Պետրոսին:

**ՀԱՐԵՐ ՏՎԵՔ, ՈՐՊԵՍՁԻ ԳՆԱՀԱՏԵՔ ԸՄԲՈՆՈՒՄԸ:**

Որպեսզի պարզեք, դասարանի անդամները հասկացել են սկզբունքը, թե՛ ոչ, փորձեք այս տեսակի հարցեր տալ. «Ի՞նչ դուք սովորեցիք Հիսուս Քրիստոսի Քավության մասին»: Հարցը, որը հրավիրում է սովորողներին արտահայտել ավետարանի սկզբունքը իրենց սեփական բառերով, հատկապես երբ հարցը սրվում է դասի սկզբում, կարող է օգնել ձեզ գնահատել, թե որքան ժամանակ կպահանջվի՝ այդ սկզբունքը դասարանում ուսումնասիրելու համար:

**Խորհելու հարց** Ուրիշ ի՞նչ կերպ ես կարող եմ պարզել, թե ինչ են հասկացել դասարանի անդամները:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս Ամմոնը գնահատեց թագավոր Լամոնիի հասկացողությունը (տես Ալմա 18.24-36):

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում:

**Կիրառեք:** Խնդրեք ուսուցիչներին (անհատապես կամ փոքր խմբերով) հետևել այս բաժնի ցուցումներին և գրել մի քանի հարցեր, որոնք իրենց կարծիքով, կարող են օգտակար լինել դասարանի անդամներին՝ գալիք դասին:

(Լավ կլինի այս հրավերը ժողովից մի քանի օր առաջ տալ ուսուցիչներին, որպեսզի նրանք պատրաստված գան:) Հրավիրեք ուսուցիչներին կիսվել իրենց հարցերով միմյանց հետ և կարծիքներ փոխանակել:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Վարքեք ոգեշնչող քննարկումներ

Երբ Փրկիչն ուսուցանել է, դա ավելին է եղել, քան տեղեկությամբ կիսվելը: Նա Իր աշակերտներին հնարավորություն է տվել հարցեր տալու և կիսվելու իրենց վկայություններով: Ուսուցանելու և սովորելու Նրա բանաձևը հրավիրում է մեզ միմյանց «ուսուցանելի» արքայության վարդապետությունը», որպեսզի «բոլորը կարողանան միմյանցով շենանալ, և որ ամեն մարդ ունենա հավասար արտոնություն» (Վևմ 88.77, 122): Որպես ուսուցիչ դուք կարող եք ծավալել վեհացնող քննարկումներ, որոնք հագեցած կլինեն սովորողների փորձով ու վկայություններով: Նույնիսկ փոքր երեխաները երբեմն շատ ասելիք ունեն: Որպես ուսուցիչ ձեր հիմնական նպատակը միայն ամոզող քննարկումը չէ, բայց այն կարող է աջակցել այդ նպատակին՝ օգնելով սովորողներին մեծացնել իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և Նրան ավելի նմանվել:

### ՍԵՆՏԵՔ ԶՆՆԱՐԿՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄՅՆՈՒՐՆԵՐ:

Եկեղեցու դասերն ու ժողովները վերջին օրերի սրբերին հնարավորություն են տալիս գործացնելու միմյանց՝ կիսվելով մտքերով, փորձառություններով ու վկայություններով: Դասարանում ձեր ստեղծած մթնոլորտը կարող է նպաստել այս կարգի փոխհարաբերություններին: Ձեր խոսքերն ու ձեր գործերը, նույնիսկ սենյակի դասավորվածությունը, այդ թվում լուսավորությունը և աթոռների դիրքերը, կարող են առաջացնել անկեղծ հարգանքի ու ակտիվ սովորելու ոգի:

**Խորհելու հարց** Ի՞նչ փոփոխություն կարող եմ անել իմ դասարանի միջավայրում ավելի վեհ քննարկումներ խրախուսելու համար:

**Սուրբգրքյան օրինակ** Ելևելով Հովհաննես 21.8–12 հատվածներում գրվածից՝ ի՞նչ արեց Հիսուսը, որպեսզի պատրաստեր միջավայրը, որտեղ կարող էր արդյունավետորեն ուսուցանել Իր աշակերտներին: Ինչպե՞ս ես կարող եմ հետևել Նրա օրինակին:

▶ Տես նաև “We Share” տեսանյութը (LDS.org):

### ՏՎԵՔ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆԸ ԽՈՐՀԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ ՈՒՆԵՆ:

Լավ քննարկումը հաճախ սկսվում է լավ հարցից՝ հարց, որը հրավիրում է մարդկանց խորը մտածել ավետարանի մասին: Օրինակ, կարող եք հարցնել. «Ի՞նչ վարդապետական ճշմարտություններ են ուսուցանվում Ջոզեֆ Միլթի Առաջին Տեսիլքի

պատմության մեջ» կամ «Ինչպե՞ս է Ջոզեֆ Միլթի Առաջին Տեսիլքի պատմությունը փոխել ձեր կյանքը»:

Այսպիսի հարցեր տալուց սովորողներին ժամանակ տվեք խորհելու պատասխանների շուրջ: Երբեմն գրատախտակին նախօրոք հարցը գրելը խորհելու տեղիք է տալիս: Դուք նույնիսկ կարող եք տեղեկացնել սովորողներին, որ ցանկանում եք մի փոքր ժամանակ տրամադրել նրանց, որպեսզի պատասխանելուց առաջ մտածեն: Հրավիրեք նրանց մտովի խնդրել Երկնային Հորը՝ ոգեշնչել նրանց հարցի շուրջ խորհելու ժամանակ: Լուս խորհրդածության այսպիսի պահերին Հոգին կարող է դիպչել սրտերին:

**Խորհելու հարց** Ի՞նչ հարցեր ես կարող եմ տալ իմ հաջորդ դասին, որպեսզի նպաստեմ խորհելուն ու քննարկմանը:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Փրկչի տված հարցերից (տես, օրինակ. Մատթեոս 16.13–17, Դուկաս 10.25–26):

### ՅՈՒՐԱԶԱՆՉՅՈՒՐՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒՅՈՒՆ ՏՎԵՔ:

Յուրաքանչյուրն ունի ասելիք, բայց միշտ չէ որ յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու: Քրիստոսանման ուսուցիչները հետաքրքրված են յուրաքանչյուր անձի, և ոչ միայն ակտիվորեն խոսողների ուսումով: Եղանակներ փնտրեք շատացնելու դասարանի

այն անդամների թիվը, ովքեր կարող են կիսվել իրենց վկայություններով: Օրինակ.

■ Եպիսկոպոսության հավանության մեջ դուք կարող եք բաժանել սովորողներին զույգերի, փոքր խմբերի, կամ նույնիսկ փոքր դասարանների:

■ Կարող եք հրավիրել դասարանի անդամներին գրել իրենց մտքերը կամ զգացումները և խնդրել մի քանիսին կիսվել իրենց գրածով:

■ Կարող եք ասել. «Եկեք լսենք մեկին, ով դեռ չի կիսվել» կամ «Դա հետաքրքիր մեկնաբանություն է: Իսկ մյուսներն ինչ են մտածում»:

■ Եթե դուք ուսուցանում եք երեխաներին, կարող եք մի պարզ խաղ մտածել, որը կընդգրկի բոլորին:

Կարող եք ոգեշնչվել հրավիրելու մի հասուկ հյուրի կիսվելու՝ քանի որ գուցե նա մի հեռանկարային գաղափար ունի, որ մյուսներին օգտակար կլինի լսել: Կարող եք այնպիսի հարցեր տալ, որոնք կառուցված կլինեն անձի փորձառությունների և ուժեղ կողմերի վրա, ինչպես օրինակ. «Որպես մայր ձեր փորձն ի՞նչ է սովորեցրել ձեզ Քրիստոսանման սիրո մասին»:

Չկլանվեք դատով այնքան, որ մոռանաք շնորհակալություն հայտնել սովորողներին իրենց մասնակցության համար: Նրանք պետք է իմանան, որ դուք գնահատում եք նրանց պատրաստակամությունը՝ կիսվելու իրենց մտքերով ու վկայություններով:

**Խորհելու հարց** Բացի մեկնաբանություններից ու փորձառություններով կիսվելուց է՞լ ինչ եղանակներով դասարանի անդամները կարող են մասնակցել:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկիչը ներգրավում նրանց, ովքեր հաճախ անտեսված էին (տես Մարկոս 10.13–16, Հովհաննես 4.3–42):

## ՏՎԵՔ ՈԳԵՇՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ

Ճիշտ հարցերը կարող են ակնհայտ դարձնել տարբերությունը՝ ոգեշնչված քննարկման, որը հավատք ու վկայություն է կառուցում և մի քննարկման, որը հազիվ թե հետաքրքիր է, նույնիսկ անօգուտ: Ոգեշնչված հարցեր տալու մասին լրացուցիչ տեղեկության համար տես «Տվեք ոգեշնչող հարցեր»՝ այս գրքում:



**ԹՈՒՅՆ ՏՎԵՔ ՀՈԳՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ:**

Երբ քննարկումներ եք վարում, թույլ տվեք, որ Սուրբ Հոգին առաջնորդի ձեզ: Հետևեք, որ քննարկումները միշտ լինեն դրական ու վեհացնող: Ոգեշնչված քննարկումը ժամանակից շուտ մի դադարեցրեք, որպեսզի դասի նյութն ամբողջությամբ մատուցեք, հատկապես երբ զգում եք, որ քննարկումը իմաստացի է նրանց համար, ում դուք ուսուցանում եք:

**Խորհելու հարցեր** Ե՞րբ ես կարող եմ ասել, որ քննարկումն առաջնորդվում է Հոգու կողմից: Ինչպե՞ս ես իմանամ, թե երբ ավարտեմ քննարկումը և շարժվեմ առաջ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ եմ ես սովորում Վարդապետություն և Ուխտեր 50.21–22 հատվածներից՝ Հոգուն հետևելու մասին, երբ ուսուցանում եմ:

**ՏՎԵՔ շԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ:**

Երբ ինչ-որ մեկը կիսվում է վարդապետական որևէ գաղափարով կամ հոգևոր փորձառությամբ, դուք կարող եք զգալ, որ նա, կամ դասարանից

մեկ ուրիշը լրացուցիչ ասելիք ունի: Հետևողական հարցերը կարող են առաջացնել լրացուցիչ մեկնաբանություններ և տանել դեպի ավելի խորը գաղափարներ: Օրինակ՝ դուք կարող եք հարցնել. «Ինչո՞ւ է այս սկզբունքը կարևոր ձեզ համար» կամ «Սուրբ գրություններից ուրիշ ի՞նչ հատվածներ կան, որ ուսուցանում են այս ճշմարտությունը»:

**Խորհելու հարց** Ինչպե՞ս ես կարող եմ քաջալերել նրանց, ում ուսուցանում եմ, ավելի խորը մտածել քննարկվող սկզբունքների մասին:

**Սուրբգրքյան օրինակ** Ինչպե՞ս էր Փրկիչը ոգեշնչում Իր աշակերտներին ավելի խորը մտածել Իր ուսմունքների մասին (տես, օրինակ, Դուկաս 24.13–32, Հովհաննես 21.15–18):

▶ Տես նաև “Asking Follow-Up Questions” տեսանյութը (LDS.org):

**ԼՍԵՔ**

Լսելը սիրո դրսևորում է: Այն պահանջում է, որ մենք ավելի շատ մտահոգ

լինենք մարդու սրտում եղածով, քան մեր օրակարգի հաջորդ հարցով: Խնդրեք երկնային Հորը, որ օգնի ձեզ հասկանալ, թե ինչ են ասում ձեր դասարանի անդամները: Երբ ուշադրություն դարձնեք նրանց ասված ու չասված խոսքերին, դուք ավելի լավ կհասկանաք նրանց կարիքները, մտահոգություններն ու նրանց նպատակները: Հոգին կօգնի ձեզ իմանալ, թե ինչպես ուսուցանել նրանց, ինչ հետևողական հարցեր տալ, և ինչպես հոգալ նրանց կարիքները:

**Խորհելու հարցեր** Ինչպե՞ս եմ ես իմանում, որ ինչ-որ մեկն ինձ լսում է: Ինչպե՞ս ես կարող եմ ցույց տալ դասարանի անդամներին, որ ես անկեղծորեն լսում եմ նրանց:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ հասկացավ Ալման լսելով աղքատ գորամացիներին (տես Ալմա 32.4–8): Այն, ինչ նա հասկացավ, ինչպե՞ս ազդեց նրա ուսուցանության վրա:

Տես նաև *Քարոզիչ Իմ Ավխոսալսանը* [2004], 208–209:

**ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ**

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցման առնչվող հարցեր տվեք:  
**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Մի փորձեք ընդգրկել ամբողջը մեկ հանդիպման ընթացքում:  
**Կիրառեք:** Հրավիրեք մի ուսուցիչ փորձնական վարել խմբում մի կարճ քննարկում՝ ավետարանի այն սկզբունքի մասին, որը նա շուտով ուսուցանելու է: Քաջալերեք ուսուցիչին կիրառել այս

բաժնի գաղափարները (կարող են օգտակար լինել առաջարկված տեսանյութերը): Այնուհետև, ուսուցիչները կարող են խոսել, թե ինչը լավ ընթացավ, իսկ ինչը կարելի էր բարելավել:  
**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

### Հրավիրեք սովորողներին գործել

Փրկիչն ուսուցանել է, որպեսզի փոխի կյանքերը: Նա ցանկանում էր, որ Իր աշակերտներն ավելին անեին, Իր խոսքերը պարզապես լսելուց բացի, և Նա հրավիրեց նրանց հավատարմ գործել Իր ուսմունքների համաձայն: Նա զիտեր, որ եթե Իր հետևորդներն ապրեին ըստ Իր ուսուցանած վարդապետության, նրանք կգային այն իմացությանը, որ դա Աստծուց էր (տես Հովհաննես 7.17): Նրա ուսմունքները պաշտպանություն կլինեին նրանց համար անհանգստության, խառնաշփոթի և հակառակության ժամանակներում (տես Մատթեոս 7.24–27): Հիշեք, որ հավատք կառուցելը և ավելի Քրիստոսանման դառնալը տեղի չի ունենում մի կարճ դասաժամի ընթացքում: Հրավիրելով ձեր աշակերտներին գործել ըստ ճշմարիտ վարդապետության, դուք օգնում եք նրանց ընդլայնել իրենց ուսման փորձն, ընդգրկելով իրենց սներն ու առօրյա կյանքը (տես Վեճ 43.8–10):

#### ԱԶԱՏ ԿԱՍՔԸ ՀԱՐԳՈՂ ՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒՂՆԵՔ:

Մարդիկ ավելի հակված են իմաստալից փոփոխություններ անել իրենց կյանքում, երբ այդ փոփոխությունները գալիս են իրենց ազատ կամքի գործադրումից: Երբ դուք հրավերներ եք հղում գործելու, ուշադիր եղեք, որ հարգեք ձեր աշակերտների ազատ կամքը: Օրինակ, որևէ կոնկրետ բան անելու հրավեր հղելու փոխարեն, կարող եք հրավիրել սովորողներին ինքնուրույն մտածել, թե ինչպես կիրառեն իրենց սովորածը: Կարող եք ասել. «Ինչպե՞ս կարող եք ամրացնել ձեր հարաբերությունները ձեր եղբայրների ու քույրերի հետ» կամ «Գրեք ձեր ձեռք բերած հոգևոր սուստությունը և թե ինչպես դուք կարող եք գործել ըստ դրա»:

**Խորհելու հարց** Ե՞րբ է ուսուցչիս հրավերը օգնել ինձ գործի դնել իմ ազատ կամքը:

**Սուրբգրքյան օրինակ** Բարի Մամարացու մասին առակը պատմելուց հետո Փրկիչն ասաց. «Գնա, դու էլ այնպես արա» (Ղուկաս 10.37): Ի՞նչ եմ ես սովորում Փրկչի հղած այս և մյուս հրավերներից:

#### ՎԿԱՅԵՔ ԽՈՍՏԱՑՎԱԾ ՕՐՀՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Երբ Տերը պատվիրան է տալիս, Նա հաճախ օրհնություններ է խոստանում

այդ պատվիրանը պահելու համար: Երբ դուք որոշակի սկզբունքով ապրելու հրավեր եք հղում, օգնեք սովորողներին բացահայտել օրհնությունները, որոնք Աստված խոստացել է նրանց, ովքեր ապրում են այդ սկզբունքով: Դուք նաև կարող եք բերել ձեր վկայությունը այն օրհնությունների մասին, որոնք ստացել եք ապրելով ըստ այդ սկզբունքի:

**Խորհելու հարց** Ե՞րբ եմ ես ոգեշնչվել ապրելու ըստ ավետարանի սկզբունքի, լսելով վկայություն խոստացված օրհնությունների մասին:

**Սուրբգրքյան օրինակ** Փրկիչն ինչպե՞ս էր օգտագործում խոստումներն Իր աշակերտներին ոգեշնչելու համար (տես Ղուկաս 12.22–31):

#### ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԵՂԵՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ:

Երբ հետևողական եք գործելու հրավերին, դուք ցույց եք տալիս սովորողներին, որ հոգ եք տանում նրանց մասին և նրա, թե ինչպես է ավետարանը օրհնում նրանց կյանքը: Դուք նրանց նաև հնարավորություն եք տալիս կիսվելու իրենց փորձառություններով, որոնք ամրացնում են նրանց պարտավորվածությունը և թույլ տալիս, որ աջակցեն միմյանց՝ ավետարանով ապրելու գործում: Հրավերներին հետևողական լինելու եղանակներ շատ կան: Օրինակ,

դասի սկզբում դուք կարող եք ժամանակ տրամադրել սովորողներին, որպեսզի կիսվեն, թե ինչ են արել հրավերը գործի դնելու ուղղությամբ: Կամ, կարող եք հետևողական լինել՝ դասարանի անդամներին ուղարկելով տեքստային հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ:

Եթե ուսուցանումը կատարում եք մեկ այլ ուսուցչի հետ համատեղ, ապա անհրաժեշտ է, որ դուք նրա հետ համաձայնեցնեք ձեր հետևողական ջանքերը: Օրինակ, կարող եք սկսել ձեր դասը նախորդ շաբաթ որևէ ուսուցչի հղած հրավերի մասին տեղեկանալով, և կարող եք խնդրել մեկ այլ ուսուցչի անել նույնը: Կամ, գուցե ավելի հարմար լինի օժանդակ կազմակերպությունների, քվորումի կամ դասարանի նախագահությունների կանգնած հրավերներ առաջարկի և հետևողական լինի դրանց դրանց կատարմանը:

**Խորհելու հարց** Ինչո՞ւ է կարևոր հետևողական լինել գործելու հրավերներին:

**Սուրբգրքյան օրինակ** Փրկիչն ու Նրա Առաքյալները հավաքվում էին միասին, որպեսզի վերջիններս կարողանային ասել Նրան, թե ինչ են արել և ինչ ուսուցանել (տես Մարկոս 6.30): Ինչպե՞ս կարող եմ ես հետևողական լինել գործելու հրավերներին:

### ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:  
**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի

գաղափարներից մեկը կամ մի քանիսը: Կարող եք դիտել և քննարկել “Invite Us to Act” տեսանյութը (LDS.org):  
**Կիրառեք:** Հրավիրեք ուսուցիչներին մտածել իրենց առաջիկա ուսուցման հնարավորությունների մասին և գրել ըստ տարիքի հարմարեցված

հնարավոր հրավերները, որոնք նրանք կարող են առաջարկել: Քաջալերեք նրանց կիսվել միմյանց հետ իրենց գրածով և կարծիքներ փոխանակել:  
**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:

## Աջակցեք տանը ավետարանն ուսումնասիրելուն

Որպես ուսուցիչ ձեր նպատակներից մեկը պետք է լինի ձեր աշակերտներին քաջալերելը, որ իրենց սեփական փորձառություններն ունենան սուրբ գրություններն ուսումնասիրելու հարցում՝ թե անհատապես, և թե ընտանիքով: Որքան էլ որ արդյունավետ լինի ձեր դասը, այն չի կարող փոխարինել անհատական և ընտանիքով սուրբ գրությունների ընթերցանությանը՝ այն պահերին, երբ Հոգին կարող է ուսուցանել մարդկանց անհատապես: Շատ առումներով, ձեր հաջողությունը որպես ուսուցիչ կախված է նրանից, թե որքան արդյունավետորեն եք դուք օգնում և քաջալերում դասարանի անդամներին ինքնուրույն սովորել:

### ՔԱԶԱԼԵՐԵՔ ԱՎԵՏԱՐԱՆՆ ՌՈՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԱՆՀԱՏԱՊԵՍ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՎ

Քանի որ ձեր Կիրակնօրյա դասարանը չպետք է լինի հիմնական վայրը, որտեղ դասարանի անդամները սովորում են ավետարանը, այն պետք է լինի մի վայր, որտեղ նրանք կստանան քաջալերանք ու ոգեշնչում՝ ավետարանն ուսումնասիրելու ինքնուրույն և իրենց ընտանիքների հետ:

Շատ եղանակներ կան, թե ինչպես կարող եք քաջալերել տանը ավետարանն ուսումնասիրել անհատապես և ընտանիքով: Ավետարանի վարդապետության մի ուսուցիչ որոշել էր, որ իր յուրաքանչյուր դասի առաջին մի քանի թուղթերը սրբամաղրի նրան, որ անդամները կիսվեն, թե ինչ բաներով են ոգեշնչվել իրենց անհատական կամ ընտանիքով սուրբ գրությունների ընթերցումից: Սկզբում միայն մի քանիսն էին ցանկանում կիսվել: Բայց երբ ուսուցիչը շարունակեց այս կերպ, կիսվելու ցանկություն ունեցող դասարանի անդամների թիվը գնալով շատացավ: Դասարանի անդամներից մեկը նկատել է. «Մեր ուսուցիչը չի հրավիրում մեզ կարդալ, որպեսզի իր դասը լավ անցնի, այլ նա մեզ հրավիրում է կարդալ, քանի որ գիտի, որ դա կօրինի մեր կյանքը: Հետո երբ մի անգամ մենք տեսանք, որ այն, ինչ Աստված ուսուցանեց մեզ սուրբ գրություններից, կարևոր էր նրա համար, դա շատ բան փոխեց: Այժմ ես սուրբ

գրությունները հաստատ ավելի մեծ նպատակով եմ կարդում»:

Անհատական և ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրությունը խթանելու մեկ այլ եղանակ է հրավիրել դասարանի անդամներին դասարանում իրենց սովորած նյութով կիսվել իրենց ընտանիքի անդամների կամ ընկերների հետ:

**Խորհելու հարցեր** Ի՞նչ կարող եմ ես անել, որպեսզի քաջալերեմ սովորողներին ինքնուրույն ուսումնասիրել ավետարանը: Ինչպե՞ս կարող եմ ես դա անել, եթե ուսուցանում եմ փոքր երեխաներին:

**Սուրբգրքյան օրինակ** Նեփիի խոսքերից ի՞նչն է ինձ տպավորում 1 Նեփի 15.23–25 հատվածներում: Ինչպե՞ս ես կարող եմ հետևել նրա օրինակին իմ դասավանդման ժամանակ:

### ՕԳՆԵՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱԶԱԿՑԵԼ ՄԵՎԸ ՄՅՈՒՍԻՆ

Որոշ մարդիկ տանը չեն ուսումնասիրում սուրբ գրությունները, քանի որ մտածում են, թե դա շատ դժվար է: Մյուսները հստակ չեն պատկերացնում այն օրինությունները, որոնք զալիս են տանը ավետարանն ուսումնասիրելուց: Դուք կարող եք օգնել հաղթահարել այդ երկու խոչընդոտները, դասարանում ստեղծելով այնպիսի մթնոլորտ, որտեղ սովորողներն աջակցում ու քաջալերում են միմյանց և ազատ են իրենց զգում՝

փոխանակվելով օգտակար գաղափարներով ու փորձառություններով:

Ավետարանի վարդապետության մի դասարանում, որտեղ ուսումնասիրում էին Հին Կտակարանը, տարեց մի եղբայր հիասթափություն արտահայտեց Եսայիայի գիրքը հասկանալու իր փորձից: Ուսուցիչը շնորհակալություն հայտնեց նրան անկեղծ մեկնաբանության համար և հարցրեց դասարանի մյուս անդամներին, թե ինչ խորհուրդ կտային նրան: Դասարանի մի քանի անդամներ կիսվեցին սուրբ գրությունների ուսումնասիրության մարտավարությամբ և ոգեշնչող փորձառություններով Եսայիայի խոսքերն ուսումնասիրելու հետ կապված: Դասարանի անդամներից մեկը հիշում է. «Մենք բոլորս համալսմբվեցինք այս եղբոր շուրջը: Մենյակում մի զարմանալի միասնության ոգի էր: Մենք իսկապես զգում էինք, որ բոլորս միասին ենք այդ գործում»:

**Խորհելու հարց** Ի՞նչ ես կարող եմ անել, որպեսզի ոգեշնչեմ իմ դասարանին կիսվել գաղափարներով սուրբ գրությունների ուսումնասիրության հարցում իմաստալից փորձառություններ ունենալու վերաբերյալ:

**Սուրբգրքյան օրինակ** Ի՞նչ է նշանակում «բոլորը կարողանան միմյանցով շենանալ» (Վևու 88.122): Ինչպե՞ս կարող եմ քաջալերել սովորողներին, որ ցանկանան շենանալ միմյանցով դասարանային քննարկումների ժամանակ:

## ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՎԱՐՈՂԻ ՀԱՄԱՐ

**Կիսվեք և խորհուրդ արեք միասին:** Սկսեք՝ հրավիրելով ուսուցիչներին կիսվել դասավանդման վերջին շրջանի փորձառություններով և ուսուցմանն առնչվող հարցեր տվեք:

**Սովորեք միասին:** Հրավիրեք ուսուցիչներին քննարկել այս բաժնի գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

**Հրավիրեք:** Հրավիրեք ուսուցիչներին առաջիկա մի քանի դասերի ընթացքում մի քիչ ժամանակ տրամադրել, որպեսզի դասարանի անդամները կիսվեն, թե ինչ են սովորել տանը: Հաջորդ ուսուցիչների խորհրդի ժողովին խնդրեք այդ ուսուցիչներին կիսվել իրենց փորձառություններով: Հրավիրեք նրանց կիսվել այլ

խորհուրդներով, թե ինչպես աջակցել սովորողներին՝ տանը ավետարանն ուսումնասիրելու նրանց ջանքերում:

**Պատրաստվեք:** Միասին որոշեք հաջորդ հանդիպման թեման և հրավիրեք ուսուցիչներին պատրաստվել:



## Առաջադիմել որպես քրիստոսանման ուսուցիչ. Անձնական գնահատում

Պողոս Առաքյալը հորդորել է իր օրերի սրբերին. «Փորձեցեք ձեր անձերը, թե արդյոք հավատքո՞ւմն էք. քննեցեք ձեր անձերը» (2 Կորնթացիս 13.5): Որպես ուսուցիչներ մենք նույնպես պետք է գնահատենք մեր ուժեղ և թույլ կողմերը, որպեսզի շարունակ կատարելագործենք մեր ունակությունը՝ օգնելու սովորողներին հավատք կառուցել առ Հիսուս Քրիստոս և ավելի նմանվել Նրան: Չգտելով կատարելագործվել, հիշեք Տիրոջ խոստումը. «Քանի որ դու տեսար քո թուլությունը, դու ուժեղ կդարձվես» (Եթեր 12.37): Համբերատար եղեք ինքներդ ձեզ հետ և փնտրեք Փրկչի գորացնող ուժը, որպեսզի դառնաք այնպիսի ուսուցիչ, ինչպիսին Նրա իմանալով դուք կարող եք լինել:

Հետևյալ վարժությունները կօգնեն ձեզ կիրառել քրիստոսանման ուսուցանողական սկզբունքները: Կարդացեք ստորև տրված յուրաքանչյուր պնդում և մտածեք, թե որքանով է այն նկարագրում ձեզ որպես ուսուցիչ: Յուրաքանչյուր դեպքում ընտրեք ամենահարմար պատասխանը.

**1 = հազվադեպ 2 = երբեմն 3 = հաճախ 4 = գրեթե միշտ**

Այնուհետև, Հոգու առաջնորդությամբ աղոթքով ընտրեք մի քանի բաներ, որոնք դուք կցանկանայիք բարելավել: Մի քանի նպատակ դրեք և օգտագործեք այս գրքի բաժինները, որոնք ձեզ կօգնեն բարելավվել: Կանոնավերապես անդրադարձեք այս վարժությանը՝ ձեր առաջադիմությունը գնահատելու համար:

### ՍԻՐԵՔ ՆՐԱՆՑ, ՈՒՍ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՍ ԵՔ:

- Ես աղոթում եմ նրանց համար, ում ուսուցանում եմ:
- Ես արտահայտում եմ իմ սերը նրանց, ում ուսուցանում եմ:
- Ես հասկանում եմ նրանց կարիքներն ու փորձառությունները, ում ուսուցանում եմ:
- Երբ պատրաստվում եմ ուսուցանելուն, ես ավելի շատ եմ կենտրոնանում մարդկանց վրա, ում ուսուցանում եմ, քան՝ դասի ներկայացման:
- Հոգու հուշումը ստանալով ես փոխում եմ իմ ծրագրերը,

որպեսզի ուշադրություն դարձնեմ սովորողների հարցերին ու կարիքներին, իմ պատրաստածն ամբողջությամբ մատուցելու փոխարեն:

- Ես կապ եմ պաշտպանում նրանց հետ, ովքեր չեն հաճախում:

### ՈՒՍՈՒՑԱՆԵՔ ՀՈԳՈՎ

- Ես աղոթում եմ Հոգու առաջնորդության համար իմ կյանքում և որպես ուսուցիչ՝ իմ ջանքերում:
- Ես ձգտում եմ արժանի ապրել Սուրբ Հոգու ընկերակցությանը:
- Ես լսում եմ հոգևոր հուշումները, երբ պատրաստվում եմ, երբ ուսուցանում եմ և ես հավատք ունեմ իմ ծրագրերը համապատասխանաբար փոփոխելու:

- Ես բերում եմ իմ վկայությունը նրանց, ում ուսուցանում եմ:

- Ես օգնում եմ իմ աշակերտներին ճանաչել Հոգու ազդեցությունը:
- Ես սկսում եմ պատրաստվել առնվազն մեկ շաբաթ առաջ և գրի եմ առնում իմ ստացած հոգևոր տպավորությունները:

- Իմ դասարանի մթնոլորտը հրավիրում է Հոգին:

### ՈՒՍՈՒՑԱՆԵՔ ՎԱՐՂԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- Իմ ուսուցանումը կենտրոնացած է սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների խոսքերի վրա:

- Եթե հարմար է, ես օգտագործում եմ երաժշտություն, արվեստի գործեր և այլ պատշաճ նյութեր, որոնք կօգնեն նրանց, ում ես ուսուցանում եմ, հասկանալ վարդապետությունները:

- Երբ ծագում են դժվար հարցեր, ես արձագանքում եմ հավատքը կառուցող եղանակներով:

### ՋԱՆԱՍԻՐԱԲԱՐ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿՈՉ ԱՐԵՔ

- Ես օգնում եմ իմ աշակերտներին ինքնուրույն սովորելու պատասխանատվություն ստանձնել:

- Ես այնպիսի հարցեր եմ տալիս, որոնք հրավիրում են խորհել:

- Ես հրավիրում եմ սովորողներին կիսվել իրենց մտքերով ու վկայություններով և ամրապնդել միմյանց:

- Ես հետևողական հարցեր եմ տալիս, որպեսզի քաջալերեմ սովորողներին ավելի խորը մտածել ավետարանի սկզբունքների շուրջ:


- Ես օգնում եմ սովորողներին գտնել իրենց հարցերի պատասխանները, ոչ թե պատասխանում եմ բոլոր հարցերին նրանց փոխարեն:

- Ես հնարավորություն եմ տալիս բոլոր սովորողներին՝ մասնակցել քննարկումներին:

- Ես հրավիրում եմ սովորողներին գործել ըստ իրենց սովորածի, երբ առաջնորդվում են Հոգու կողմից:

- Ես հետևողական եմ գործելու հրավերներին, և խնդրում եմ սովորողներին կիսվել իրենց փորձառություններով:

- Ես քաջալերում եմ սովորողներին ուսումնասիրել սուրբ գրություններն ինքնուրույն և իրենց ընտանիքներով:



«Եվ եթե մարդիկ զան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը: Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. Եվ իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առջև. քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առջև, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

## Կողմնորոշել նոր ուսուցիչներին. Քահանայության և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների պարտականությունը

Եթե դուք քահանայության կամ օժանդակ կազմակերպությունների ղեկավար եք, դուք պատասխանատվություն ունեք անհատապես հանդիպելու նոր կանչված ուսուցիչներին հետ ձեր կազմակերպություններում, ցանկալի է՝ յուրաքանչյուր ուսուցիչ առաջին դասից առաջ (*Handbook 2: Administering the Church* [2010], 5.5.3): Այս հանդիպումները հնարավորություն են տալիս ծանոթացնելու նոր ուսուցիչներին իրենց սուրբ կոչման հետ և ոգեշնչել նրանց այն տեսլականով, թե ինչ է նշանակում ուսուցանել Փրկչի ձևով: Որպես ղեկավար դուք կարող եք օգնել նոր ուսուցիչներին ծառայել, անելով հետևյալ բաները.

### **ՔՆՆԱՐԿԵՔ, ԹԵ ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ՓՐԿՉԻ ԶԵՎՈՎ:**

Որպեսզի օգնեք նոր ուսուցիչներին հասկանալ, թե ինչպես էր ուսուցանում Փրկիչը և ինչ նշանակություն ունի դա ուսուցիչների համար, հակիրճ քննարկեք հետևյալ սկզբունքները նոր ուսուցիչի հետ.

■ *Միդեք նրանց, ում ուսուցանում եք:* Օգնեք նոր ուսուցիչին կենտրոնանալ իր աշակերտների կարիքների վրա: Հրավիրեք նոր ուսուցիչին փնտրել նրանց ուժեղ կողմերը և հատուկ կարիքները: Եթե անհրաժեշտ է, տրամադրեք դասարանի անդամների ցուցակը: Հիշեցրեք նոր ուսուցիչին, որ նա պատասխանատու է օգնելու այն սովորողներին, ովքեր կանոնավորապես չեն հաճախում: Քաջալերեք ուսուցիչին աղոթքով փնտրել ուղիներ, թե ինչպես օգնել այդ մարդկանց:

■ *Ուսուցանեք Հոգով:* Քննարկեք հոգևոր առումով ուսուցանելուն պատրաստվելու կարևորությունը: Քանի որ Մուրբ Հոգու հուշումները զալիս են տող առ տող, քաջալերեք նոր ուսուցիչին ուսուցանելուն պատրաստվել առնվազն մեկ շաբաթ առաջ և շաբաթվա ընթացքում փնտրել ոգեշնչում:

■ *Ուսուցանեք վարդապետությունը:* Ձեր վկայությունը բերեք, որ Աստծո խոսքը գործություն ունի փոխելու սրտերը: Հրավիրեք նոր ուսուցիչին ուսումնասիրել սուրբ գրությունները

և ապրող մարգարեների խոսքերը հանձնարարված ուսուցման թեմայով՝ մինչև անցնելը ցանկացած այլ օժանդակ ուսումնական նյութերին: Քաջալերեք ուսուցիչին գրի առնել հոգևոր տպավորությունները, որոնք նա ստանում է ուսումնասիրության ընթացքում, և կենտրոնանալ սկզբունքների ու միջոցների վրա, որոնք կառուցում են հավատք և քաջալերում Քրիստոսանման ապրելակերպ:

■ *Ձանապիղաբար ստիպելու կոչ արեք:* Օգնեք նոր ուսուցիչին հասկանալ, որ ուսուցանելը շատ ավելին է, քան պարզապես դասը ներկայացնելը. այն ենթադրում է քաջալերել մարդկանց պատասխանատվություն վերցնել ավետարանի իրենց ուսումնասիրության համար և շենացնել միմյանց, որպես ավետարանը սովորողներ (տես Վևու 88.122):

### **ՔՆՆԱՐԿԵՔ ԶԵՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ:**

Քրիստոսանման ուսուցանության հիմնական սկզբունքները քննարկելուց բացի դուք պետք է մի որոշ ժամանակ տրամադրեք, պատմելով նոր ուսուցիչին ձեր կազմակերպության մասին, ինչն օգտակար կլինի: Կա՞ն ինչ-որ կարիքներ, որոնք դուք քննարկել եք որպես նախագահություն և կցանկանայիք, որ ձեր ուսուցիչները տեղյակ լինեին դրանց մասին: Օրինակ, եթե երեցների քվորումի նախագահությունը ոգեշնչում

է ստացել ուշադրություն դարձնել քվորումի միասնությանը, ապա ինչպե՞ս կարող են քվորումի հրահանգիչներն աջակցել այդ նպատակին: Եթե եպիսկոպոսը խնդրել է ծխի խորհրդին բարելավել ակնածանքը ծխում, ինչպե՞ս կարող են այդ հարցում օգնել Երեխաների Միության ուսուցիչները:

Անհրաժեշտության դեպքում ասեք նոր ուսուցիչին, թե որ դասասենյակում պետք է ուսուցանել, որ դասից սկսել, և սվեք ցանկացած տեղեկություն, որ ուսուցիչին հարկավոր է՝ դասարանի և դասարանի անդամների մասին:

### **ԱՌԱՋԱՐԿԵՔ ՄՇՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ:**

Բացատրեք, որ դուք կօգնեք նոր ուսուցիչին նրա կոչման մեջ, ցանկացած հարցում և աջակցություն կցուցաբերեք դասարանում, եթե անհրաժեշտ լինի: Կարող եք նույնիսկ առաջարկել, որ ժամանակ առ ժամանակ կգաք նոր ուսուցիչի մոտ դասավանդելու և կկիսվեք ձեր կարծիքով: Ուսուցիչին սվեք այս գրքից մեկ օրինակ և բացատրեք, թե երբ են անցկացվում ուսուցիչների խորհրդի ամսական ժողովները: Բացատրեք այս ժողովների նպատակը և նոր ուսուցիչից մասնակցության ակնկալիքը:

Հորդորեք նոր ուսուցիչին այցելել LDS.org կայքի Իմ Կոչումը բաժինը և Gospel Library հավելվածը՝ որպես ուսուցիչ առաջադիմելու մասին իմանալու համար:



«Նույնիսկ Եկեղեցու Նորեկ անդամը կարող է զգալ, որ ծառայության կանչը պետք է առաջին հերթին սրտանց լինի: Մեր սրտերն ամբողջությամբ Արարչին տալով և Նրա պատվիրանները պահելով է, որ մենք սկսում ենք ճանաչել Նրան: . . . Այն, ինչ ավելի շատ է պետք, որ [Նրանք, ովքեր կանչված են ծառայելու] իմանան, քան իրենց պարտականությունների համար ուսուցանվելը, դա հոգևոր աջքերով տեսնելն է, թե ինչ է նշանակում կանչված լինել ծառայելու»

Հիտա Քրիստոսի վերականգնված Եկեղեցում» (Հենրի Բ. Այրինգ, "Rise to Your Call," *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2002, 75):



ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՁԻՆ ԾՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ  
ԵԿԵՂԵՑԻ

